ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

Հեռակա ուսուցում 1519 թողարկում

Կառավարման ամբիոն

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶ

«Հանրային կառավարում» մասնագիտությամբ հանրային կառավարման մագիստրոսի որակավորման աստիճան հայցելու համար

Մագիստրանտ՝	Ստամբուլյան Հռիփսիմե Ասատուրի
Գիտական ղեկավար՝	Միքայելյան Միքայել Վարազդատի տնտ. գիտ. դոկտոր-պրոֆեսոր
Ամբիոնի վարիչ՝	Խաչատրյան Վիլեն Վիկտորի տնտ. գիտ. թեկ., դոցենտ

ԵՐԵՎԱՆ 2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳԼՈՒԽ 1. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ, ԵՎ ԴՐԱ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ.....7

1.1. Զբոսաշրջության էությունն ու տեսակները.....7

1.2. Զբոսաշրջության սոցիալ-տնտեսական, մշակութային, բնապահպանական և քաղաքական նշանակությունը.....20

1.3. Համաշխարհային զբոսաշրջության պետական կարգավորումն ու միջազգային զբոսաշրջային շուկայի զարգացումն ու կանխատեսումները.....31

ԳԼՈՒԽ 2. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՀՀ-ՈՒՄ.....46

2.1. Զբոսաշրջության արդի վիճակը ՀՀ-ում.....46

2.2. Զբոսաշրջության պետական քաղաքականության հիմնական սկզբունքները, գերակա ուղղություններն ու նպատակները ՀՀ-ում.....56

2.3. Զբոսաշրջության ոլորտում պետական կարգավորման հիմքերն ու հիմնահարցերը ՀՀ-ում.....63

ԳԼՈՒԽ 3. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ.....74

3.1. Զբոսաշրջության ենթակառուցվածքների զարգացման հնարավորություններն ու խոչընդոտները ՀՀ-ում.....74

3.2. Զբոսաշրջության ոլորտի զարգացման համար առկա ռեսուրսներն ու ոլորտի կարգավորման բարելավման ուղիները ՀՀ-ում.....79

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....89

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....93

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Վերջին տասնամյակները նշանավորվել են միջազգային տնտեսության մեջ զբոսաշրջության կշռի կտրուկ աճով, ինչին զոգահեռ բազմաթիվ զարգացած երկրներում զբոսաշրջությունը դարձել է ծառայություններ արտահանելու և դրամական հոսքեր ներգրավելու արդյունավետ գործիք:

Ուշադրության է արժանի նաև այն, որ զբոսաշրջությունից ստացվող համաշխարհային եկամուտները վերջին տասնամյակում աճել են միջինը 6.6% ցուցանիշով: Ինչ վերաբերում է միջազգային զբոսաշրջային այցելությունների թվին, ապա այն հատել է 1 մլրդ[1], իսկ ըստ ՄԱԿ ԶՀԿ փորձագետների կանխատեսումների, 2023թ. այն կկազմի 1.5մլրդ, 2030թ. 1.8մլրդ[2]:

Զբոսաշրջությունը համարվում է աշխատատար ճյուղ և ուղղակիորեն կամ անուղղակիորեն նպաստում է նաև գործազրկության նվազեցմանն ու աղքատության հաղթահարմանը: Այս ամենով պայմանավորված, զբոսաշրջությունը զարգացող երկրների համար ևս ձեռք է բերել ընդգծված սոցիալ-տնտեսական նշանակություն:

Տնտեսության մեջ հանքարդյունաբերության և գյուղատնտեսության չափազանց մեծ տեսակարար կշիռները տնտեսական աճը դարձրել են կամ խիստ խոցելի արտաքին շուկաների տատանումների նկատմամբ, կամ էլ փոխկապակցված եղանակի բարեհաճությանը: Աշխատատեղերի բացակայությունն իր հերթին ծնում է սոցիալական լարվածություն և նպաստում երկրում աղքատության աճին: Նշված խնդիրների լուծումը դարձել է օրակարգային կառավարության համար՝ ի դեմս տնտեսության դիվերսիֆիկացիայի և արտահանման այլ ճյուղերի խթանման: Դժվար է հերքել, որ զբոսաշրջությունը Հայաստանում ունի բավարար ներուժ՝ նպաստելու տնտեսության աճին և ծառայելու որպես այլ ճյուղերի այլընտրանք: Հաշվի առնելով Հայաստանի բարենպաստ բնակլիմայական պայմանները, հարուստ բնաշխարհը,

[1] ՄԱԿԶՀԿ պաշտոնական կայք http://unvto.org/en/content/why-tourizm:
[2] Tourizm Towards 2030/Global Over iew Published by the World Tourizm Organazation, Madrid, Spain, 2011.p. 10-15.

լեռները, գետերը, բուժիչ աղբյուրները, բուսական աշխարհը, ինչպես նաև հարուստ պատմամշակութային ժառանգությունը՝ կարելի է ասել, որ մեր հանրապետությունը ոլորտի զարգացման բնագավառում ունի հսկայական ռեսուրսներ:

Ուշագրավ է այն, որ զբոսաշրջության զարգացման գործընթացում վճռորոշ դերակատարում ունի ոլորտի՝ պետական կարգավորման քաղաքականությունը, ինչի մասին վկայում են բազմաթիվ աշխատություններ և ուսումնասիրություններ: Զարմանալի չէ, որ 2003թ. <<Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին>> ՀՀ օրենքով ոլորտը հռչակվել է որպես տնտեսության գերակա ճյուղ[3]: Այնուամենայնիվ, դեռևս կան խնդիրներ և բացեր, որոնց շտկման պարագայում կարելի է ակնկալել ոլորտի զարգացման առավել բարձր դինամիկա: Խոսքը, մասնավորապես, ներգնա (ներքին) զբոսաշրջության պետական կարգավորման վերլուծության մասին է մրցունակության միջազգային չափանիշների և հեղինակավոր զեկույցների գնահատման համատեքստում, ինչը հնարավորություն է ընձեռում քննել առկա մոտեցումների ու միջոցառումների արդյունավետությունը՝ որպես ուղենիշ ամրագրելով միջազգային փորձագիտական շրջանակների երաշխավորումները:

Զբոսաշրջությունը՝ որպես գործունեության յուրահատուկ, դինամիկ ոլորտ, մանրակրկիտ ուսումնասիրման և վերլուծության կարիք ունի: Չնայած առկա տեսակետներին և տրված լուծումներին, և հաշվի առնելով զբոսաշրջության զարգացման պոտենցիալ հնարավորությունները, նախադրյալներն ու ռեսուրսների առկայությունը, տնտեսության մեջ ունեցած մեծ դերն ու նշանակությունը, հանրապետությունում զբոսաշրջության տեսական ու գործնական ոչ բոլոր հիմնախնդիրներն են լուծում ստացել, և դրանք շարունակում են հրատապ մնալ:

Հաշվի առնելով ներգնա զբոսաշրջության էական ներուժը հայաստանյան տնտեսական դաշտի բարեփոխումներում, ինչպես նաև պետական հատվածի վճռորոշ դերն այդ գործընթացում, այսօր կա ոլորտի պետական համապարփակ կարգավորման քաղաքականության գիտական գնահատման, վերլուծության ու դրա կատարելագործման առաջարկների կարիք՝ միջազգայնորեն ընդունված դրույթների և

[3] <<Զբոսաշրջոհության և զբոսաշրջային գորշոհնեության մասին>> Հաբաստանի Հանրապետության օրենքը, ընդունված17 դեկտեմբերի 2003թ. 2-րդ գլուխ, 4-րդ հոդված 1-ին կետ:

փորձի պրիզմայով, ինչն էլ բացատրում է սույն թեմայի ընտրությունն ու ընտրված թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակը Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջության զարգացման և պետական կարգավորման արդի հիմնահարցերի բացահայտումն է և զարգացման հեռանկարների մատնանշումը: Վերը նշված նպատակի իրականացման համար աշխատանքում քննության են առնվել հետևյալ խնդիրները.

- դիտարկել <<զբոսաշրջություն>> հասկացության տարբեր մեկնաբանություններ, տալ դրա տեսակների ու ձևերի դասակարգում,
- ուսումնասիրել զբոսաշրջության դերն ու նշանակությունը սոցիալական, տնտեսական, մշակութային, բնապահպանական և քաղաքական ոլորտներում,
- ուսումնասիրել զբոսաշրջության զարգացման միջազգային փորձը,
- կատարել ՀՀ զբոսաշրջության ոլորտի արդի վիճակի վերլուծություն և վեր հանել դրա զարգացման հիմնահարցերը,
- ուսումնասիրել զբոսաշրջության պետական կարգավորման հիմնահարցերը ՀՀ-ում ,
- բացահայտել զբոսաշրջության ենթակառուցվածքների զարգացման հնարավորությունները,
- բացահայտել առկա զբոսաշրջային ռեսուրսներն ու առանձնահատկությունները, ինչպես նաև զբոսաշրջության կարգավորման բարելավման ուղիները ՀՀ-ում,
- սահմանել պետական կարգավորման դերն ու գործառույթները նշված ոլորտի մրցունակության խթանման գործընթացում, ներկայացնել դրա կարևորությունն ու անհրաժեշտությունը,
- հետազոտել ՀՀ զբոսաշրջության շուկան, գնահատել դրա զարգացման միտումներն ու ներկա ցուցանիշները:

Ուսումնասիրության առարկան: Ուսումնասիրության առարկան ՀՀ-ում զբոսաշրջության ոլորտի զարգացման և պետական կարգավորման առկա հիմնահարցերն են:

Ուսումնասիրության օբյեկտը: Ուսումնասիրության օբյեկտը զբոսաշրջության

ոլորտն է և դրանում ընդգրկված առանձին օղակները:

Աշխատանքի կառուցվածքն ու ծավալը: Աշխատանքը բաղկացած է տիտղոսաթերթից, բովանդակությունից, ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Աշխատանքի ծավալը կազմում է 91 էջ՝ առանց հավելվածի:

ԳԼՈՒԽ 1. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ, ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ

1.1 Զբոսաշրջության էությունն ու տեսակները

Զբոսաշրջությունը համաշխարհային տնտեսության զարգացման արդի փուլում հանդիսանում է երկրների տնտեսական համակարգերի արագընթաց զարգացող ճյուղերից մեկը: Աշխարհի բազմաթիվ երկրների համար այն հանդիսանում է արտարժույթի ներհոսքի առաջնային աղբյուր, որը նաև խթանում է այդ երկրներին բնորոշ որոշ արտադրությունների, ինչպես նաև տնտեսության այլ ճյուղերի զարգացումը (այդ թվում շինարարություն, առևտուր, գյուղատնտեսություն, կապ, թեթև արդյունաբերություն և այլն): Այն համարվում է աշխատատար ճյուղ և նպաստում է գործազրկության նվազեցմանն ու աղքատության հաղթահարմանը: Սրանով պայմանավորված՝ զբոսաշրջությունը զարգացող երկրների համար ևս ձեռք է բերել ընդգծված սոցիալ-տնտեսական նշանակություն:

Զբոսաշրջության ներդաշնակ զարգացումը պայմանավորված է մի շարք գործոններով, ներառյալ՝ ժողովրդագրական, բնակլիմայական, աշխարհագրական, սոցիալ-հոգեբանական, տնտեսական, պատմական, կրոնական, իրավաքաղաքական և այլն: Իսկ զբոսաշրջության ոլորտն իր յուրահատկությամբ միակն է, որն ուղղակի և անուղղակի ազդեցություն ունի տնտեսության գրեթե բոլոր ճյուղերի զարգացման վրա:

Զբոսաշրջությունը տնտեսական համալիր է, որի զարգացումն առավելապես բացատրվում է համաշխարհային տնտեսական գործընթացներով ու հարաբերություններով, արագ զարգացող երկրների տնտեսական աճի կարևորագույն խթանիչ է, որն ապահովում է օտարերկրյա կապիտալի հոսք, նոր աշխատատեղերի ստեղծում: Լինելով խոր սոցիալ-քաղաքական երևույթ՝ զբոսաշրջությունը նշանակալիորեն ազդում է տարածաշրջանի աշխարհաքաղաքական և տնտեսական կացության վրա: Զարգացած երկրների տնտեսական, սոցիալական և քաղաքական կայունության միջազգային փորձը ցույց է տալիս, որ միմիայն զբոսաշրջության շնորհիվ է, որ պետությունների աշխարհագրական դիրքը, բնակլիմայական ռեսուրսները և

տեսարժան վայրերը դառնում են համընդհանուր հասարակական բարօրություն:

Զբոսաշրջության գլոբալ բարոյագիտական օրենսգիրքը, որն ընդունվեց ՀՀԿ Գլխավոր ասամբլեայում, հետևյալ խորհուրդ-հանձնարարականն է հղում այն պետական-հասարակական կառույցներին, որոնք իրականացնում են զբոսաշրջությունը զարգացնելու քաղաքականություն. «Զբոսաշրջային քաղաքականությունն անհրաժեշտ է իրականացնել այնպես, որ այն նպաստի այցելության շրջանների բնակչության պահանջմունքների բավարարմանը և կենսամակարդակի բարձրացմանը»[4]: Զբոսաշրջության տեղի և դերի առումով գոյություն ունեցող բազմաթիվ առավելություններից նշենք այն հանգամանքը, որ ներկայում զարգացած շատ երկրներ (օրինակ՝ Շվեյցարիան, Ավստրիան, Ֆրանսիան և այլն) իրենց բարեկեցության զգալի մասը կառուցել ու ապահովել են հենց զբոսաշրջությունից ստացված եկամուտների հաշվին: Այս համեմատական առավելությունը չկորցնելու նպատակով այդ երկրները բավական մեծ տեղ են հատկացնում զբոսաշրջության զարգացմանը ինչպես կապիտալ ներդրումների, այնպես էլ զբոսաշրջության ենթակառուցվածքների, դրանց գիտական ուսումնասիրման, վերլուծությունների և այլ առումներով:

Տուրիզմ բառը գործածական է շատ լեզուներում, այդ թվում՝ նաև հայերենում՝ զբոսաշրջություն տերմինին զուգահեռ: Այն առաջացել է մեծ մրցաշրջան – (Grand tour) արտահայտությունից և սկզբնական շրջանում նշանակում էր ուղևորություն՝ ծանոթության նպատակով, որը շատ տարածված էր 17-18 դարերում երիտասարդ պալատականների շրջանում: 19-րդ դարում նման ուղևորություններն առավել տարածվեցին բնակչության այլ խավերի շրջանում: Ուղևորության նպատակն այլ երկրների մշակութային արժեքները ճանաչելն էր:

Զբոսաշրջությունը՝ որպես ճանապարհորդության մասնավոր դեպք, ունի հստակ սահմնափակումներ, բնութագրող կողմեր և բազմաթիվ սահմանումներ: Ի տարբերություն ճանապարհորդության՝ զբոսաշրջությունը այնպիսի կատեգորիա է, որն իր վրա կրում է տնտեսության ազդեցությունը և ունի երկակի բնույթ, քանի որ զբոսաշրջությունը և ճանապարհորրդության տեսակ է, և այդ

[4] WTO Basic Documents, Madrid, 1994, www.world-tourism.org

ճանապարհորդությունների իրականացմանն ու կազմակերպմանն ուղղված գործունեություն:

Ճանապարհորդությունը և զբոսաշրջությունը փոխկապակցված հասկացություններ են, որոնք բնութագրում են մարդու կենսագործունեության որոշակի տեսակ: Երկու դեպքում էլ այն ակտիվ հանգիստ է, զվարճանք, շրջակա աշխարհի ճանաչում, առևտուր, բուժում և այլն: Ճանապարհորդությունը մարդկանց տեղափոխումն է ժամանակի և տարածության մեջ, իսկ ճանապարհորդություն իրականացնողին՝ անկախ նպատակից, ուղղությունից, փոխադրամիջոցից և ժամանակահատվածից, անվանում են ճանպարհորդ: Ճանապարհորդել կարող են անհատները, խմբերը, ինչպես նաև որոշ ժողովուրդներ, որոնց համար ճանապարհորդելը դարերից եկած կենսակերպ է:

Չնայած զբոսաշրջության տարատեսակ ձևակերպումներին՝ շատ հեղինակներ համակարծիք են, որ զբոսաշրջություն հասկացությունը կարելի է բնութագրել որպես.

- մարդկանց ժամանակավոր տեղաշարժը և մնալը զբոսաշրջային հետաքրքրություն առաջացնող վայրում, որը գտնվում է նրանց մշտական բնակավայրերի սահմաններից դուրս,
- մշտական բնակության վայրի սահմաններից դուրս գտնվելու ժամանակ զբոսաշրջային պահանջմունքները և դրդապատճառները, զբոսաշրջիկների վարքի առանձնահատկությունները,
- բարդ սոցիալ-տնտեսական համակարգ, որի հիմքում ընկած է ենթակառուցվածքների մի համալիր, որն անվանում են զբոսաշրջային ինդուստրիա,
- շուկայական տնտեսության սեգմենտ, որտեղ փոխազդում են տարբեր ձեռնարկություններ՝ նպատակ ունենալով առաջարկել ապրանքներ և ծառայութուններ, որոնք կբավարարեն զբոսաշրջային հետաքրքրությունը,
- քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց ազատ ժամանակ ճանաչողական, հանգստի, առողջարարական, մարզական, ազգականների այցելության, կրոնական, մասնագիտական, գործնական, ուսումնական և այլ նպատակներով բնակության մշտական վայրից կամ երկրից մեկնում է այլ վայր կամ երկիր՝ նվազագույնը 24 ժամ և առավելագույնը 12 ամիս անընդմեջ գտնվելու

ժամկետով՝ առանց վարձատրվող աշխատանքային հարաբերության:

Ըստ զբոսաշրջիկների մշտական բնակության և աշխատանքի վայրի՝ զբոսաշրջությունը լինում է ներքին և միջազգային: Ներքին զբոսաշրջությունը որևէ երկրում մշտական բնակվող մարդկանց՝ ճանաչողական, հանգստի, առողջարարական, մարզական, ազգականներին այցելության, կրոնական, մասնագիտական, գործնական, ուսումնական և այլ նպատակներով կատարվող ճանապարհորդություններն են այդ երկրի սահմաններում: Միջազգային զբոսաշրջությունը ստորաբաժանվում է ներգնա և արտագնա մասերի: Ներգնա զբոսաշրջությունը մարդկանց՝ ճանաչողական, հանգստի, առողջարարական, մարզական, ազգականներին այցելության, կրոնական, մասնագիտական, գործնական, ուսումնական և այլ նպատակներով կատարվող ճանապարհորդություններն են երկրի տարածքում, որի մշտական բնակիչը նրանք չեն համարվում: Արտագնա զբոսաշրջությունը մարդկանց՝ ճանաչողական, հանգստի, առողջարարական, մարզական, ազգականներին այցելության, կրոնական, մասնագիտական, գործնական, ուսումնական և այլ նպատակներով կատարվող ճանապարհորդություններն են իրենց մշտական բնակության վայր համարվող երկրի սահմաններից դուրս:

Ներքին և արտագնա զբոսաշրջությունը միասնականորեն հանդես է գալիս որպես ազգային զբոսաշրջություն: Իսկ ներքին և ներգնա զբոսաշրջությունը ամբողջապես հանդես է գալիս որպես զբոսաշրջություն երկրի ներսում:

Կազմակերպական տեսակետից ելնելով՝ զբոսաշրջությունը լինում է պլանավորված և չպլանավորված: Պլանավորված փաթեթային զբոսաշրջությունը ստանդարտացված, նախապես մշակված զբոսաշրջային ծառայությունների համալիր է: Այն կարող է ներառել տրանսպորտային, հյուրանոցային ծառայությունների կազմակերպում, ինչպես նաև տուրերի և զբոսաշրջային այլ միջոցառումների կազմակերպում: Չպլանավորված զբոսաշրջության ժամանակ զբոսաշրջիկն ինքն է պլանավորում և կազմակերպում իր սեփական ճանապարհորդությունը կամ հանգիստը:

Զբոսաշրջիկների տարիքից ելնելով՝ առանձնանում են.

- երեխաների զբոսաշրջություն, որոնք ճանապարհորդում են ծնողների հետ,
- երիտասարդների զբոսաշրջություն (15-24 տարեկան)
- տնտեսապես ակտիվ մարդկանց զբոսաշրջություն (25-44 տարեկան)
- միջին տարիքի տնտեսապես ակտիվ մարդկանց զբոսաշրջություն (45-64 տարեկան)
- թոշակառուների զբոսաշրջություն (65 և ավելի):

Կախված տեղաշարժվելու միջոցից՝ զբոսաշրջությունը լինում է ավիացիոն, ավտոբուսային, ավտոմոբիլային, երթուղային, ջրային, հեծանվային և հետիոտնային:

Տարվա եղանակից և զբոսաշրջային ակտիվությունից ելնելով՝ զբոսաշրջությունը լինում է բարձր, միջին և ցածր սեզոնային զբոսաշրջություն:

Ըստ զբոսաշրջություն իրականացնող մարդկանց քանակի՝ լինում են անհատական, զույգերով, ընտանիքով, փոքր և մեծ խմբերով զբոսաշրջություններ:

Ըստ տևողության զբոսաշրջությունը կարելի է ընդհանուր առմամբ բաժանել երկու մեծ խմբի՝ կարճաժամկետ, որը կարող է լինել կարճատև (1-7օր), միջին տևողության (8-14օր), երկարատև (15-30օր) և երկարաժամկետ՝ 1-12 ամիս:

Մարդու գործունեության ակտիվությունից ելնելով՝ զբոսաշրջությունը լինում է ակտիվ և պասիվ: Ակտիվ զբոսաշրջությունը ենթադրում է հանգստի և զվարճանքների մեծ ֆիզիկական բեռնվածություն պահանջող տեսակներ: Դրանցից են սպորտային, էքստրեմալ, արկածային զբոսաշրջությունները, սաֆարիները, բնական և տեխնոգեն աղետների վայրերի դիտումները: Պասիվ զբոսաշրջությունը կողմնորոշված է մեծամասամբ ֆիզիկական առումով առավել հանգիստ և նվազ ծանրաբեռնված ուղղևորություններին: Սա նախատեսված է այն մարդկանց համար, ովքեր նախընտրում են համաչափ հանգիստ՝ ծովային, լեռնային, առողջարարական: Հիմնականում դրանք ընտանիքների, թոշակառուների և մեծահասակ զբոսաշրջիկների համար նախատեսված կազդուրիչ և առողջարարական տուրեր են:

Ֆինանսավորման աղբյուրից կախված՝ զբոսաշրջությունը լինում է կոմերցիոն և սոցիալական: Կոմերցիոն զբոսաշրջությունը կողմնորոշված է զբոսաշրջային ձեռնարկությունների կողմից եկամտի ստացման, որը հանդիսանում է ծառայությունների մատուցման զարգացման հիմնական աղբյուր:

Ներկայումս հասարակության մեջ <<զբոսաշրջություն>> հասկացության

որոշակիությունն այնպիսին է, որ այն դառնում է հասարակության ազատ ժամանակի առևտրայնացման միջոց, և որքան ավելի զարգացած է երկիրը, որքան նշանակալի է ազատ ժամանակի բաժինը, այնքան ավելի ակնառու է դառնում հասարակության կողմից իր ազատ ժամանակի օգտագործման առևտրայնացման միտումը: Իսկ զբոսաշրջությունը, իր ժամանակակից ձևերով, դառնում է մարդու ազատ ժամանակի սպառման առավել արդյունավետ միջոց: Մոտ ապագայում զբոսաշրջությունը կարող է դառնալ մարդու կյանքի սովորական պահանջմունքներից մեկը:

Ժամանակակից գիտական գրականության մեջ զբոսաշրջության սահմանումները, ըստ տարբեր հատկանիշների, կարելի է դասակարգել մի քանի խմբի.

- Զբոսաշրջությունը՝ որպես մարդկանց տեղափոխման հատուկ ձև՝ այցելելու որոշակի օբեկտ, բավարարելու հետաքրքրության հատուկ պահանջ, ինչին հաջորդում է վերադարձը սկզբնական բնակավայր,
- Զբոսաշրջությունը՝ որպես անձի զարգացման հատուկ ձև (կրթական, դաստիարակչական, առողջական, սպորտային և այլն),
- Զբոսաշրջությունը՝ որպես հանգստի կազմակերպման տարածված ձև,
- Զբոսաշրջությունը՝ որպես տնտեսության ճյուղ, որը սպասարկում է մշտական բնակավայրից դուրս գտնվող մարդկանց,
- Զբոսաշրջությունը՝ որպես շուկայական սեգմենտ, որը ներառում է տնտեսության տարբեր ճյուղեր (տրանսպորտ, հանրային սնունդ, հյուրանոցային ծառայություններ, առևտուր և այլն):

Զբոսաշրջություն հասկացության տարբեր սահմանումներ կան, որոնք հիմնվում են զբոսաշրջության տարբեր հատկանիշների վրա:

Գիտնականների և մասնագետների շրջանակում լայն տարածում է գտել զբոսաշրջության հետևյալ սահմանումը. <<Զբոսաշրջությունը հարաբերությունների և երևույթների ամբողջություն է, որը ծագում է մարդկանց մշտական բնակության և աշխատանքի վայրից տարբերվող վայրերում տեղաշարժվելու և մնալու ժամանակ>>[5]:

Եթե դիտարկենք Խունցիկեր-Կրանֆի տեսությունը, ապա կարող ենք ասել, որ

[5] Александрова А. Ю., Международный туризм: учебное пособие для вузов. М.2001, с. 21

զբոսաշրջությունն իրենից ներկայացնում է հարաբերությունների և երևույթների ամբողջություն, որը հանդիսանում է ոչ միայն սեփական բնակության վայրից դուրս մարդկանց տեղաշարժման և ժամանման արդյունք, այլև ժամանման վայրը չի դառնում մշտական բնակության վայր և կապված չէ եկամտի ստացման հետ:

1989թ. ընդունված Հաագայի հռչակագրում նշված է, որ զբոսաշրջությունը դարձել է մի երևույթ, որը ներկայումս միլիոնավոր մարդկանց կյանքի մի մասն է և.

- ներառում է մարդկանց բոլոր ազատ տեղաշարժերը իրենց բնակության և աշխատանքի վայրից դուրս, ինչպես նաև ծառայությունների ոլորտը, որը ստեղծված է այդ տեղաշարժերի արդյունքում առաջացած պահանջմունքների բավարարման համար,
- իրենից ներկայացնում է մարդկանց և արդի հասարակությունների կյանքում կարևոր նշանակություն ունեցող գործունեության տեսակ, որը դարձել է առանձին անձանց ազատ ժամանակի օգտագործման կարևոր ձև և միջանձնային կապերի, քաղաքական, տնտեսական և մշակութային հարաբերությունների հիմնական միջոց՝ միջազգայնացման արդյունքում անհրաժեշտ դառնալով ազգերի կյանքի բոլոր հատվածներում,
- պետք է լինի բոլորի մտահոգությունը. այն միաժամանակ հանդիսանում է արդի հասարակական կյանքի որակի և արդյունք, և վճռական գործոն: Դրա համար էլ պետությունները պետք է առավել ակտիվ ուշադրություն դարձնեն զբոսաշրջությանը՝ նպատակ ունենալով ապահովել համաչափ զարգացում հասարակության այլ հիմնական պահանջներին և գործունեության տեսակներին համապատասխան[6]:

Ըստ ԱՄՆ Կոնգրեսի կողմից ընդունված սահմանման՝ զբոսաշրջությունը մշտական բնակության վայրի սահմաններից դուրս, ամենօրյա գործունեության հետ չկապված ցանկացած նպատակով ուղևորությունների համար տրանսպորտային ծառայությունների, ապրանքների, տեղակայման և այլ անհրաժեշտ միջոցների ամբողջական կամ մասնակի մատուցում իրականացնող կազմակերպությունների և գործունեության տեսակների փոխկապակցված միավորումն է[7]:

---

[6] Հաագյան դեկլարացիա, 1989թ, http://www.kadis.ru/texts/index.phtml?id=26705
[7] Trade in Tourism Service/GATT Secretariat NTN. GNS, 1989

Համաձայն ՄԱԿ-ի Վիճակագրական հանձնաժողովի կողմից 1992թ. առաջարկված սահմանման՝ զբոսաշրջությունը հաճույքի ստացման և հանգստի նպատակով, ինչպես նաև առողջական, հյուրընկալության, ճանաչողական կամ մասնագիտա-գործնական կարիքների բավարարման նպատակով 12 ամսից ոչ ավելի ժամանակահատվածով ճանապարհորդողի մշտական բնակության վայրի սահմաններից դուրս ճանապարհորդելը և մնալն է՝ առանց այնտեղ վճարովի գործունեություն ծավալելու[8]: ՄԱԿ-ի կողմից ընդունված մեկ այլ մեկնաբանմամբ՝ զբոսաշրջությունը ներկայացվում է որպես մշտական բնակավայրի սահմաններից դուրս տեղաշարժերի հետ կապված մարդու առողջության ամրապնդման, ֆիզիկական զարգացման վրա ազդող ակտիվ հանգիստ[9]:

Համաշխարհային զբոսաշրջության Մանիլյան դեկլարացիայում զբոսաշրջությունը բնորոշվում է որպես գործունեություն, որը կարևոր նշանակություն ունի ազգերի կյանքում՝ շնորհիվ նրա անմիջական ազդեցության պետությունների սոցիալական, մշակութային, կրթական և տնտեսական կյանքի և միջազգային հարաբերությունների վրա[10]:

Ըստ <<Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին>> ՀՀ օրենքի՝ <<Զբոսաշրջությունը ճանաչողական, հանգստի, առողջարարական, մարզական, կրոնական, ազգականների այցելության, մասնագիտական, գործնական և այլ նպատակներով բնակության մշտական վայրից (երկրից) այլ վայր (երկիր) առվելագույնը մինչև մեկ տարի անդընդմեջ ժամկետով ճանապարհորդություն իրականացնող քաղաքացիների գործունեությունն է>>[11]:

Զբոսաշրջության զարգացման ընթացքում զբոսաշրջությանը տարբեր սահմանումներ են տրվել, այնուամենայնիվ դրանց հիմքում դրվել են հետևյալ երեք չափորոշիչները՝

1. Տեղափոխում մեկ այլ վայր, որը գտնվում է իր բնակության վայրի

---

[8] Российский туристский бюллетень. Туризм: информация, статистика, анализ. 1995, с. 15-22

[9] Барчукова Н.С., Международное сотрудничество государств в области туризма. М.: Международные отношения, 1986, с. 95

[10] Մանիլյան դեկլարացիա, 1989թ

[11] §Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին¦ ՀՀ օրենք, էջ 2

սահմաններից դուրս: Սակայն զբոսաշրջիկ չեն կարող համարվել այն անձինք, ովքեր ամեն օր ուղևորվում են իրենց բնակավայրի սահմաններից դուրս գտնվող աշխատանքի կամ ուսման վայր:

2. Իր բնակության վայրի սահմաններից դուրս մեկ այլ վայրում գտնվելը մինչև 1 տարի ժամկետով: Այս դեպքում գլխավոր պայմանն այն է, որ այդ վայրը չի կարող լինել մշտական կամ երկարատև բնակության վայր և կապված չէ վարձատրվող աշխատանքային գործունեության հետ: Եթե անձը նախատեսում է գտնվել մեկ այլ վայրում մեկ տարի և ավելի ժամկետով, ապա զբոսաշրջության տեսանկյունից նա համարվում է ոչ թե զբոսաշրջիկ, այլ՝ մշտական բնակիչ:

3. Աշխատանքային, վարձատրվող հարաբերության մեջ չգտնվելն այն վայրում, ուր այցելում են: Սրա էությունը նրանում է, որ ուղևորության գլխավոր նպատակը չի կարող լինել տվյալ վայրի աղբյուրներից վարձատրվող գործունեությունը: Այսինքն՝ ցանկացած մարդ, որը մեկնում է մեկ այլ վայր աշխատելու նպատակով, տվյալ վայրի համար չի կարող համարվել զբոսաշրջիկ:

Զբոսաշրջությանը բնորոշ են հետևյալ երկու հատկանիշները.

- զբոսաշրջությունը ազատ ժամանակի անցկացման նպատակով կատարված ուղևորությունն է մշտական բնակության և աշխատանքի վայրի սահմաններից դուրս մեկ այլ վայր,
- զբոսաշրջությունը ոչ միայն տնտեսության կարևոր ճյուղ է, այլև մարդկանց կյանքի կարևոր մասն է, որն ընդգրկում է մարդու փոխհարաբերությունները շրջակա միջավայրի հետ:

Հետևաբար, ելնելով վերոհիշյալ հատկանիշներից՝ կարելի է նշել, որ զբոսաշրջությունը երևույթների, կապերի և հարաբերությունների համակցություն է, որն ուղեկցում է մարդուն, երբ վերջինս ուղևորվում է կամ գտնվում է այնպիսի վայրում, որը չի հանդիսանում իր մշտական կամ երկարատև բնակության վայր և կապված չէ նրա աշխատանքային գործունեության հետ:

Ժամանակակից զբոսաշրջությանը հիմնականում բնորոշ են մի շարք առանձնահատկություններ: Ի տարբերություն ճանապարհորդության՝ զբոսաշրջիկները տեղափոխվում են մեկ այլ վայր շատ ավելի կարճ ժամանակով: Տևական

ճանապարհորդության մեկնում են եզակի անհատներ, իսկ զբոսաշրջությունը 20-րդ և նաև 21-րդ դարի զանգվածային երևույթ է, որը բնորոշ է հասարակության զարգացած քաղաքական-տնտեսական միջավայրին, որտեղ մարդիկ ունեն ամենամյա կարճատև արձակուրդի իրավունք:

Զբոսաշրջության հիմքում ընկած են նրա սուբյեկտը և օբյեկտը: Զբոսաշրջության սուբյեկտ ասելով հասկանում ենք զբոսաշրջային միջոցառման մասնակից կամ զբոսաշրջիկ, որը զբոսաշրջային ծառայությունների միջոցով ձգտում է բավարարել իր պահանջմունքները: Օբյեկտ է այն ամենը, ինչ կարող է զբոսաշրջության սուբյեկտի համար դառնալ ճանապարհորդության նպատակ: Այն է՝ զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող պատմական, մշակութային, բնական, գիտական և այլ գրավչության օբյեկտ[12]:

<<Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին>> ՀՀ օրենքում զբոսաշրջային ծառայությունները սահմանված են որպես՝ զբոսաշրջիկներին մատուցվող և նրանց պահանջմունքների բավարարմանն ուղղված տեղաբաշխման, հյուրանոցային, տեղափոխման, էքսկուրսային, սննդի կազմակերպման և մատուցման, մշակութային, մարզական բնույթի միջոցառումների, հանգստի, զվարճանքի կազմակերպման և այլ ծառայություններ[13]:

Զբոսաշրջության վիճակագրական փաստաթղթերում բերվում է զբոսաշրջային արտադրանքի հետևյալ տեսականին.

- Զբոսաշրջային օպերատորների, գործակալությունների և զբոսավարների ծառայություններ: <<Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին>> ՀՀ օրենքում զբոսաշրջային օպերատորների և գործակալությունների գործունեությունը սահմանվում է որպես զբսաշրջային արդյունքի (զբոսաշրջային ծառայությունների ամբողջական համալիրի) ձևավորում (ձևավորմամբ չեն զբաղվում զբոսաշրջային գործակալները), խթանում և իրացում, ինչի արդյունքում տրամադրվում է զբոսաշրջային փաթեթ, իսկ զբոսավարների գործունեությունը՝ որպես զբոսաշրջիկներին վճարովի էքսկուրսային տեղեկատվական, կազմակերպչական

[12] Боголюбов В.С., Орловская В. П., Экономика туризма, Москва 2005, с. 6
[13] §Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին¦ ՀՀ օրենք, էջ 2

ծառայության և մասնագիտական օգնության մատուցում:

- Հյուրանոցային ծառայություններ: Համաձայն <<Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին>> ՀՀ օրենքի՝ հյուրանոցային ծառայություններն են տեղաբաշխման, գիշերակացի, սննդի կազմակերպման և մատուցման, ինչպես նաև կեցության հետ կապված այլ վճարովի ծառայություններ:
- Մարդատար տրանսպորտային ծառայություններ: Դրա մեջ ներառված են ավտոմոբիլային, երկաթուղային, օդային, ջրային փոխադրումները, ինչպես նաև մարդատար տրանսպորտային օժանդակ ծառայություններ և մարդատար տրանսպորտի վարձակալում և տեխնիկական սպասարկում:
- Հասարակական սննդի ծառայություններ,
- Մշակութային ոլորտի ծառայություններ (մշակութային օջախներ),
- Ռեկրեացիոն ծառայություններ (հանգստի, սիրողական սպորտի, զվարճանքի վայրեր),
- Ֆինանսական, ապահովագրական, վարձակալական և այլ տիպի զբոսաշրջային ծառայություններ[14]:

Զբոսաշրջային փաթեթը զբոսաշրջային ծառայությունների համալիր է, որն ընդգրկում է ծառայությունների մատուցման առնվազն երկու գործառույթ՝ կապված տրանսպորտային (և դրա հետ առնչվող), հյուրանոցային (և դրա հետ առնչվող) ծառայությունների հետ, ինչպես նաև այն ծառայությունների հետ, որոնք կապված չեն տրանսպորտային և հյուրանոցային ծառայությունների հետ և զբոսաշրջային արդյունքի էական մասն են կազմում:

Զբոսաշրջությունն ըստ տեսակների դասակարգվում է՝

Ռեկրեացիոն զբոսաշրջություն: Զբոսաշրջության այս տեսակը շատ բազմազան է և ներառում է հանգստի, ազատ ժամանակի անցկացման և զվարճանքի տարբեր ձևեր: Զբոսաշրջության այս տեսակն ամենատարածվածն է աշխարհում և ընդգրկում է բոլոր զբոսաշրջային այցելությունների կեսը: Այս կատեգորիան ներառում է ճանաչողական էքսկուրսիաներ, մասնակցությունը սպորտային միջոցառումներին և սպորտով

[14] Международно-прававое регулирование туристских услуг: Учебное пособие/ Авторский коллектив Allpravo.ru, 2006 (http://www.allpravo.ru/library/doc2264p0/instrum5586/print5588.html)

զբաղվելը, լողափերից, լողավազաններից, զվարճանքի և հանգստի միջոցներից օգտվելը, մեղրամիս անցկացնելը, ամառային ճամբարներ հաճախելը և այլն: Ըստ այդմ էլ կարելի է ներկայացնել ռեկրեացիոն զբոսաշրջության հետևյալ տարատեսակները.

ա) Ճանաչողական կամ էքսկուրսիոն զբոսաշրջությունը: Դրանք ճանապարհորդություններ են, որոնց նպատակն է ծանոթացումը պատմական, մշակութային, աշխարհագրական տեսարժան վայրերին, այդտեղ ապրող ժողովուրդների և նրանց ավանդույթների հետ:

բ) Լողափային զբոսաշրջություն: Սա զբոսաշրջության ամենատարածված տեսակներից մեկն է: Ծովափնյա հանգստավայրերը տարածված են ամբողջ մոլորակով, քանի որ պահանջարկը լողափնյա զբոսաշրջության բավականին մեծ է:

գ) Սպորտային զբոսաշրջություն: Սա ենթադրում է ճանապարհորդություն սպորտով զբաղվելու, սպորտային միջոցառումներին մասնակցելու կամ ուղղակի ակտիվ հանգիստ անցկացնելու նպատակով: Սպորտային զբոսաշրջությունը կարելի է ստորաբաժանել պրոֆեսիոնալի և սիրողականի, ձմեռայինի և ամառայինի, ինչպես նաև ջրայինի, օդայինի, լեռնայինի, անապատայինի, քարանձավայինի: Որպես զբոսաշրջության արագ զարգացող և նոր տեսակ, կարելի է առանձնացնել էքստրեմալ զբոսաշրջությունը:

դ) Կրուիզային զբոսաշրջություն: Այս դեպքում հասկանում ենք ճանապարհորդություն ջրային փոխադրամիջոցներով, որը ներառում է նաև ափամերձ տարածքների և նավահանգստային քաղաքների տեսարժան վայրերով էքսկուրսիաներ:

ե) Իրադարձային զբոսաշրջություն: Իրադարձային զբոսաշրջության հիմնական նպատակն է մասնակցել ինչ-որ իրադարձության: Ըստ իրադարձությունների թեմատիկայի առանձնանում են իրադարձային զբոսաշրջության հետևյալ տարատեսակները՝ ազգային և միջազգային տոները, փառատոնները, ցուցահանդեսները, շոուները, շքերթները, նորաձևության ցուցադրումները, աճուրդները, մշակութային և սպորտային միջոցառումները, մրցույթները:

զ) Էկոզբոսաշրջություն: Սա բնական, էթնիկ և մշակութային միջավայրի հանդեպ պատասխանատվությամբ իրականացված ճանապարհորդության տեսակ է, որի

նպատակն է առանց ընդհանուր էկոհամակարգը խախտելու ուսումնասիրել և վայելել տեղանքի բնական, էթնիկ, պատմական և մշակութային առանձնահատկությունները:

է) Ագրոզբոսաշրջություն: Այն իրենից ներկայացնում է հանգիստ գյուղական շրջանում: Զբոսաշրջիկները որոշ ժամանակ վարում են գյուղական կենսաձև, ծանոթանում են տեղի մշակույթին և ավանդույթներին, մասնակցում են գյուղատնտեսական աշխատանքներին:

ը) Որսորդական և ձկնորսական զբոսաշրջություն: Զբոսաշրջության այս տեսակը որսորդության և ձկնորսության սիրահարների համար է: Նրանք մեկնում են այնպիսի վայրեր, որտեղ նրանք կարող են զբաղվել իրենց սիրած զբաղմունքով, և որի համար կան բարենպաստ պայմաններ:

Գործնական զբոսաշրջություն: Այն իրենից ներկայացնում է ծառայողական և մասնագիտական նպատակներով ճանապարհորդություններ՝ առանց այցելության վայրում եկամտի ստացման: Այն ներառում է մասնակցությունը տարբեր տեսակի հանդիպումների, կոնգրեսների, կոնֆերանսների, առևտրային տոնավաճառների և ցուցահանդեսների, սեմինարների, դասախոսությունների, համերգների, ներկայացումների, շոուների անցկացում և այլն: Գործնական զբոսաշրջության տարատեսակներից է բիզնես զբոսաշրջությունը, ցուցահանդես-կոնգրեսային զբոսաշրջությունը և ինսենտիվ (incentive-խրախուսում) զբոսաշրջությունը:

Կազդուրիչ կամ առողջարարական զբոսաշրջություն, որի հիմնական նպատակն է տարբեր տեսակի հիվանդությունների բուժումը, վերականգնումը հիվանդություններից, վիրահատություններից հետո, ինչպես նաև սթրեսներից, հոգնածությունից ձերբազատումը և առողջության պահպանումն ու երիտասարդացումը:

Էթնիկ զբոսաշրջություն կամ այցելում ընկերներին և բարեկամներին: Սրանք ճանապարհորդություններ են, որոնք նպատակ են հետապնդում այցելել ծննդավայր կամ պապենական հող, կամ ուղղակի այցելություններն են այլ երկրներում կամ տարածաշրջաններում ապրող ընտանիքի անդամներին, բարեկամներին, ընկերներին:

Ուսումնական զբոսաշրջություն, որի նպատակն է մասնակցությունը տարբեր ուսումնական ծրագրերին, որակավորման բարձրացման կուրսերին, լեզվային,

մասնագիտական գիտելիքների ձեռքբերումը և դրանց ընդլայնումը:

Կրոնական զբոսաշրջություն: Սա զբոսաշրջության ամենահին տեսակներից մեկն է: Այն կարող է ներառել ինչպես մասնակցությունը կրոնական հավաքներին և միջոցառումներին, այնպես էլ ուխտագնացություն:

Շոփինգ-զբոսաշրջություն: Այն իրենից ներկայացնում է ապրանքների ձեռքբերում այլ երկրում կամ տարածաշրջանում միայն սեփական օգտագործման կամ նվիրելու նպատակով:

Գործնականում զբոսաշրջության վերոհիշյալ տեսակները շատ հաճախ համադրվում են, քանի որ ինչքան տարբեր են մարդիկ, այնքան էլ տարբեր են նրանց նախասիրությունները և ակնկալիքները սպասվելիք ճանապարհորդությունից:

Բերված բոլոր սահմանումները ընդհանրացնելով՝ զբոսաշրջությունը կարող ենք ձևակերպել հետևյալ կերպ. <<Զբոսաշրջությունը քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց ժամանակավոր՝ առավելագույնը տասներկու ամիս անընդմեջ ժամկետով, մեկնումն է իրենց մշտական բնակության վայրից մեկ այլ վայր գործնական, կրթական, կրոնական, առողջարարական, մասնագիտական, ճանաչողական, մարզական և այլ նպատակներով՝ առանց ժամանակավոր գտնվելու վայրում վարձատրվող գործունեության իրականացման>>:

1.2 Զբոսաշրջության սոցիալ-տնտեսական, մշակութային, բնապահպանական և քաղաքական նշանակությունը

Զբոսաշրջության զարգացումը թողնում է դրական սոցիալական, տնտեսական, մշակութային, բնապահպանական և քաղաքական ազդեցություն երկրի վրա: Այսպես, զբոսաշրջիկների համար համայնքային բնակիչների կողմից կազմակերպած միջոցառումները կամ տոները, նրանց նկատմամբ ցուցաբերած հյուրասիրությունը նպաստում են համայնքի սոցիալական աշխուժության բարձրացմանը, իսկ զբոսաշրջության ստեղծած աշխատատեղերը և դրանց արդյունքում ստացվող եկամուտները հանդիսանում են տեղի բնակչության կողմից գյուղական համայնքները չլքելու մեծ խթան: Քանի որ զբոսաշրջությունն ենթադրում է հանրային

ծառայությունների զարգացում, այն գյուղական համայնքներում կարող է բարձրացնել բնակչության կենսամակարդակը: Դա կարող է ներառել բարելավված ճանապարհային և հաղորդակցական ենթակառուցվածքներ, առողջապահության և տրանսպորտի ոլորտների բարելավում, սպորտային, հանգստի և հասարակության համար նախատեսված այլ վայրեր:

Վերջին տարիներին շատ երկրների տնտեսություններում արդյունաբերության, գյուղատնտեսության ոլորտների անկման հետ մեկտեղ նկատվում է ծառայությունների ոլորտի աճ, և դա հիմնականում պայմանավորված է նրանով, որ զբոսաշրջային ինդուստրիան այդ ոլորտի բաղկացուցիչն է: Զբոսաշրջության նշանակությունն աշխարհում հետզհետե մեծանում է, և դա պայմանավորված է երկրների տնտեսությունների վրա ունեցած ազդեցությամբ: Ժամանակակից տնտեսության զարգացմանը բնորոշ է ոչ այնքան առանձին ճյուղերի զարգացումը, որքան տարատեսակ միջճյուղային համալիրների գործունեությունը: Ըստ էության, զբոսաշրջությանը կարելի է վերաբերվել որպես ազգային տնտեսության խոշոր ինքնուրույն միջճյուղային տնտեսական համալիրի. զբոսաշրջիկները հանդես են գալիս զբոսաշրջային արտադրանքի վրա առաջարկ ներկայացնող գնորդների դերում: Յուրաքանչյուր մարդ ձգտում է հնարավորին չափով բավարարել հանգստի իր պահանջները, ճանապարհորդելու իր պահանջարկը զբոսաշրջիկը բավարարում է՝ վճարելով զբոսաշրջային աշխատանքների, ծառայությունների և ապրանքների դիմաց՝ դրանով իսկ ֆինանսավորելով զբոսաշրջության ոլորտը: Զբոսաշրջային աշխատանքներ, ծառայություններ և ապրանքներ արտադրողները ձևավորում են զբոսաշրջային պահանջարկը: Նրանք ձեռք են բերում արտադրական պաշարներ, զբոսաշրջային արտադրանքի արտադրության գործընթացում համակցում են դրանք և իրացնում այն սպառողներին՝ վաճառքից եկամուտ ստանալով:

Զբոսաշրջային ինդուստրիան փոխկապակցված ձեռնարկությունների համակարգ է, որը զբոսաշրջիկներին տրամադրում է բոլոր անհրաժեշտ և բավարար զբոսաշրջային ծառայությունները, ապրանքները, այսինքն՝ տեղաբաշխման, տրանսպորտային միջոցների, հասարակական սննդի վայրերի, զվարճանքի, ճանաչողական, գործնական, առողջարարական, սպորտային և այլ նշանակության

օբյեկտների, էքսկուրսիոն ծառայությունների և զբոսավար-թարգմանիչների ծառայությունների ամբողջությունը: Մասսայական զբոսաշրջության բուռն զարգացումը բերեց ինչպես միջազգային և ազգային տնտեսությունների այլ ճյուղերի, այնպես էլ գիտության, մշակույթի և կրթական համակարգի ակտիվ զարգացման: Զբոսաշրջային ինդուստրիան տնօրինում է բավականին մեծ նյութատեխնիկական բազա, ապահովում է մեծ թվով մարդկանց զբաղվածություն և փոխկապակցված է տնտեսական համակարգի բոլոր ոլորտների հետ[15]: Զբոսաշրջային ինդուստրիայի զարգացումը, այսինքն՝ ճանապարհների, հյուրանոցային և առողջարանային համալիրների շինարարությունը, նոր կենսավերարտադրողական տարածքների բարեկարգումը պահանջում են տարատեսակ աղբյուրներից ֆինանսավորվող խոշոր կապիտալ ներդրումներ: Զբոսաշրջային ոլորտի զարգացմանը մասնակցում են պետական կառույցները, մասնավոր ընկերությունները, միջազգային կազմակերպությունները և այլն:

Տնտեսական առումով տուրիզմը դիտվում է որպես՝

- արտադրության փոխանակման և արտադրանքի բաշխման ոլորտում հասարակական փոխհարաբերությունների որոշակի ամբողջականություն,
- տվյալ երկրի տնտեսական համակարգի մաս, որն ընդգրկում է տնտեսական գործունեության և արտադրության որոշակի ճյուղեր,
- տնտեսական գիտություն, որը տուրիզմն ուսումնասիրում է որպես տարածաշրջանի կամ երկրի տնտեսական ոլորտ,
- ժամանակակից տնտեսական տեսություն, որն ուսումնասիրում է մարդկանց գործողությունները տուրիստական ապրանքների արտադրության, այդ ապրանքների սպառման, բաշխման և փոխանակման բնագավառներում:

Արագ զարգացող երկրների համար զբոսաշրջությունը տնտեսական աճի կարևորագույն կատալիզատոր է, քանի որ հանդիսանում է համախառն ազգային արտադրանքի բաշխման միջոց, որը չի զուգակցվում ապրանքների և ծառայությունների արտահանմամբ:

Ժամանակակից զբոսաշրջությունը որպես տնտեսական երևույթ՝

[15] Боголюбов В.С., Орловская В. П., Экономика туризма, Москва 2005, с. 5

- ունի ինդուստրիալ ձև,
- հանդես է գալիս զբոսաշրջային ապրանքների և ծառայությունների տեսքով, որոնք չեն կարող կուտակվել և տեղափոխվել,
- ստեղծում է նոր աշխատատեղեր և հանդիսանում է նոր տարածքների յուրացման միջոց, ինչպես նաև ազգային տնտեսության արագացված զարգացման կատալիզատոր,
- իրենից ներկայացնում է ազգային եկամտի վերաբաշխման մեխանիզմ, որը գործում է զբոսաշրջության ուղղությամբ մասնագիտացված երկրների օգտին,
- հանդիսանում է ազգային եկամտի աճի, զբաղվածության, տեղական ենթակառուցվածքների զարգացման, տեղի բանկչության կենսամակարդակի բարձրացման մուլտիպլիկատոր,
- բնութագրվում է արդյունավետության բարձր մակարդակով և ներդրումների արագ փոխհատուցվելիությամբ,
- հանդիսանում է բնության և մշակութային ժառանգության պահպանման արդյունավետ միջոց, քանի որ հենց այդ տարրերն են կազմում նրա ռեսուրսային բազան,
- համատեղելի է տնտեսության համարյա բոլոր ճյուղերի և մարդկային գործունեության բոլոր տեսակների հետ[16]:

Զբոսաշրջության ոլորտում արտադրության ծավալների աճը նպաստում է ազգային տնտեսության այլ ճյուղերի զարգացմանը: Ընդունող երկրի տարածաշրջաններում տարածվում է լայնածավալ ներդրումային գործունեություն, ստեղծվում են նոր աշխատատեղեր, ընդլայնվում է ապրանքային շրջանառությունը, և մեծանում են արտարժութային ու հարկային մուտքերը: Նման կերպ հավաքագրված միջոցները կարող են ուղղվել զբոսաշրջության ինդուստրիայի ենթակառուցվածքների ֆինանսավորման, զբոսաշրջային ծառայությունների ոլորտի համար անձնակազմի նախապատրաստման համակարգի զարգացմանը:

Զբոսաշրջության տնտեսության վերաբերյալ գրականության մեջ տնտեսական

[16] Боголюбов В.С., Орловская В. П., Экономика туризма, Москва 2005, с. 32

ազդեցության չափը որոշելու համար օգտագործվում է մուլտիպլիկատորի մոդելը[17]: Մուլտիպլիկատոր ասելով՝ հասկանում ենք այն գործակիցը, որը ցույց է տալիս, թե ինչ չափով է եկամտի փոփոխությունը կախված ներդրումների փոփոխությունից:

Տնտեսական առումով զբոսաշրջության օբյեկտ են համարվում տնտեսական հարաբերությունները, որոնք առաջանում են զբոսաշրջության ոլորտում զբոսաշրջային ապրանքների և ծառայությունների արտադրման, բաշխման և սպառման ընթացքում:

Զբոսաշրջությունն իրենից ներկայացնում է բարդ սոցիալ-տնտեսական օրգանիզմ, որն էական ազդեցություն ունի՝

- առանձին տնտեսական սուբյեկտների գործունեության վրա,
- ազգային տնտեսության վրա ամբողջապես,
- ազգային տնտեսության որոշակի ենթահամակարգերի և ճյուղերի գործունեության վրա,
- համաշխարհային տնտեսության վրա ամբողջապես:

Տնտեսական կյանքում զբոսաշրջությունը հիմնվում է միջճյուղային արտադրական համագործակցության վրա, որը փոխկապում է զբոսաշրջությունը և տնտեսության այլ ճյուղերը՝ տրանսպորտը, գյուղատնտեսությունը, շինարարությունը, որոնք մի կողմից զբոսաշրջությանը ապահովում են անհրաժեշտ միջոցներով և տեխնիկական պայմաններով, այսինքն՝ ձևավորում են զբոսաշրջության նյութատեխնիկական բազան, մյուս կողմից՝ արտադրված զբոսաշրջային բարիքները հասցնում են մինչև սպառում[18]:

Զբոսաշրջության շուկան հասարակական-տնտեսական երևույթ է, որը միավորում է առաջարկն ու պահանջարկը, որպեսզի ապահովի զբոսաշրջային ապրանքների և ծառայությունների առքն ու վաճառքը տվյալ ժամանակին և տվյալ վայրում:

Ինչպես ցանկացած ոլորտի շուկա, այնպես էլ զբոսաշրջության շուկան պայմանավորված է առաջարկով և պահանջարկով: Ընդհանուր առմամբ զբոսաշրջային արդյունքը հանդես է գալիս որպես զբոսաշրջության օբյեկտ: Դա

---

[17] Ի. Վ. Զորին, Վ. Ա. Կվարտալնով, Տուրիստիկա, Երևան 2006, էջ 169
[18] Боголюбов В.С., Орловская В. П., Экономика туризма, Москва 2005, с. 57

նշանակում է, որ զբոսաշրջային առաջարկին վերաբերում է այն ամենը, ինչը կարող է օգտագործվել զբոսաշրջային պահանջարկը բավարարելու համար: Դա կարող է լինել կլիմայով, լանդշաֆտով, պատմական և մշակութային հուշարձաններով պայմանավորված էքսկուրսիաների և հանգստի անցկացումը, հյուրանոցներում, ռեստորաններում, զվարճանքի վայրերում մատուցված ծառայությունները և այլն: Զբոսաշրջության կառավարման օպտիմալացման համար հարկավոր է համակարգել զբոսաշրջային առաջարկը պայմանավորող բոլոր տարրերը:

Զբոսաշրջային առաջարկը բաղկացած է առաջնային (սկզբնական) և ածանցյալ առաջարկներից: Առաջնային առաջարկը զբոսաշրջիկներին առավել գրավում է իր բնական օգտակարությամբ, իսկ ածանցյալ առաջարկը բաղկացած է տարրերից, որոնք ստեղծվում են բացառապես զբոսաշրջային նպատակներով[19]:

Առաջնային առաջարկը ներառում է՝

- երկրի բնական առանձնահատկությունները (աշխարհագրական դիրքը, կլիման, տեղագրությունը, բուսական և կենդանական աշխարհը),
- սոցիալ-մշակութային գործոնները (մշակույթը, ավանդույթները, աշխարհիկ և կրոնական կառույցները, մտածելակերպը, հյուրասիրությունը),
- ընդհանուր ենթակառուցվածքը (կապի և հաղորդակցման ուղիները, գազա-, ջրա- և էլեկտրամատակարարումը, մաքրիրչ կառույցները, մշակույթի և ազատ ժամանակի անցկացման հիմնարկությունները)[20]:

Ածանցյալ առաջարկը կազմված է զբոսաշրջային ենթակառուցվածքից և վերնակառուցվածքից (սուպրաստրուկտուրա): Ենթակառուցվածքը բաժանվում է զբոսաշրջության զարգացումով պայմանավորված ենթակառուցվածքի և բուն զբոսաշրջային ենթակառուցվածքի: Քանի որ շատ հաճախ տարբեր տարածաշրջաններում բացի տեղի բնակչությունից պարբերաբար լինում են նաև հյուրեր, շատ ժամանակ եղած համակարգերի հզորությունը չի բավականացնում նրանց բոլորի կենսագործունեության ապահովմանը: Դրա համար կառուցվում են լրացուցիչ ենթակառուցվածքներ հյուրերի կենսագործունեությունն ապահովելու

[19] Кабушкин Н.И., Менеджмент туризма, Минск 2001, с. 174
[20] Кабушкин Н.И., Менеджмент туризма, Минск 2001, с. 178

համար: Այդ լրացուցիչ ենթակառուցվածքներն էլ պայմանավորված են զբոսաշրջությամբ և վերաբերում են ածանցյալ առաջարկին: Բուն զբոսաշրջային ենթակառուցվածքներին են վերաբերում տրանսպորտային, տեղավորման, զբոսաշրջային, կուրորտային կառույցները, զվարճանքի վայրերը, կոնֆերանսներ, սեմինարներ անցկացնելու վայրերը, միջնորդային ծառայություններ անցկացնելու կառույցները (սպասարկման և ինֆորմացիոն ծառայությունները):

Զբոսաշրջային վերնակառուցվածքի մեջ մտնում են հյուրանոցային և հասարակական սննդի ձեռնարկությունները: Դրանք չեն վերաբերում զբոսաշրջային ենթակառուցվածքին և որոշիչ դեր են խաղում զբոսաշրջության համար:

Ըստ էության՝ զբոսաշրջային պահանջարկը բավարարվում է ծառայությունների համալիրով, որոնք վերաբերում են ինչպես առաջնային, այնպես էլ ածանցյալ առաջարկներին[21]:

Ապրանքների և ծառայությունների համաշխարհային արտահանման մեջ զբոսաշրջության ծավալը 6% է, իսկ միայն ծառայությունների արտահանման մեջ՝ 30%: Ընդհանրապես զբոսաշրջությունը, որպես արտահանման կատեգորիա, աշխարհում իր ծավալներով զիջում է միայն նավթային, քիմիական և մեքենաշինական արդյունաբերությանը: Շատ զարգացող երկրների համար զբոսաշրջությունը տնտեսության հիմնական ճյուղերից և եկամտի աղբյուրներից մեկն է:

Զբոսաշրջությունը էապես նպաստում է զբաղվածության աճին՝ ուղղակի և անուղղակի ազդեցությամբ: Ուղղակի ազդեցության պարագայում աշխատատեղեր են ստեղծում այն կազմակերպությունները, որտեղ շփումը զբոսաշրջիկների հետ տեղի է ունենում անմիջականորեն: Դրանք են ավիաընկերությունները, հյուրանոցային տնտեսության օբյեկտները, զբոսաշրջային օպերատոր կամ գործակալ հանդիսացող կազմակեռպությունները և այլն: Անուղղակի աշխատատեղեր ստեղծող կազմակերպություններ համարվում են նրանք, որոնք ծառայություններ կամ որոշակի արտադրանք են մատուցում ուղղակի աշխատատեղեր ստեղծող կազմակերպություններին: Դրանց թվին կարելի է դասել հանրային սննդի օբյեկտները, սննդամթերք մատակարարողները, շինարարական կազմակերպությունները,

[21] Кабушкин Н.И., Менеджмент туризма, Минск 2001, с. 225

ապահովագրական ընկերությունները և այլն:

Զբոսաշրջության դերը կարևոր է նաև արտերկրից դրամական հոսքերի աղբյուր լինելու հանգամանքով: Այս իրողությունը հատկապես կարևոր է թերզարգացած արդյունաբերությամբ և արտահանման հետ խնդիրներ ունեցող երկրների համար: Պետք է հաշվի առնել, որ զբոսաշրջային ծառայությունների մատուցումը արտահանման տարատեսակ է, որի արդյունքի առանձնահատկությունը արտադրության ու սպառման անքակտելիություն է: Այլ կերպ ասած, արտադրանքը չի լքում երկրի տարածքը, այլ սպառվում է անմիջապես տեղում՝ միաժամանակ ապահովելով դրամական հոսքեր արտերկրից:

Զբոսաշրջության ոլորտից ստացվող պետական եկամուտները կարող են լինել ուղղակի և անուղղակի: Ուղղակի եկամուտներն առաջանում են զբոսաշրջության ոլորտում ստեղծվող աշխատատեղերից և գործող ձեռնարկություններից, ինչպես նաև ուղղակի գանձումներից, ինչպիսին են օրինակ մեկնումից ստացվող հարկերը: Անուղղակի եկամուտներն առաջանում են այցելություններից ապրանքների և մատուցվող ծառայությունների համար գանձվող հարկերից և մաքսերից:

Այսպիսով, զբոսաշրջությունն օգնում է նոր աշխատատեղերի ստեղծմանը, նվազեցնում է երկրում արժութային վճարումների պակասորդը, ուժեղացնում է տնտեսությունը, հնարավորություն է ստեղծում զարգացնել զբոսաշրջային ցանկություններն ու կարիքները բավարարող ապրանքների ու ծառայությունների արտադրությունը, իրականացնում է հարթեցման գործառույթներ, այսինքն տեղի է ունենում բնակչության եկամուտների վերաբաշխում երկրի զարգացած տարածաշրջաններից դեպի հարուստ զբոսաշրջային պաշարներ ունեցող, բայց թույլ զարգացած տարածաշրջանները, ինչը նպաստում է տեղի բնակչության կենսամակարդակի բարձրացմանը: Մյուս կողմից զբոսաշրջությունը փոխում է ներդրումային ակտիվության ուղղությունը, թուլացնում է տնտեսությունը, բերում է ավանդույթների անհետացմանը և այլն: Սակայն սրանցից ոչ մեկն ամբողջությամբ ճշմարտացի չէ: Երբ զբոսաշրջությունը զարգանում է միակողմանի, ապա նրա ազդեցությունը տվյալ երկրի տնտեսության վրա բացասական է՝ արդյունաբերության այլ ճյուղերի թուլացման և երկրի տնտեսությունը ծառայությունների տնտեսության

վերափոխելու պատճառով: Անհրաժեշտ է, որ զբոսաշրջության զարգացումն ընթանա մյուս ճյուղերի զարգացմանը զուգահեռ:

Որպես կանոն՝ զբոսաշրջիկների թվի աճին հաջորդում է միջազգային ներդրողների հետաքրքրության աճ տվյալ երկրի նկատմամբ: Խոսքը մասնավորապես համաշխարհային ճանաչում ունեցող հյուրանոցային ցանցերի մասին է: Օրինակ, հայաստանյան զբոսաշրջային շուկայի վերջին տարիների ակտիվացումն ուղեկցվել է հյուրանոցային միջազգային մի շարք խոշոր ցանցերի մուտքով հայաստանյան շուկա, ինչն անշուշտ իր դրական ազդեցությունն է թողել ընդհանուր ցուցանիշների վրա: Մի շարք այլ հեղինակավոր ցանցեր նույնպես ծրագրում են մոտ ապագայում մուտք գործել հայաստանյան հյուրանոցային շուկա, ինչը, անշուշտ, կբերի արտասահմանյան նոր ներդրումներ, մրցակցություն և ծառայությունների որակի նկատելի բարելավում:

Երկրի համախառն ազգային արդյունքի ձևավորման, գործազրկության մակարդակի փոփոխության և արտարժութային վճարների կարգավորման վրա զբոսաշրջության նշակալի ազդեցությունը բերում է նրան, որ զբոսաշրջային ինդուստրիան ուշադրության է արժանանում երկրի տնտեսության պլանավորման ժամանակ: Շատ երկրներ արժևորում են զբոսաշրջությունից ստացված եկամուտների նշանակությունը իրենց երկրի տնտեսության համար: Զբոսաշրջիկները որքան շատ գումար են ծախսում ընդունող երկրում, այնքան դա դրական է արտահայտվում ընդունող երկրի տնտեսության վրա: Սակայն գոյություն ունի ծախսերի մի ամբողջ շարք, որը պետք է կրի օտարերկրյա զբոսաշրջիկներ ընդունող երկիրը: Դրանցից են ներմուծմանն ուղղված ծախսերը: Առավել թույլ զարգացած կամ փոքր նյութական պաշարներով երկրները ստիպված են ներկրել դրանք: Որոշ երկրներ կարող են կրել սպասարկման ոլորտի արդիականացմանն ուղղված ծախսեր: Օրինակ՝ զբոսաշրջիկների մեծ հոսքի սպասարկման ապահովման համար պետք է ծախսել մեծ միջոցներ գոյություն ունեցող օդանավակայանների, ծովային նավահանգիստների, ճանապարհների շինարարության համար: Հնարավոր են նաև օտարերկրյա մասնագետների վճարմանն ուղղված ծախսեր. զբոսաշրջության զարգացումը շատ հաճախ առաջ է բերում օտարերկրյա մասնագետների աշխատանքի կարճատև կան երկարատև օգտագործման անհրաժեշտություն: Զբոսաշրջության զարգացումը

երկրում առաջացնում է կապիտալի ներգրավման անհրաժեշտություն այլ երկրներից: Բացի այդ, երբ զբոսաշրջության զարգացմանը մասնակցում են արտասահմանյան ընկերություններ, ապա ստացված եկամտի մի մասը նրանք պարտավոր են վերադարձնել իրենց երկիր: Այսպիսին են օտարերկրյա զբոսաշրջիկների մուտքի հաշվին երկրի վճարային հաշվեկշռի ավտոմատ բարելավման անհնարինության հիմնական պատճառները: Այսպիսով, զբոսաշրջության հոսքերով մուտք եղած և արտահանված արտարժույթն իր ազդեցությունն է ունենում տվյալ երկրի վճարային հաշվեկշռի վրա:

Այսօր զբոսաշրջությունը համարվում է համաշխարհային շուկայի ամենաեկամտաբեր գործունեության տեսակներից մեկը: Հաշվի առնելով տնտեսության վրա ունեցած հսկայական ազդեցությունը՝ կարելի է առանձնացնել զբոսաշրջության հինգ տնտեսական գործառույթները: Դրանք են՝ եկամտի ստեղծման, արտադրական, բնակչության զբաղվածության ապահովման, հարթեցման, վճարային հաշվեկշռի համահարթեցման գործառույթ:

Եկամտի ստեղծման գործառույթը զբոսաշրջության մեջ եկամտի ստեղծման ուղղակի արդյունք է, որը նպաստում է ազգային արդյունքի արագ ավելացմանը: Այդպիսի գործառույթի աճ տեղի է ունենում, երբ զբոսաշրջային ոլորտի առաջնային եկամուտը ներհոսում է դեպի տարածաշրջանային առևտուր, գյուղատնտեսություն և արդյունաբերություն:

Արտադրական գործառույթ-զբոսաշրջության ոլորում գործող ձեռնարկությունները ստեղծում են տարատեսակ արտադրանք և դրանով օգնում են արժեքների կուտակմանը: Զբոսաշրջային այդ ոչ նյութական ապրանքն իրենից ներկայացնում է ծառայության տեսակ, որը պահանջում է որակյալ անձնակազմ:

Բնակչության զբաղվածության ապահովման գործառույթը զբոսաշրջության ոլորտում նպաստում է կադրերի քանակական աճին, որի շնորհիվ բնակչությունը ձեռք է բերում աշխատատեղեր ցանկացած տիպի զբոսաշրջային ձեռնարկությունում:

Հարթեցման գործառույթը շեշտը դնում է թույլ զարգացած արդյունաբերություն ունեցող այն տարածաշրջանների վրա, որոնց տնտեսությունը զարգանում է զբոսաշրջության շնորհիվ: Այս գործառույթն ունի նաև միջազգային նշանակություն,

քանի որ կարող է վերաբաշխել գյուղատնտեսական արտադրություն ունեցող և զարգացած արդյունաբերական երկրների եկամուտները:

Վճարային հաշվեկշռի հավասարեցման գործառույթը ներառում է վճարային հաշվեկշռն իր բոլոր բաղկացուցիչ մասերով: Այսինքն՝ արտերկիր մեկնած զբոսաշրջիկների ծախսերի հաշվեկշիռը հակադրվում է այն եկամուտներին, որոնք ստացվել են այլ երկրներից ժամանած զբոսաշրջիկների կողմից ապրանքների և ծառայությունների սպառման արդյունքում:

Զբոսաշրջության մշակութային նշանակությունը.

Մշակույթի և ավանդույթների վերագնահատում. զբոսաշրջությունը կարող է մեծապես ազդել մշակութային և պատմական ավանդույթների վերականգնմանը, պահպանմանն ուփոխանցմանը, ինչը հաճախ իր հերթին նպաստում է բնական ռեսուրսների պահպանմանը, մշակույթի, արվեստի և արհեստագործության զարգացմանը:

Զբոսաշրջությունը բարձրացնում է հասարակության գիտակցություն, նպաստում բնակչության մոտ բնական և մշակութային ռեսուրսների թե ֆինանսական նշանակության գիտակցությանը, թե դրանց նկատմամբ հպարտության զգացման բարձրացմանը, բերում է բնության գնահատում և արժևորում, ձևավորում է բնության պահպանության համապատասխան վարքագիծ՝ նպաստելով բնական ռեսուրսների պահպանմանն ու ռացիոնալ օգտագործմանը:

Զբոսաշրջության բնապահպանական նշանակությունը.

Զբոսաշրջությունից ստացված եկամուտները կարող են ուղղվել շրջակա միջավայրի պահպանությանը: Զբոսաշրջությունը բարձրացնում է հասարակության գիտակցությունը բնության արժեքի վերաբերյալ և ձևավորում բնության պահպանության համապատասխան վարքագիծ: Զբոսաշրջությունը նպաստում է բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործմանը, շրջակա միջավայրի պահպանությանը և կենսաբազմազանության վերականգնմանը:

Զբոսաշրջության քաղաքական նշանակությունը.

Զբոսաշրջությունը նպաստում է երկրի միջազգային ճանաչմանը, դիվանագիտական հարաբերությունների ձևավորմանն ու ամրապնդմանը,

օտարերկրյա ներդրումների և արտահանման խթանմանը: Զբոսաշրջությունը նպաստում է մարդկանց շփմանը, բարիդրացիական հարաբերությունների ձևավորմանը, մշակույթների և ավանդույթների փոխճանաչմանն ու ընկալմանը՝ դրանով իսկ խաղաղության հաստատմանը:

Ոլորտի բացասական ազդեցությունների շարքում կարելի է դասել էկոլոգիական խնդիրները՝ տարածքների աղտոտում, բնական ռեսուրսների ոչ օպտիմալ օգտագործում, աղմուկ, սոցիալ-տնտեսական ազդեցությունները՝ գնաճ, ցածր վարձատրվող սեզոնային աշխատանք, տեղական բնակչության արժեքների աղավաղում, հանցագործություններ և այլն:

Ինչպես տեսնում ենք, զբոսաշրջության նշանակությունը շատ մեծ է և կարևոր, հատկապես սոցիալ-տնտեսական, մշակութային, բնապահպանական և քաղաքական ոլորտներում:

1.3 Համաշխարհային զբոսաշրջության պետական կարգավորումն ու միջազգային զբոսաշրջային շուկայի զարգացումն ու կանխատեսումները

Զբոսաշրջությունն աշխատանքով է ապահովում մոտ 250 մլն մարդու, յուրաքանչյուր 10-րդ աշխատողն աշխարհում զբաղված է զբոսաշրջության ոլորտում[22]:

Ներկայումս հսկայական զբոսաշրջային հոսքեր են ուղղվում դեպի գայթակղիչ զբոսաշրջային, մշակութա-ճանաչողական և կենսավերարտադրողական պաշարներ ունեցող երկրները: Տվյալ միտումն արդեն օգտագործում են աշխարհի շատ երկրներ՝ ձևափոխելով իրենց տարածքները ներգնա զբոսաշրջության առանձնահատկություններին համապատասխան: Դա երևում է տրանսպորտային, ռեստորանային, մշակութա-զվարճանքային ինդուստրիայի, անվտանգության, ամրագրման, տեղեկատվական, կապի և այլ համակարգերի ստեղծման և հզորացման մեջ:

[22] www.unwto.org

Եթե զբոսաշրջության զարգացման տեմպերը նայենք երկարաժամկետ կտրվածքով, ապա կտեսնենք, որ աշխարհում զբոսաշրջային այցելությունները շարունակում են աճել 1950թ.-ի 25 մլն. ցուցանիշից մինչև 1980-ի 277 մլն.-ը, այնուհետև 1990-ի 438 մլն.-ից մինչև 2000-ի 683 մլն.-ը՝ հասնելով մինչև 2008-ի 890 մլն.-ի սահմանագծին: 2009թ., կապված համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետ, նկատվեց որոշակի անկում, և զբոսաշրջային այցելությունները նվազեցին՝ կանգ առնելով 880 մլն.-ի վրա: 2010-ին միջազգային զբոսաշրջային այցելությունները կրկին ավելացան՝ հասնելով 935 մլն.-ի: 2011-ի տվյալներով համաշխարհային զբոսաշրջային այցելությունների թիվը կազմել է 983մլն, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 43մլն, ինչը կազմում է 4.6%: 2012թ. համաշխարհային զբոսաշրջային այցելությունների թիվը կազմել է 1,035մլրդ, ինչը կազմում է +4.1%: 2012թ. համաշխարհային զբոսաշրջիկների թիվն առաջին անգամ պատմության մեջ գերազանցեց 1մլրդ: Պահանջարկը շատ մեծ է եղել ամբողջ տարվա ընթացքում, իսկ չորրորդ եռամսյակում, նույնիսկ ավելի բարձր, քան ակնկալվել է[23]:

Այս տվյալները համարվում են աննախադեպ դրական ցուցանիշներ՝ հաշվի առնելով համաշխարհային տնտեսական իրավիճակը:

Տարածաշրջաններից մեծ աճի տեմպ է գրանցել Ասիական և Խաղաղվկիանոսյան շրջանը և Աֆրիկան, այնուհետև Ամերիկան և Եվրոպան: Մերձավոր Արևելքը շարունակում է ցույց տալ վերականգնման նշաններ՝ հատկապես հաշվի առնելով Եգիպտոսի խոստումնալից արդյունքները:

Եվրոպա +3% 2011թ. նույն ժամանակահատվածի համեմատ: Կենտրոնական և Արևելյան Եվրոպա +9%, Եվրոպա +3%, Հարավային և Միջերկրական Եվրոպա +1%, Հյուսիսային Եվրոպա +0.2%:

Հարավարևելյան Ասիա և Հարավային Ասիա +8%, Ասիական Խաղաղօվկիանոսյան շրջան +7%, Հյուսիսարևելյան Ասիա +7%:

Ամերիկյան շրջան +4%, կենտրոնական Ամերիկա +7%, հարավային Ամերիկա +6%, Կարիբյան ծովի քաղաքներում +5%, հյուսիսային Ամերիկայում միջազգային

[23] www.unwto.org

զբոսաշրջային այցեկությունները աճել են 3%-ով:

Աֆրիկայում +6%, Թունիսի վերականգնումը իր դրական ազդեցությունն է ունեցել Հյուսիսային Աֆրիկայի ցուցանիշի վրա +10%, ինչպես նաև Եգիպտոսի վերականգնումը, ըստ Միջին Արևելքի ցուցանիշների -1%՝ համեմատելով 2011թ. -6%, Աֆրիկա՝ Հարավային Սահարա՝ +4%:

2014թ. 10-ը խոշոր միջազգային զբոսաշրջային երկրներում եկամուտները, մուտքերն աճել են զգալիորեն 2013թ. նկատմամբ՝ Հոնկոնգ (Չինաստան) (+16%), ԱՄՆ (+10%), Ֆրանսիա և Մեծ Բրիտանիա (+6%), Գերմանիա (+5%), Ճապոնիա (37%), Հարավային Աֆրիկա (+22%), Հնդկաստան (+22%), Շվեյցարիա (+19%), Տայլանդ (+18%), Լեհաստան (+16%), Ռուսաստանի Դաշնություն (+16%), Եգիպտոս(+13%), Չեխիայի Հանրապետություն (+13%), Թայվան (Չինաստանի նահանգ) (+11%), Սինգապուր (+10%), և Խորվաթիա (+10%):



Սույն գրաֆիկում կարող եք տեսնել 16 խոշոր միջազգային երկրների եկամուտները 2013 թ դրությամբ, որից ինչպես երևում է Ճապոնիան առաջատար դիրքերում է 37%, իսկ դիրքերը զիջում է Գերմանիան 5%:

Ինչ վերաբերում է զբոսաշրջությունից ստացված մուտքերին, դրանք 1950թ.-ին եղել են 2.1 մլդ. ԱՄՆ դոլար, 1960թ.-ին՝ 6.9 մլրդ, 1970-ին՝ 17.9 մլրդ, 1980-ին՝ 104.4 մլրդ, 1990-ին՝ 270.2 մլրդ, 2000-ին՝ 481.6 մլրդ, 2008-ին՝ 941 մլրդ, իսկ 2009-ին նվազել են 9,6%-ով՝ կազմելով ընդամենը 852 մլրդ, 2010-ին՝ 928մլրդ, 2011-ին՝ 1,030 միլիարդ ԱՄՆ դոլար[24]: Միջազգային զբոսաշրջային ժամանումների և զբոսաշրջությունից ստացվող մուտքերի հաշվով երեք առաջատարները համարվում են Ֆրանսիան, ԱՄՆ-ը և Իսպանիան:



Վերոգրյալ գրաֆիկում կարող եք տեսնել 1950-2011 թթ զբոսաշրջությունից ստացված մուտքերը, որտեղ երևում է 2011թ զգալի աճը:

Վերջին տասնամյակների ընթացքում զբոսաշրջությունը շարունակում է զարգանալ՝ դառնալով համաշխարհային տնտեսության ամենամեծ և ամենաարագ զարգացող ոլորտներից մեկը: Ավանդական զբոսաշրջային հիմնական ուղղությունների՝ Արևմտյան Եվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի կողքին ավելացան նորերը: Հետզհետե ավելացող ուղղությունները զարկ տվեցին զբոսաշրջությանը՝ դարձնելով այն սոցիալ-տնտեսական զարգացման, նոր աշխատատեղերի ստեղծման,

[24]Tourism Highlights(2010) (www.unwto.org)

ենթակառուցվածքների զարգացման և արտահանման ավելացման հիմնական խթան: Զբոսաշրջությունը դարձավ միջազգային առևտրի հիմնական ուղղություններից մեկը[25]:

ՄԱԿԶՀԿ-ի կանխատեսմամբ, մոտակա 10-15 տարիներին համաշխարհային զբոսաշրջության տարեկան աճը կշարունակվի կազմել 4-5%: Նախկինի պես զբոսաշրջային ուղիների (և հետևապես դրամական մուտքերի) առավել նշանակալի բաժինը մոտ ապագայում բաժին կընկնի ներքին զբոսաշրջությանը: Սպասվում է, որ ներքին և միջազգային այցելուների հարաբերակցությունը միջինում կկազմի աշխարհում 10:1, իսկ Եվրոպայում՝ 7:1: Կանխատեսվում է, որ հեռանկարում միջազգային զբոսաշրջիկների տոկոսային հարաբերակցությունը ազգային զբոսաշրջիկների հետ Եվրոպայում կկազմի 14%, Հյուսիսային և Լատինական Ամերիկայում՝ միջինում 8%, իսկ աշխարհում՝ միջինում 7%[26]:

Միջազգային զբոսաշրջությունը, հանդիսանալով համաշխարհային տնտեսության բարդ և համապարփակ բնագավառ, մեծ ազդեցություն ունի ինչպես համաշխարհային տնտեսության կառուցվածքի և ընդհանուր իրավիճակի, այնպես էլ աշխարհի տարբեր երկրների և տարածաշրջանների տնտեսությունների վրա:

Այնպիսի զարգացած երկրներում, ինչպիսիք են ԱՄՆ-ը, Շվեյցարիան, Իսպանիա, ՄԱԷ-ն, տնտեսության և նրա կարգավորման ողջ համակարգն ուղղված է դեպի իր երկրի տարածքներ զբոսաշրջիկների հոսքերի առավելագույն ներգրավմանը: Ընդ որում, զբոսաշրջության ոլորտն այդ երկրներում իր ազդեցությանն է ենթարկել քաղաքականությունը:

Պետական հատվածը ավանդաբար մեծ դեր է ունեցել ոլորտի զարգացման, ինչպես նաև երկրի՝ որպես զբոսաշրջային ուղղություն խթանելու գործընթացներում: Ըստ վերլուծաբանների, պետական հատվածի դերն առավելապես կարևոր է զարգացող երկրներում, որտեղ զբոսաշրջությունը անցումային շրջանում է, իսկ համապատասխան ենթակառուցվածքը, օրենսդրական դաշտը և տնտեսության տարբեր ճյուղերի անհրաժեշտ փոխհամագործակցությունը դեռևս սաղմնային փուլում: Սրանք բոլորը խնդիրներ են, որոնք հնարավոր է լուծել միայն պետական

[25] Tourism Highlights(2010) (www.unwto.org)
[26] Tourism Highlights, Madrid, 2006 (www.unwto.org)

մակարդակով ծրագրվող և իրականացվող ռազմավարության շրջանակում:

Զարգացած երկրներում պետական հատվածի դերը զբոսաշրջության ոլորտում սահմանափակվում է զուտ վերահսկողական գործառույթներով, քանի որ արդեն ձևավորված է պետական կարգավորման ինստիտուտ, սահմանված է պետական կառույցների լիազորությունների և պարտականությունների շրջանակ, հստակեցված են տարբեր ոլորտների միջև գործակցության եզրերը: Նման երկրներում գործում է կայուն զարգացման և կատարելագործման, այլ ոչ թե կառուցման և թռիչքային զարգացման մոտեցումը: Պետական առաջնային գործառույթներից են ենթակառուցվածքի անխափանությունը, իրավական դաշտի ստեղծումն ու վերահսկողությունը, երկրի տնտեսա-քաղաքական ռազմավարության մշակումը, պատմա-մշակութային ժառանգության պահպանումը և այլն: Հատկանշական է, որ սրանք բոլորը սերտորեն կապված են զբոսաշրջության հետ, ինչն ուղղակի անխուսափելի է դարձնում պետության ներգրավվածությունը ոլորտին առնչվող խնդիրներում[27]:

Զբոսաշրջության զարգացման համար անհրաժեշտ նախադրյալներից է նաև իրավական արդյունավետ դաշտի առկայությունը: Այս առումով, մասնավոր հատվածը կարող է հանդես գալ միայն խորհրդատուի դերում: Բարձրաձայնելով իրեն ձեռնտու որոշումների կայացման անհրաժեշտության մասին՝ մասնավոր հատվածն այնուամենայնիվ չի կարող հանդես գալ որպես ստեղծող և վերահսկող օղակ: Այդ մենաշնորհը տրված է պետությանը, որի՝ իրավական դաշտ ձևավորելու և վերահսկելու գործառույթը վճռորոշ է հատկապես միջազգային զբոսաշրջության զարգացման համատեքստում՝ հաշվի առնելով միջպետական համաձայնագրերի, միջկառավարական բանակցությունների և այլ երկրների հետ հարաբերությունների կանոնակարգման կարևորությունը: Անգամ ամենագրավիչ զբոսաշրջային ուղղությունը միջազգային զբոսաշրջության գնահատման ցածր ցուցանիշներ կգրանցի, եթե չունենա հասանելի տրանսպորտային միջոցներ, երկիր մուտք գործելու հստակ ընթացակարգ, անվտանգության ապահովման մոդել և այլն:

Զբոսաշրջության իրավական դաշտի ապահովման առավել արդյունավետ մոդելը

[27] Towards New Forms of Public-Private Partnership. The Changing Role, Structure and Activies of National Tourism Administrations. A special report for the World Tourism Organization, UNWTO Madrid Spain, 1996. Forewird.

ձևավորվում է պետական և մասնավոր հատվածների սերտ համագործակցությամբ, ինչի արդյունքում ակնհայտ են դառնում երկուսի հնարավորությունները, միմյանց լրացնելու եզրերը, քննարկվում են մասնավոր հատվածի կարիքները, վեր են հանվում ոլորտի խնդիրները, հնարավորություններն ու սպառնալիքները: Առանց այս համագործակցության առերևույթ բարենպաստ նորարարությունները կարող են ունենալ հակառակ ազդեցություն:

Զբոսաշրջության ոլորտի պետական կարգավորման առանձնահատկությունը դրա համալիր բնույթն է: Այլ կերպ ասած, զբոսաշրջության զարգացման պետական ռազմավարությունն ի հայտ է գալիս տարբեր ոլորտների կառավարման միասնական և համաձայնեցված համակարգի ներդրմամբ, ինչը նշանակում է, որ զբոսաշրջության խնդիրներն ու ծրագրերը պետք է համահունչ արտացոլվեն տարբեր ոլորտներին առնչվող պետական քաղաքականության դրույթներում: Յուրաքանչյուր նախաձեռնություն պետք է դիտարկվի ոչ թե զուտ տվյալ ոլորտի ազդեցության, այլ առավել լայն ու ընդգրկուն ռազմավարության շրջանակում: Այս պատճառով, պետական կարգավորման հստակ մեխանիզմ դժվար է որոշել:

Միջազգային պրակտիկայում գոյություն ունի զբոսաշրջության պետական կարգավորման երեք մոտեցում.

1. Առաջին մոտեցումը ենթադրում է, որ զբոսաշրջության զարգացման խնդիրները լուծվում են շուկայական տնտեսության սկզբունքներով տնտեսվարող սուբյեկտների կողմից: Այս մոտեցման կիրառումը արդյունավետ է զարգացած երկրներում, որտեղ առկա են զարգացած ենթակառուցվածք, զբոսաշրջիկների անվտանգության պահպանման համակարգ, բանկային, ապահովագրական ծառայությունների և բուժսպասարկման բարձր մակարդակ: Այս դեպքում զբոսաշրջության պետական կարգավորման հատուկ մարմինների առկայությունն անպայման չէ: Զբոսաշրջության կարգավորման այսպիսի մոդել ձևավորվել է ԱՄՆ-ում, որը հիմնավորվում է նրանով, որ ԱՄՆ-ը պահպանում է կայուն դիրքերը միջազգային զբոսաշրջային շուկայում, և մասնավոր զբոսաշրջային կազմակերպությունները կարող են ինքնուրույն անցկացնել գովազդային ակցիաներ՝ ի շահ ազգային շուկայի:

2. Երկրորդ մոտեցումը ենթադրում է հատուկ պետական մարմնի ստեղծում, որն

օժտված կլինի զգալի լիազորություններով և ֆինանսական ռեսուրսներով: Տվյալ մոտեցումն արդյունավետ է այն դեպքում, երբ ներգնա զբոսաշրջությունը պահանջում է զբոսաշրջային արտադրանքի և զբոսաշրջային ենթակառուցվածքի ստեղծման և այն բարձր մակարդակի վրա պահելու, օտարերկրյա ներդրումների ներգրավման, փոքր և միջին բիզնեսի աջակցման, միջազգային զբոսաշրջիկների անվտանգության պահպանման համար զգալի միջոցներ: Զբոսաշրջության պետական կարգավորման նման մոտեցումը տարածված է հիմնականում զարգացող և անցումային տնտեսություն ունեցող երկրներում: Այդ երկրներից են Թուրքիան, Թունիսը, Բուլղարիան, Եգիպտոսը և այլ երկրներ, որտեղ գործում են զբոսաշրջության նախարարություններ:

3. Երրորդ մոտեցման էությունը կայանում է նրանում, որ զբոսաշրջության պետական կարգավորումն իրականացնում է բազմաֆունկցիոնալ նախարարությունը (օրինակ՝ Տնտեսական քաղաքականության նախարարությունը Ֆրանսիայում, Տնտեսական զարգացման և առևտրի նախարարությունը Ռուսաստանում, Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը Հայաստանում և այլն): Նախարարության կառուցվածքում ստեղծվում է հատուկ մասնագիտացված ստորաբաժանում, որը զբաղվում է նորմատիվ-իրավական բազայի մշակմամբ և կատարելագործմամբ, միջազգային զբոսաշրջության զարգացման հարցերով, իրականացնում է նախարարությունների, գերատեսչությունների և տարածքային իշխանությունների կոորդինացում, միջազգային զբոսաշրջության զարգացման հարցերով այլ երկրների և միջազգային կազմակերպությունների հետ հաստատում է կապեր, իրականացնում է զբոսաշրջային արտադրանքի տեղեկատվական սպասարկումը և գովազդը միջազգային շուկայում:

Չնայած ձևավորված վերը նշված մոտեցումներին՝ ամեն երկիր ունի զբոսաշրջության կարգավորման իր առանձնահատկությունները: Զարգացող և անցումային տնտեսությամբ երկրները, ինչպես նաև արդյունաբերական զարգացած երկրները շատ ընդհանրություններ ունեն միջազգային զբոսաշրջության քաղաքականության հարցերում: Սակայն նրանք բոլորն էլ ունեն իրենց առանձնահատկությունները ներգնա զբոսաշրջության կարգավորման գործում: Ենթակառուցվածքների զարգացումը, զբոսաշրջային ոլորտում ներդրումների

ներգրավումը և ազգային զբոսաշրջային արտադրանքի առաջխաղացումը համաշխարհային զբոսաշրջային շուկայում այս երկրների զբոսաշրջային իշխանությունների գլխավոր խնդիրներն են:

Օրինակ՝ Մեծ Բրիտանիայում Մշակույթի և սպորտի նախարարությանը կից գործում է Բրիտանական զբոսաշրջային ադմինիստրացիան (British Tourist Authority), որի հիմնական խնդիրն է բրիտանական զբոսաշրջային արտադրանքի առաջխաղացումը արտասահմանում: Դրա համար ադմինիստրացիան իրականացնում է գովազդային միջոցառումներ իր արտասահմանյան գրասենյակների ցանցի, մամուլի, հեռուստատեսության և ռադիոյի միջոցով, կազմակերպում է միջազգային կոնֆերանսներ, առաջարկում է մարքեթինգային և խորհրդատվական ծառայություններ միջազգային զբոսաշրջության հետ կապված, թողարկում է տեղեկատվական նյութեր: Կազմակերպության կազմում զբաղված են 300 աշխատողներ, որոնց միայն 30%-ն է աշխատում Լոնդոնում, մնացածը՝ աշխարհի 26 երկրներում: BTA-ն իր կազմակերպաիրավական ձևով մասնավոր ձեռնարկատիրական ընկերություն է համարվում: BTA-ի գործունեության 2/3-ը ֆինանսավորվում է պետբյուջեից[28]:

Իսպանիայում զբոսաշրջային գործունեությունը համազգային մակարդակով սահմանվում է <<Զբոսաշրջության ոլորտում իրավասության մասին>> օրենքով և <<Մասնավոր զբոսաշրջային ձեռնարկությունների գործունեության մասին>> դեկրետով 1965թ.-ից ի վեր: Բացի համազգային օրենքից, Իսպանիայում 17 ինքնավար շրջաններից յուրաքանչյուրն ունի զբոսաշրջության մասին իր սեփական օրենքը, որի իրավական հիմքը համազգային օրենքն է: Իսպանական զբոսաշրջային օրենսդրությունը կարգավորում է հարաբերությունները զբոսաշրջիկի և զբոսաշրջային արտադրանք վաճառողի միջև, պայմանները, որի դեպքում ֆիզիկական և իրավաբանական անձանց թույլատրվում է զբաղվել զբոսաշրջային գործունեությամբ, զբոսաշրջային ծառայությունների տրամադրման կարգը պետական վերահսկողության միջոցները և իրավախախտումների դեպքում պատասխանատվությունը: 1996թ. ապրիլին Իսպանիայի Պառլամենտը հաստատեց <<Կոմբինացված

[28] http://www.tourvest.ru/articles/article0009

ճանապարհորդությունների մասին>> օրենքը, որով հստակ սահմանվեց ինչպես սպառողների, այնպես էլ տուրիստական գործակալությունների իրավունքներն ու պարտականությունները: Իսպանիայում զբոսաշրջության հարցերով զբաղվում է Առևտրի, զբոսաշրջության և մանր բիզնեսի պետական քարտուղարությունը, որը գործում է Էկոնոմիկայի նախարարության ենթակայության տակ:

Գերմանիայում զբոսաշրջությամբ զբաղվում է Էկոնոմիկայի նախարարության Ազգային զբոսաշրջային կոմիտեն, որի ներկայացուցչությունները գործում են աշխարհի 27 երկրներում:

Ավստրիայում զբոսաշրջային ոլորտը նույնպես կարգավորում է Էկոնոմիկայի նախարարությունը, իսկ Ավստրայի զբոսաշրջային հնարավորությունների գովազդմամբ զբաղվում է Ավստրիական ազգային զբոսաշրջային գրասենյակը, որն ունի ներկայացուցչություններ աշխարհի 26 երկրներում:

Շվեյցարիայում զբոսաշրջության հարցերով զբաղվում է Զբոսաշրջության կենտրոնական տեսչությունը, որի հիմնական խնդիրներն են օտարերկրյա զբոսաշրջիկների ներգրավումը երկիր և երկրի ներսում զբոսաշրջային պահանջարկի ակտիվացումը: Այս կազմակերպության գործունեությունը հիմնականում ֆինանսավորում է Կառավարությունը: Այն ունի 20 ներկայացուցչություններ 4 մայրցամաքներում: Զբոսաշրջության կենտրոնական գործակալությունը, ելնելով համաշխարհային և ներքին զբոսաշրջային շուկաների վիճակից, մշակում է ազգային մարքեթինգային ծրագիր ընթացիկ ժամանակաշրջանի համար:

Չեխիայում զբոսաշրջության հարցերով, զբոսաշրջային ինդուստրիայի զարգացմամբ և զբոսաշրջային գրավչության բարձրացման հարցերով, ինչպես նաև զբոսաշրջության նոր տեսակների առաջխաղացմամբ զբաղվում է Ազգային զբոսաշրջային վարչությունը, որը գտնվում է Չեխիայի Տարածքային զարգացման նախարարության ենթակայության ներքո: Նրա մարքեթինգային ռազմավարությունը առաջին հերթին կողմնորոշված է դեպի այն երկրներ, որտեղից ամենից շատ զբոսաշրջիկներ են այցելում Չեխիա: Ազգային զբոսաշրջային վարչությունը օտարերկրյա և չեխական զբոսաշրջային ընկերությունների համար կազմակերպում է ճանաչողական տուրեր Չեխիայի տարածքով, զբոսաշրջային բիզնեսի մասնագետների

համար նախատեսված վեբ կայք է վարում (www.CzechTourism.cz), էքսկուրսիաներ և հանգստի անցկացման առաջարկների վեբ-կայք է վարում (www.kudyznudy.cz), անցկացնում է աշխարհի ամենահին զբոսաշրջային թեմատիկայով ֆիլմերի փառատոնը, համագործակցում է Չեխիայի տարածքում տեղեկատվական կենտրոնների հետ և այլն[29]:

Զբոսաշրջության ազգային հունգարական գրասենյակը (ԶԱՀԳ) միջազգային շուկայում առաջ է մղում Հունգարիայի զբոսաշրջային առաջարկը՝ այդպիսով ավելացնելով մուտքերը ներքին և ներգնա զբոսաշրջությունից, ստեղծելով նոր աշխատատեղեր, ավելացնելով ՀՆԱ-ն, ապահովելով տարածքային համաչափ զարգացում և այլն: ԶԱՀԳ-ն իր գործունեությունն իրականացնում է գլխավոր գրասենյակի և ներքին ցանցի միջոցով, որը ներառում է Տարածքային մարքեթինգի դիրեկցիաները (ՏՄԴ) և Տարածքային զբոսաշրջային նախագծերի գրասենյակը (ՏԶՆԳ), օտարերկրյա ներկայացուցչությունները և "Tourinform" տեղեկատվական կենտրոնների ցանցը[30]:

Մալթայում զբոսաշրջության վարչության ներկայացուցչությունները գործում են աշխարհի տարբեր երկրներում և շեշտը դնում են տեղեկատվական և խորհրդատվական աջակցմանը այն տուր գործակալություններին, որոնք մասնագիտացված են դեպի Մալթա ուղևորությունների վրա: Վարչությունը նաև կազմակերպում է ցուցահանդեսներ, պրես-տուրեր, հիմնում է մալթյան ակումբներ աշխարհի տարբեր երկրներում, որոնք միավորում են այն ընկերությունները, որոնք ընտրել են Մալթան որպես իրենց հիմնական ուղղություն, մասնակիորեն կոնպենսացնում է նրանց գովազդային ծախսերը[31]:

Զբոսաշրջության ոլորտում զգալի հաջողությունների հասած որոշ զարգացած եվրոպական երկրներ, այդուհանդերձ, ունեն զբոսաշրջության տարածքային զարգացման խնդիրներ: Այդ երկրներից կարելի է առանձնացնել Ֆրանսիան և

---

[29] http://www.czechtourism.com/rus/ru/docs/practical-info/czech-tourism/index.html

[30] http://www.mth.gov.hu/main.php?folderID=900

[31] Белорусский журнал международного права и международных отношений 2004 — № 4 международные экономические отношения, "МЕЖДУНАРОДНЫЙ ОПЫТ РЕГУЛИРОВАНИЯ ВЪЕЗДНОГО ТУРИЗМА", Милена Акопян (http://evolutio.info/index.php?option=com_content&task=view&id=726&Itemid=55)

Իտալիան: Ֆրանսիայում զբոսաշրջության զարգացման գլխավոր առանձնահատկությունն այն է, որ Փարիզի շրջանը այդ հարցում զգալիորեն գերազանցում է երկրի այլ տարածքներին: Հաշվի առնելով այդ փաստը՝ կառավարությունը միջոցներ է կիրառել զսպելու զբոսաշրջիկների հոսքը Փարիզ և խթանելու առավել պրոբլեմային շրջանների զարգացումը: Այդ կապակցությամբ դոտացիաներ են տրամադրվել այդ շրջաններին զբոսաշրջության ոլորտում բարեփոխումներ իրականացնելու համար՝ առաջին հերթին ենթակառուցվածքների զարգացման համար: Պետական տարբեր լծակներ են օգտագործվել տեղի ձեռնարկատիրության խթանման և մասնավոր կապիտալի ներգրավման համար: Զբոսաշրջության տարածքային զարգացման քաղաքականության մշակման գործում կարևոր դեր է խաղում Ֆրանսիայի Ծրագրերի տեղայնացման կոմիտեն: Ֆրանսիայում պետական կարգավորման հարցերով զբաղվում է Տրանսպորտի և հասարակական աշխատանքների նախարարությունը, որի կառուցվածքում գործում են Զբոսաշրջության հարցերով պետքարտուղարությունը և Զբոսաշրջության վարչությունը: Միջազգային շուկայում Ֆրանսիայի՝ որպես զբոսաշրջային կենտրոնի առաջխաղացմամբ զբաղվում է “Maison de la France” ասոցիացիան, որի գործունեության 60%-ը ֆինանսավորվում է պետբյուջեից[32]:

Իտալիան ունի բարդ տարածքային կառուցվածք, որն արտահայտվում է նրա հյուսիսի և հարավի սոցիալ-տնտեսական մակարդակների էական տարբերությամբ: Հետամնաց շրջաններում զբոսաշրջության զարգացման կարգավորման նպատակով ստեղծվել է հատուկ գործակալություն, որն ի սկզբանե ստեղծված էր ենթակառուցվածքների զարգացման աջակցման համար, այնուհետև նրան փոխանցվեցին արտադրական նախագծերի ֆինանսավորման և կարգավորման, վարկային և հարկային խթանման քաղաքականություն վարելու լիազորություններ: 1983թ. ընդունվեց զբոսաշրջության և հյուրանոցային ոլորտի կատարելագործման և զարգացման հիմնական օրենքը: Զբոսաշրջության դեպարտամենտը մտնում է Արտադրական գործունեության նախարարության կազմի մեջ: Դեպարտամենտի հիմանական գործառույթներից են՝ տարածքային զբոսաշրջային

[32] http://www.tourvest.ru/articles/article0009

ադմինիստրացիաների կարգավորումը, իրավանորմատիվային ակտերի մշակումը, վիճակագրական տվյալների ուսումնասիրումն ու մշակումը, ինչպես նաև միջազգային գործունեությունը (միջկառավարական համաձայնագրեր, միջազգային կազմակերպությունների և ԵՄ-ի հետ հարաբերությունները): Տեղական զբոսաշրջային ադմինիստրացիաների իրավասությունները նույնպես բավականին լայն են: Նրանք իրենց տարածքներում զբաղվում են զբոսաշրջային գործունեության լիցենզավորման բոլոր հարցերով, իրականացնում են հյուրանոցների դասակարգումը, իրավունք ունեն գովազդել և առաջարկել իրենց զբոսաշրջային արդյունքները երկրի ներսում և արտասահմանում: Այնուամենայնիվ Իտալիան միջազգային զբոսաշրջային շուկայում ներկայացնելու գլխավոր դերը պատկանում է Զբոսաշրջության ազգային վարչությանը, որի հիմնական գործառույթներն են գովազդատեղեկատվական աշխատանքները, մարքեթինգային ուսումնասիրությունները, տեղական զբոսաշրջային ադմինիստրացիաների միջազգային գործունեության կարգավորումը: Այն ենթարկվում է Զբոսաշրջության դեպարտամենտին և ամբողջությամբ ֆինանսավորվում է պետբյուջեից:

Տարածքային զարգացման ազգային ծրագրերի հետ մեկտեղ գործում են նաև զբոսաշրջային տարածքային զարգացման ծրագրեր վերազգային մակարդակի վրա: Եվրամիության շրջանակներում նման քաղաքականություն վարում են ԵՄ-ի նախարարների խորհրդին կից Տարածքային քաղաքականության կոմիտեն և Տարածքային զարգացման եվրոպական ֆոնդը, որը գործում է ԵՄ բյուջեի շրջանակներում: Եվրոպական երկրներ միջազգային զբոսաշրջիկների ներգրավման գործում ոչ պակաս նշանակություն ունի Զբոսաշրջության եվրոպական կոմիսիան, որը ստեղծվել է 1948թ.-ին Եվրոպան համաշխարհային շուկայում որպես զբոսաշրջային ուղղություն գովազդելու նպատակով: Այս կազմակերպության կազմի մեջ են մտնում ԵՄ երկրների առաջատար զբոսաշրջային կազմակերպությունները: Զբոսաշրջության եվրոպական կոմիսիայի գլխավոր առավելությունն ընթացիկ ծախսերի ցածր մակարդակն է, որը թույլ է տալիս միջոցների հիմնական մասը ներդնել զբոսաշրջային կազմակերպությունների գործունեության մեջ արտասահմանում:

ԵՄ զբոսաշրջային քաղաքականությունն ուղղված է անդամ երկրներում

զբոսաշրջության համաչափ զարգացմանը, ինչի համար մշակվել են ընդհանուր միջոցառումների գերակա ուղղությունները: Այդ միջոցառումների շարքին են պատկանում մաքսային և սահմանապահ հսկման պարզեցումը, զբոսաշրջիկների անվտանգության բարձրացումը և նրանց պաշտպանությունը ապակողմնորոշող գովազդներից, տեղեկացումը իրենց սոցիալական իրավունքների մասին, տարբեր երկրների հարկային քաղաքականության ներդաշնակությունը, որակավորման և լիցենզավորման համընդհանուր կարգի ընտրությունը, արձակուրդային ժամանակաշրջանների համաձայնեցված բաժանումը, որը կթուլացնի լարվածությունը բարձր (պիկ) սեզոններին :

Ըստ ՋՀԿ կանխատեսումների՝ զբոսաշրջային ժամանումները 2020թ. կաճեն մինչև 1.6 մլրդ: Որպես բազային տարի վերցված է 1995թ: 2020թ. Եվրոպան կմնա որպես ամենաշատ զբոսաշրջիկներ գրավող տարածաշրջան, սակայն 1995-2020թթ. Եվրոպայի և Ամերիկայի աճի տեմպերը կլինեն ամենացածրը (3% և 3.9%), իսկ մնացած տարածաշրջանները ցույց կտան աշխարհում զբոսաշրջության աճի միջին տեմպից (4.1%) բարձր ցուցանիշ (Տես հավելված 1, հավելված 2):

Ներկայումս զբոսաշրջությունն առաջատար տեղ է զբաղեցնում ապրանքների և ծառայությունների համաշխարհային արտահանման ծավալում: Զբոսաշրջային այցելությունների քանակին զուգահեռ աճում են նաև դրանից ստացվող եկամուտները՝ գերազանցելով այլ ապրանքների և ծառայությունների արտահանումից ստացվող եկամուտները: Ըստ կանխատեսումների՝ 2020 թվականին համաշխարհային եկամուտները զբոսաշրջությունից կկազմեն 2 տրիլիոն դոլար:

Վիճակագրական տվյալները փաստում են, որ զբոսաշրջության մասնաբաժինը ներդրումների ընդհանուր ծավալում կազմում է մոտ 7%, համաշխարհային սպառողական ծախսերի 11%-ը, բոլոր հարկային մուտքերի 5%-ը և համաշխարհային ծառայությունների առևտրի մեկ երրորդը:

ՄԱԿՋՀԿ-ի կանխատեսումների համաձայն՝ արմատապես կփոխվեն առավել ճանաչված զբոսաշրջային ուղղությունները: Սպասվում է, որ առավել թվով այցելուներ կայցելեն Չինաստան: 2020թ.-ին Չինաստան կայցելի մեր երկրագնդի յուրաքանչյուր 11-րդ զբոսաշրջիկը: ՄԱԿՋՀԿ-ի փորձագետները գտնում են, որ ԱՄՆ-ը կմնա երկրորդ

տեղում, իսկ Ֆրանսիան կտեղափոխվի առաջինից երրորդ տեղ: Սյանգանը (Հոնգ-Կոնգ), առաջ անցնելով Իտալիայից և Մեծ Բրիտանիայից, գրավում է հինգերորդ տեղը: Կանխատեսվում է, որ տասն ամենահայտնի ուղղությունների ցանկում կընդգրկվի Ռուսաստանը՝ 2020թ.-ին առաջարկելով 47.1 մլն. ժամանում, իսկ մեկնումների թիվը 1.54 անգամ կգերազանցի ժամանումների թիվը (Տես հավելված 3)[33]: Ինչպես ամեն կանխատեսման, այնպես էլ այս կանխատեսման ճշմարտացիությունը կստուգվի և կհաստատվի ժամանակով:

[33] Tourism: 2020 Vision. - Madrid: WTO, 2012, (www.unwto.org)

ԳԼՈՒԽ 2. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

2.1. Զբոսաշրջության արդի վիճակը ՀՀ-ում

Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջությունն այսօր բավական կայուն տեմպերով է զարգանում: Վերջին տարիներին այն դարձել է հանրապետության առավել արագ և դինամիկ զարգացող ճյուղերից մեկը: ՀՀ զբոսաշրջության ոլորտը զգալի աճ է ունեցել ներգնա զբոսաշրջային այցելությունների թվի և ստացված եկամուտների առումով:

Այսպիսով՝ 2009թ-ին Հայաստան են այցելել 575.281 միջազգային զբոսաշրջիկներ: Չնայած համաշխարհային տնտեսական ճգնաժամին՝ 2009-ին Հայաստանը գրանցեց զբոսաշրջային այցելությունների 3% աճ, մինչդեռ աշխարհում միջազգային զբոսաշրջային այցելությունները նվազել էին 4.2%-ով: 2010-ին տնտեսության վերականգնումը ակնհայտորեն արտահայտվեց թե աշխարհում գրանցված 6.7% այցելությունների աճով, թե Հայաստանում գրանցված 18.9% աճով. 2010թ-ին Հայաստան այցելած զբոսաշրջիկների թիվը կազմել է 687.229: Նույն ժամանակաշրջանում զբոսաշրջության նպատակով հանրապետությունից մեկնել է 648.854 մարդ կամ 2009թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ ցուցանիշի աճի տեմպը կազմել է 12.6%: 2011թ. հունվար-դեկտեմբերին հանրապետություն են ժամանել 757.935 զբոսաշրջիկներ կամ 2010թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ ցուցանիշը աճել է 10.3.%[34]: Նույն ժամանակաշրջանում զբոսաշրջության նպատակով հանրապետությունից մեկնել է 714.953 մարդ կամ 2010թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ ցուցանիշը աճել է 10.2.%-ով[35]: 2012թ. հունվար-սեպտեմբեր հանրապետություն են ժամանել 603.074 զբոսաշրջիկներ, 2011թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ ցուցանիշը աճել է 9.4.%: Նույն ժամանակաշրջանում զբոսաշրջության նպատակով հանրապետությունից մեկնել է 608.175 մարդ կամ 2011թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ ցուցանիշը աճել է 11.4.%: 2012թ հունվար-

[34](www.unwto.org)
[35] http://armstat.am

դեկտեմբեր ամիսների ընթացքում հանրապետություն են ժամանել 843.330 զբոսաշրջիկներ, 2011թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ ցուցանիշը աճել է 11.3.%:

2015 թվականին Հայաստան է այցելել 1.192.120 միջազգային զբոսաշրջիկ՝ 1.0 % պակաս, քան 2014 թվականին[36].

2015 թ. ընթացքում ներգնա զբոսաշրջային այցելությունների քանակի նվազումը հիմնականում պայմանավորված է Ռուսաստանի Դաշնությունից և Վրաստանից այցելությունների նվազմամբ:

2015թ. 9 ամիսների տվյալներով ՌԴ-ից արտագնա զբոսաշրջիկների թիվը 2014թ. նույն ժամանակահատվածի հետ համեմատ նվազել է 31%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է ռուսական ռուբլու արժեզրկմամբ:

Ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության վերջին տվյալների՝ 2016թ. հունվար-սեպտեմբերին Հայաստան է ժամանել 1 969 010 զբոսաշրջիկ: Նրանցից միայն 136 816-ն են հանգրվանել հյուրանոցներում, մնացածը՝ բարեկամի կամ հարազատի տանը, վարձով տրվող բնակարաններում և այլն:



Սույն գրաֆիկում ներկայացված է 2009-2016թթ ընթացքում Հայաստան այցելած զբոսաշրջիկների թվի փոփոխությունը՝ աճող գրաֆիկի տեսքով:

Ռուսաստանը և Վրաստանը Հայաստանի ներգնա զբոսաշրջային շուկաներից

[36] http://www.mineconomy.am/arm/39/gortsaruyt.html

համապատասխանաբար 1-ինն ու 2-րդն են, որտեղից այցելություններն ընդհանուր այցելություններին համապատասխան շուրջ 45 և 27 %-ն են կազմում:

Նպատակային շուկա հանդիսացող որոշ այլ երկրներից Հայաստան այցելությունների աճ է արձանագրվել, մասնավորապես՝ մոտ 25%-ով Իրանից, մոտ 38%-ով ԱՄԷ-ից, շուրջ 5 անգամ Իրաքից, մոտ 16 %-ով Կանադայից և 42% -ով ԱՄՆ-ից[37]:

2015թ. հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում սոցիալական փաթեթի հանգստի ապահովման ծառայության շրջանակներում հաշվառված 52 զբոսաշրջային օպերատորների կողմից կնքվել է 49.801 պայմանագիր, իսկ հանգստի ապահովման ծառայությունից օգտված շահառուների (ներառյալ անմիջական ընտանիքի անդամների) թիվը կազմել է շուրջ 98.000:

2015թ. հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում կնքված պայմանագրերի քանակի աճը 2014թ. նույն ժամանակահատվածի նկատմամբ կազմել է 4.3%:

2015 թ., համաձայն ՀՀ մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի հետ համագործակցությամբ հավաքագրված տվյալների՝ ՀՀ տարածքում գործում են 337 հյուրանոցային տնտեսության օբյեկտներ (հյուրանոց, մոթել, հյուրանոցատիպ հանգրվան, առողջարան, պանսիոն, հանգստյան կամ մասնագիտացված տուն, զբոսաշրջային բնակատեղի (hostel), ճամբար՝ ըստ<<Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված տեսակների), որոնցից 36 %-ը Երևանում և 64%-ը ՀՀ մարզերում՝

- 122-ը Երևանում՝ ապահովելով 3467 համար և 5855 ննջատեղ,
- 215-ը մարզերում՝ ապահովելով 6710 համար և 14272 ննջատեղ:

Հայաստանում գործող հյուրանոցային տնտեսության օբյեկտների հյուրանոցային համարների և ննջատեղերի ընդհանուր քանակը կազմում է համապատասխանաբար 10177 և 20127[38]:

Համեմատության համար նշենք, որ 2000 թվականին, որը պայմանականորեն համարում ենք Հայաստանի Հանրապետության զբոսաշրջության վիճակագրության

[37] http://www.mineconomy.am/arm/39/gortsaruyt.html
[38] http://armstat.am/am/?nid=80&id=1742

համար ստարտային տարի, Հայաստանում գործում էին 3-4 հյուրանոց՝ բոլորը Երևան քաղաքում: Այդ ժամանակ զբոսաշրջային տներ, որպես այդպիսիք, չեն եղել:

Առաջիկայում հանրապետությունում նախատեսվում է շահագործման հանձնել մի քանի հյուրանոց՝ ապահովելով լրացուցիչ ավելի քան 500 հյուրանոցային համար: Դրանց մի մասը հավակնում է դասվել միջազգային հեղինակավոր հյուրանոցային խմբերի՝ Accor, Windham և այլնի շարքին:

Հայաստանում գործող հյուրանոցային տնտեսության օբյեկտների հյուրանոցային համարների և ննջատեղերի ընդհանուր քանակը կազմում է համապատասխանաբար 9805 և 19600:

Բացի վերոնշյալ հյուրանոցային տնտեսության օբյեկտներից Հայաստանում (հիմնականում ՀՀ մարզերում և գյուղական համայնքներում) գործում են ավելի քան 200 զբոսաշրջային տներ (B&B):

2013թ.-ին շահագործման են հանձնվել հետևյալ հյուրանոցները (464 համար, 641 ննջատեղ).

1. «**Իմպերիալ պալաս**» հյուրանոցը Երևանում (**74** համար, 156 ննջատեղ),
2. «**Գոլդեն Փելիս**» հյուրանոցը Ծաղկաձորում **(120** համար, 240 ննջատեղ),
3. «**Նացիոնալ**» հյուրանոցը Երևանում **(57** համար, 66 ննջատեղ),
4. «**Քեֆո**» հյուրանոցը Հաղպատում (**10** համար, 28 ննջատեղ),
5. «**Նորդ Ավենյու**» հյուրանոցը Երևանում (**24** համար, 46 ննջատեղ),
6. «**Ռոյալ Պլազա**» հյուրանոցը Երևանում **(84** համար,160 ննջատեղ),
7. **«HYATT» խմբի HYATT PLACE** ցանցի հյուրանոցը Երևանում (**95** համար, 190 ննջատեղ):

2014 թվականին շահագործման են հանձնվել հետևյալ հյուրանոցային տնտեսության օբյեկտները (493 համար, մոտ 1040 ննջատեղ).

1. **«Ռեպուբլիկա»** հյուրանոցը Երևանում (56 համար, 112 ննջատեղ),
2. **«Դայմոնդ Հաուս»** հյուրանոցը Երևանում (33 համար, 65 ննջատեղ),
3. **«Փարիզ»** հյուրանոցը Երևանում **(**65 համար, 130 ննջատեղ),
4. **«Պանարամա Ռեզորտ»** հյուրանոցը Երևանում (12 համար, 100 ննջատեղ),
5. «**Մուլտի Գրանդ Հոթել**» հյուրանոցը, Երևանում (88 համար, 176 ննջատեղ),

6. «**Էլեգանտ հոթել և ռեզորթ**» հյուրանոցը, Ծաղկաձորում (51 համար, 105 ննջատեղ),

7. «**Արցախ**» հյուրանոցը Երևանում (36 համար, 80 ննջատեղ),

8. «**Կովկաս**» հյուրանոցը Կոտայքի մարզում (46 համար, 96 ննջատեղ),

➢ Վերաբացվել է «**Մինոտել**» հյուրանոցը Երևանում (50 համար, 110 ննջատեղ),

➢ Երևանի **«Armenia Marriott»** հյուրանոցը համալրվել է 33 համարով (66 ննջատեղ)

2015 թվականին շահագործման են հանձնվել 4 նոր հյուրանոցներ, որոնցից երկուսը միջազգային հեղինակավոր հյուրանոցային ցանցերի պատկանող[39]***:***

1. **«Օպերա Սյուիթ»** հյուրանոցը Երևանում (106 համար, 212 ննջատեղ),
2. **«HYATT» խմբի «HYATT PLACE»** ցանցի հյուրանոցը Ջերմուկում (92 համար, 200 ննջատեղ),
3. **«Double Tree by Hilton Yerevan»** հյուրանոց Երանում (176 համար, 221 ննջատեղ)
4. **«Գայանե» հյուրանոցը** Հաղպատում (18 համար, 30 ննջատեղ)

Հատկանշական է, որ նոր բացված հյուրանոցներից երկուսը մարզերում են:

Բացի այդ, 2015 թվականի փետրվարին Երևանի **«Golden Palace»** հյուրանոցի կառավարումը պայմանագրով հանձնվել է **«Radisson Blue»** միջազգային հեղինակավոր հյուրանոցային ցանցին:

2017 թվականի տվյալներով՝ Հայաստանում հյուրանոցային օբյեկտների քանակը 340 է: Ըստ Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության՝ 2016 թվականի սեպտեմբեր ամսվա դրությամբ Հայաստանում գործում է 20 որակավորված հյուրանոցային տնտեսության օբյեկտ, որից 13-ը՝ հյուրանոց է, 7-ը՝ II և III կարգ ունեցող զբոսաշրջային տներ:

ՀՀ ժամանած զբոսաշրջիկների մեծամասնությունը եկել են ՌԴ-ից, որը պայմանավորող հիմնական գործոններն են տվյալ երկրում հայերի համեմատաբար մեծ համայնքների առկայությունն ու Հայաստանին մոտ գտնվելը: Զբոսաշրջիկների բացարձակ թվաքանակի աճի ամենաբարձր տեմպը նկատվում է Միացյալ

[39] http://www.mineconomy.am/arm/39/gortsaruyt.html

Թագավորությունից, իսկ տեմպի զգալի անկում է գրանցվել Թուրքիայից ժամանող զբոսաշրջիկների թվաքանակում:

Ժամանումների ընդհանուր թվաքանակի մեջ հանգստի և ժամանցի նպատակով ճանապարհորդող զբոսաշրջիկների մասնաբաժինը բավականին ցածր է, համաձայն տարբեր գնահատականների այն կազմում է միջինում 40,000-60,000 տարեկան այցելություն 11-12 օր կայանման միջին տևողությամբ[40]:

Հայաստան այցելողների մեծամասնությունը տղամարդիկ են (60%), միջին տարիքը՝ 42: Հիմնական տարիքային խումբը 36-55 տարեկան զբոսաշրջիկներն են՝ կազմելով զբոսաշրջիկների 55%-ը: Նրանց մոտ նաև ավելի շատ է գործնական կամ աշխատանքի, բուժման, ինչպես նաև ընկերներին ու հարազատներին այցելության նպատակով ուղևորությունների մասը: 18-35 տարիքային խմբին պատկանող այցելուները կազմում են բոլոր զբոսաշրջիկների 28%-ը: Այս խմբում ավելի մեծ է կրթության, սպորտային և մշակութային միջոցառումների մասնակցության նպատակով այցելածների թիվը մյուս խմբերի համեմատ: 55 և ավելի տարիքային խմբում ընդգրկված այցելուները կազմում են բոլոր զբոսաշրջիկների ընդամենը 15.7%-ը[41]: Նրանց այցելության հիմնական նպատակներն են բուժումը, հանգիստը, ժամանցը և այցելությունն ընկերներին ու հարազատներին:



Վերագրյալ գրաֆիկում կարող եք տեսնել այն տարիքային խմբերը, ովքեր այցելում են Հայաստան տարբեր կարիքներից ելնելով՝ բուժում, հանգիստ,կրթություն:

[40] http://www.mineconomy.am/arm/39/gortsaruyt.html
[41] http://www.mineconomy.am/arm/39/gortsaruyt.html

Միջազգային ժամանումների մոտ 60% կազմում են Սփյուռքահայերը, որոնք մեծապես նպաստում են Հայաստանի զբոսաշրջության ոլորտի զարգացմանը:

Զբոսաշրջության ենթակառուցվածքների զարգացման համար մեծածավալ ներդրումներ են կատարվել, կառուցվել են նոր հյուրանոցներ և ռեստորաններ, կատարվում են կապիտալ ներդրումներ քաղաքաշինության և զվարճանքի օբյեկտների ոլորտում: 2011թ. սեպտեմբերին շահագործման է հանձնվել Զվարթնոց օդանավակայանի հանրային գոտու նոր տերմինալը (52000 քմ), որը նախկին մոտ մեկ միլիոնի փոխարեն կարող է սպասարկել տարեկան մինչև 3 մլն ուղևորի: Իրագործվում է Ծաղկաձորը միջազգային չափանիշներին համապատասխանող զբոսաշրջային կենտրոն դարձնելու նպատակային խնդիրների լուծման ծրագիրը:

Վերջին տարիներին զբոսաշրջության ոլորտի մարքեթինգային քաղաքականության շրջանակներում ծրագրային միջոցառումները հիմնականում ուղղված են եղել համաշխարհային շուկայում Հայաստանի, որպես զբոսաշրջության համար բարենպաստ և գրավիչ երկրի, նկարագրի ձևավորման շարունակական կատարելագործմանը: Հայրենական զբոսաշրջային արդյունքը ներկայացվել է մի շարք հեղինակավոր միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսներում և տոնավաճառներում, որոնք մեծ հետաքրքրություն են առաջացնում զբոսաշրջության ոլորտի գործարարների և պոտենցիալ զբոսաշրջիկների շրջանում՝ Բեռլինում, Լոնդոնում, Փարիզում, Ռիմինիում (Իտալիա), Միլանում, Թբիլիսիում, Հռոմում, Մադրիդում, Տոկիոյում, Ուտրեխտում (Հոլանդիա) և Մոսկվայում անցկացվող միջազգային ամենամյա զբոսաշրջային ցուցահանդեսներում և տոնավաճառներում, որը լուրջ խթան է Հայաստան այցելող միջազգային զբոսաշրջիկների թվի աճի համար:

Մշակվել, տպագրվել և տարածվել են բազմատեսակ և բազմալեզու գովազդատեղեկատվական նյութեր Հայաստանի զբոսաշրջային գրավչությունները պահանջարկի շուկաներում ներկայացնելու և զբոսաշրջիկներին անհրաժեշտ և ճշգրիտ տեղեկատվությամբ նախապես ապահովելու նպատակով: Ճանաչողական նպատակներով կազմակերպվում են տարբեր երկրներից ժամանած զբոսաշրջային օպերատորների և լրագրողների այցելություններ: Կազմակերպվել է ռուսական «Վոյաժ» (“Вояж”) և «Ին Ստայլ» (“In Style”) ամսագրերի լրագրողների և

լուսանկարիչների, «Մակլովիչի ճանապարհորդությունները» լեհական առաջատար հեռուստածրագրի ներկայացուցիչների այցը Հայաստան: Ճանաչողական այցերի արդյունքում տպագրվել են մի շարք հոդվածներ, որոնք տարբեր երկրներում ներկայացրել են Հայաստանի զբոսաշրջային գրավչությունները՝ հետաքրքրություն առաջացնելով Հայաստան այցելելու համար:

2008 թվականին ՀՀ կառավարության 17.04.2008թ. N412-Ն որոշմամբ իսպանական «Բազզ Բիզնես» (“Buzz Business”) և «Տրանսգլոբ» (“Transglobe”) ընկերությունների կողմից նկարահանվեց Հայաստանի զբոսաշրջային գրավչությունները ներկայացնող «Հայաստանը՝ Նոյի երկիր» վավերագրական ֆիլմը, որը թարգմանվել է երեք լեզուներով և հեռարձակման շրջանառության մեջ մտել 2009 թվականից: 2010թ հոկտեմբերի 16-ին «Տաթև» զբոսաշրջային կենտրոնի զարգացման ծրագրի շրջանակներում Հալիձոր-Տաթև ճոպանուղու բացման միջոցառումը լուսաբանվել է Euronews հեռուստաալիքով՝ High Tech և Focus հաղորդաշարերով:

2011 թվականին ակտիվացել են նաև զբոսաշրջության բնագավառում միջազգային համագործակցությունը և համաշխարհային զբոսաշրջային արդյունաբերությանը Հայաստանի ինտեգրման գործընթացը: ՀՀ-ի զբոսաշրջային արդյունքը շարունակաբար ներկայացվում է միջազգային ճանաչում ստացած զբոսաշրջային ցուցահանդես-տոնավաճառներում Գերմանիայում, Իտալիայում, Վրաստանում, Ճապոնիայում, Մեծ Բրիտանիայում, Միացյալ Արաբական Էմիրություններում, Հոլանդիայում: Դեռ 2006 թ. ՀՀ-ում կազմակերպվել է «Խոսող քարերի երկիր» միջազգային ցուցահանդեսը: Զբոսաշրջության զարգացման ծրագրի շրջանակներում շարունակվում է ոլորտի գովազդատեղեկատվական համակարգի զարգացման գործընթացը, տպագրվում են գովազդային նյութեր, ապահովվում է մասնակցությունը միջազգային ցուցահանդեսներին:

2012թ. Հայաստանը ներկայացվել է հետևյալ հեղինակավոր միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսներում.

2012թ. հունվարին Նիդերլանդների ՈԻտրեխտ քաղաքում կայացած «Vakantieburs 2012» միջազգային ցուցահանդեսում 5 զբոսաշրջային ընկերությունների մասնակցությամբ:

2012թ. մարտին Գերմանիայի մայրաքաղաք Բեռլինում կայացած «ITB12» զբոսաշրջային միջազգային ցուցահանդեսում 17 զբոսաշրջային ընկերությունների մասնակցությամբ:

2012թ. մարտին ՌԴ Մոսկվա քաղաքում կայացած «MITT12» միջազգային ցուցահանդեսում 8 զբոսաշրջային ընկերությունների մասնակցությամբ:

2012թ. սեպտեմբերին Փարիզում կայացած կայացած «Top Resa 2012» միջազգային ցուցահանդեսում, որին մասնակցել են Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ներկայացուցիչները:

2012թ. սեպտեմբերին Ճապոնիայի Տոկիո քաղաքում կայացած «JATA 2012» միջազգային ցուցահանդեսում և միջազգային զբոսաշրջային այլ համաժողովներում:

Հայկական պատվիրակությունը մասնակցել է Լոնդոնում անցկացվող «WTM 2012» զբոսաշրջային միջազգային ցուցահանդեսին:

ՀՀ Էկոնոմիկայի նախարարության (ներկայում Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն) աջակցությամբ անցկացվել են արդեն ավանդական և ժողովրդական դարձած հետևյալ փառատոնները.

2012թ. սեպտոմբերի 8–ին Լոռու մարզի Ախթալա քաղաքում Հայոց ավանդական տոնածիսական ուտեստների մրցույթ-փառատոնը,

2012թ. հոկտոմբերի 6–ին ՀՀ Վայոց Ձորի մարզի Արենի գյուղում Գինու փառատոնը[42]:

2015 թվականին.

●Հայաստանը ներկայացվել է միջազգային հեղինակավոր լրատվամիջոցներով և վարկանիշային կայքերով (Travel channel, Travel channel Europe, France 5, Ushuaia TV, Travel.ru, National Geographic)

●Հայաստանը մասնակցել է 7 միջազգային հեղինակավոր ցուցահանդեսների (Մադրիդում, Մոսկվայում, Փարիզում, Բեռլինում, Ռիմինիում, Լոնդոնում,Վարշավայում):

●2015 թվականի ընթացքում կազմակերպվել են ավելի քան 170 լրագրողների ու զբոսաշրջային օպերատորների ճանաչողական այցեր Հայաստան (Իսրայելից,

[42] /www.mineconomy.am/

Ռուսաստանից, Իտալիայից, Չինաստանից)

●Պետական աջակցություն է ցուցաբերվել ՀՀ մարզերում գործող 5 զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների

ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ԴԻՎԵՐՍԻՖԻԿԱՑՈՒՄ

● Մշակվել և միջազգային ինտերնետային կայքերում տեղադրվել են 40 նոր քայլարշավային երթուղիներ ,

● 2015 թվականի ընթացքում Հայաստանի տարբեր մարզերում կազմակերպվել են 6 ավանդական փառատոններ

ԻՐԱՎԱՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԴԱՇՏ

●Մշակվել և ՀՀ Կառավարություն է ներկայացվել զբոսաշրջության ոլորտը կարգավորող օրենսդրական փաթեթ՝ «Զբոսաշրջության մասին» ՀՀ նոր օրենքի նախագիծը, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին», «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթները:

●2015 թվականի հուլիսի 30-ին ՀՀ Կառավարության կողմից հաստատվել է «Զբոսաշրջային ավտոբուսի որակավորման կարգը, ընթացակարգը, չափանիշները, վկայականի և նշանի ձևերը հաստատելու մասին» որոշումը:

●ՀՀ կառավարության արձանագրային որոշմամբ հավանություն է տրվել զբոսաշրջության նպատակով քարանձավների արդյունավետ օգտագործումն ապահովող միջոցառումների ծրագրին:

●2015թ. հոկտեմբերի 2-ին ուժի մեջ է մտել ՀՀ էկոնոմիկայի նախարարի (ներկայում Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի) 2015թ. օգոստոսի 21-ի «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի՝ 2015 թվականի մարտի 19-ի N 170-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 1173-Ն հրամանը:

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Իրականացվել են միջազգային համագործակցության զարգացմանն ուղղված մի

շարք միջոցառումներ՝ մասնավորապես համաձայնագրերի, հուշագրերի, գործնական ծրագրերի նախագծերի մշակում, հաստատում, մի շարք երկրների հետ համագործակցության առաջարկների ներկայացում, զբոսաշրջության բնագավառում մասնագիտացված միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների, ինչպես նաև այլ միջազգային գործընկերների հետ համագործակցություն:

2015 թվականի սեպտեմբերի 11-ից 18-ը Կոլումբիայի Հանրապետությունում կայացած ՄԱԿ ԶՀԿ Գլխավոր ասամբլեայի 21-րդ նստաշրջանի շրջանակներում ՄԱԿ ԶՀԿ Գլխավոր քարտուղարի, գործադիր տնօրենի, Եվրոպայի տարածաշրջանային տնօրենի և ՄԱԿ ԶՀԿ աֆիլացված անդամների գործադիր տնօրենի հետ քննարկումների արդյունքում ձեռք է բերվել պայմանավորվածություն 2016 թվականին հոկտեմբերին ՄԱԿ ԶՀԿ աֆիլացված անդամների տարեկան 37-րդ համաժողովը Հայաստանում անցկացնելու վերաբերյալ, որին կմասնակցի նաև ՄԱԿ ԶՀԿ Գլխավոր քարտուղարը:

Այսպիսով, ՀՀ տարեցտարի բարելավում է զբոսաշրջության ոլորտում իր ցուցանիշները, և պետության կողմից էլ լուրջ քայլեր են արվում այս ոլորտի համար: ՀՀ պատվիրակության պարբերաբար մասնակցությունը միջազգային ցուցահանդեսներին հնարավորություն է տալիս, որ Հայաստանը միջազգային ճանաչում ձեռք բերի տարբեր երկրներում որպես զբոսաշրջային երկիր:

2.2. Զբոսաշրջության պետական քաղաքականության հիմնական սկզբունքները, գերակա ուղղություններն ու նպատակները ՀՀ-ում

Համաձայն 1989թ-ի ապրիլին Հաագայում զբոսաշրջության միջպառլամենտական համաժողովին ընդունված դեկլարացիայի՝ զբոսաշրջությունը պետք է պլանավորվի պետական իշխանությունների, ինչպես նաև իշխանությունների և զբոսաշրջային ինդուստրայի կողմից՝ համալիր և հաջորդական մեթոդով: Հաշվի առնելով զբոսաշրջության միջազգային մասշտաբները՝ դրա ներդաշնակ զարգացման համար անհրաժեշտ է միջազգային համագործակցություն ինչպես համաշխարհային, այնպես էլ տարածքային հիմքերի վրա՝ ուղիղ միջպետական համագործակցության և

միջազգային կազմակերպությունների միջոցով, ինչպիսին է օրինակ ԶՀԿ-ն, ինչպես նաև մասնավոր զբոսաշրջային ոլորտի տարբեր բաղադրիչների միջև՝ ոչ պետական և մասնագիտացված կազմակերպությունների միջոցով[43]:

Զբոսաշրջության բնագավառի իրավական կարգավորումը պետական քաղաքականության հիմնախնդիրներից է: ՀՀ Կառավարությունը տնտեսության պետական զարգացման հայեցակարգային մոտեցումներում մեծ տեղ է հատկացնում զբոսաշրջության բնագավառում նպատակաուղղված պետական քաղաքականություն վարելուն: ՀՀ կառավարության կողմից վերջին տարիներին ընդունվել են զբոսաշրջային և հարակից ոլորտները կարգավորող մի շարք օրենսդրական փաստաթղթեր, որոնց ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ՀՀ Կառավարությունը զբոսաշրջությունը համարում է պետական քաղաքականության գերակա ուղղություններից մեկը և համապատասխան նորմատիվ-օրենսդրական դաշտի ձևավորմամբ նպաստում է այդ ոլորտի կայուն զարգացմանը: ՀՀ Կառավարության կողմից 2000թ-ին հաստատվել է «ՀՀ զբոսաշրջության զարգացման հայեցակարգը» և «ՀՀ զբոսաշրջության զարգացման պետական ծրագիրը», իսկ 2003 թ. դեկտեմբերի 17-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից հաստատվել են «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» և «Լիցենզավորման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքները: ՀՀ Կառավարությունը հաստատել է նաև «ՀՀ տարածքում կուրորտային առողջարանների և հանգստյան տների զարգացման հայեցակարգը» և «ՀՀ տարածքում կուրորտային առողջարանների և հանգստյան տների զարգացման պետական ծրագիրը», որտեղ համակարգված ձևով ներկայացված է ՀՀ տարածքում առողջարանային զբոսաշրջության զարգացման ռազմավարությունը: Պետությունն իրականացրել է զբոսաշրջության ոլորտի զարգացումը խթանող մի շարք միջոցառումներ, մասնավորապես ՀՀ Ազգային ժողովի վավերացրած հարկային փաթեթում կատարված փոփոխությունների շնորհիվ ԱԱՀ-ից ազատվել է ներգնա զբոսաշրջությունը: ՀՀ զբոսաշրջության ոլորտի պետական քաղաքականությունը մշակում և իրականացնում է ՀՀ Կառավարության լիազորած պետական կառավարման

[43] Հաագայի դեկլարացիա, 1989թ.

մարմինը՝ ՀՀ Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը՝ զբոսաշրջության պետական կոմիտեի (նախկինում՝ զբոսաշրջության վարչության) միջոցով: Այն մշակում և Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանն է ներկայացնում զբոսաշրջության, զբոսաշրջային երթուղիների, տարածաշրջանների, կենտրոնների, ռեսուրսների, մարդկային ռեսուրսների զարգացման և ներդրումային պետական ծրագրեր, ինչպես նաև զբոսաշրջության մարքեթինգային ծրագրեր: Բացի այդ, մշակում և ՀՀ Կառավարության քննարկմանն է ներկայացնում առաջարկություններ զբոսաշրջային տարածաշրջանների, կենտրոնների, զբոսաշրջային գյուղերի, երթուղիների հաստատման և դրանց տարածքներում քաղաքաշինական և բնապահպանական հատուկ նորմերի, արտոնությունների և ֆինանսական խթանների վերաբերյալ, կնքում է զբոսաշրջության բնագավառին վերաբերող միջգերատեսչական պայմանագրեր: ՀՀ օրենսդրությանը համապատասխան իրականացնում է զբոսաշրջային օպերատորների և գործակալների, զբոսավարների, ուղեկցորդների լիցենզավորում, հյուրանոցային տնտեսության օբյեկտների, ռեստորանների, զբոսաշրջային փոխադրամիջոցի որակավորում, վարում է զբոսաշրջության ոլորտի վարչական վիճակագրությունը, իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ վերապահված այլ լիազորություններ:

2017թ. նաև ստեղծվել է Զբոսաշրջության զարգացման հիմնադրամ՝ ՀՀ զբոսաշրջության ոլորտում մարքեթինգային առավել արդյունավետ քաղաքականության իրականացման համար: Նոր հիմնադրամի ստեղծումը պիտի լուծի նաև միջազգային կազմակերպությունների հետ առավել ակտիվ համագործակցության և նպատակային միջոցառումների իրականացման համար հավելյալ ֆինանսական և անհրաժեշտ այլ միջոցներ ներգրավելու խնդիրները:

Զբոսաշրջության բնագավառում պետական քաղաքականության հիմնական սկզբունքները ամրագրված են «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքում.

1. ճանաչել զբոսաշրջությունը՝ որպես տնտեսության գերակա ճյուղ,
2. աջակցել զբոսաշրջային գործունեությանը և ոլորտի առաջնային ուղղությունների զարգացման համար ստեղծել բարենպաստ իրավական, տնտեսական և

կառուցվածքային պայմաններ,

3. սահմանել զբոսաշրջության գերակա ուղղությունները,

4. իրականացնել Հայաստանի Հանրապետության՝ որպես զբոսաշրջության համար բարենպաստ երկրի նկարագրի ձևավորումը,

5. ստեղծել պայմաններ զբոսաշրջիկների, զբոսաշրջային գործունեության սուբյեկտների օրինական շահերի և իրավունքների պաշտպանությունն իրականացնելու համար,

6. իրականացնել զբոսաշրջության բնագավառում միջազգային համագործակցության զարգացման ապահովումը,

7. աջակցել զբոսաշրջային գործունեության սուբյեկտների կողմից օրենքով սահմանված հասարակական միավորումներին[44]:

Զբոսաշրջության գերակա ուղղությունները սահմանելիս պետությունը հաշվի է առնում դրա օգտակարությունը և ազդեցությունը ազգային տնտեսության վրա: Ըստ այդմ՝ զբոսաշրջության ոլորտում ՀՀ պետական քաղաքականության գերակա ուղղություններն են ներգնա և ներքին զբոսաշրջության զարգացումը և աջակցությունը:

Զբոսաշրջության ոլորտում պետական քաղաքականության հիմնական նպատակներն են.

- մեծացնել զբոսաշրջության նեդրումը կայուն տնտեսական զագացման, ազգային եկամտի ավելացման, համաչափ տարածքային տնտեսական զարգացման, կենսամակարդակի բարձրացման և աղքատության կրճատման գործընթացում,
- ապահովել այցելուների ու զբոսաշրջիկների իրավունքների պաշտպանությունն ու լիարժեք իրականացումը,
- ապահովել զբոսաշրջության կայուն զարգացումը,
- ապահովել բնական, պատմական, սոցիալ-մշակութային և առողջարանային ռեսուրսներ ունեցող զբոսաշրջային տարածաշրջանների և կենտրոնների զարգացումը,
- ապահովել զբոսաշրջությունից ստացվող տնտեսական և սոցիալական շահերի հավասարաչափ բաշխումը հանրապետության ամբողջ տարածքում:

Նպատակներն իրականացնելու համար պետք է մշակել և իրագործել

[44] «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասինե ՀՀ օրենք, էջ 5

Հայաստանում զբոսաշրջության զարգացման պետական նպատակային համալիր ծրագիր՝ համապատասխան ծրագրային միջոցառումներով և ամրապնդված ֆինանսական ռեսուրսներով:

Ծրագիրը պետք է ներառի 6 հիմնական ոլորտներ, որոնք նպատակ կունենան շատ արագ բարձրացնելու հայկական զբոսաշրջային արդյունքի որակը, զբոսաշրջության գործունեության համար հավասար մրցակցային դաշտի ձևավորման միջոցով հայկական զբոսաշրջային արդյունքի գները դարձնել մրցունակ միջազգային զբոսաշրջային շուկայում և բարձրացնել դրա նկատմամբ պահանջարկը:

Ծրագրային միջոցառումների 6 հիմնական ոլորտներն են՝

1. Օրենսդրական և նորմատիվ-իրավական դաշտի ձևավորում.
2. Զբոսաշրջության գործունեության կազմակերպում և ոլորտի զարգացման կարգավորում.
3. Զբոսաշրջության նյութատեխնիկական բազայի և համապատասխան ենթակառուցվածքների զարգացման աջակցություն.
4. Գովազդային- տեղեկատվական ապահովում: Հայկական զբոսաշրջային արդյունքի խթանում ներքին և արտաքին շուկաներում.
5. Ոլորտի կադրային ապահովում.
6. Ոլորտի գիտական ապահովում.

Հաշվի առնելով, որ զբոսաշրջային արդյունքը ձևավորվում է տնտեսության բոլոր ճյուղերի պարտադիր մասնակցությամբ՝ ծրագիրը պետք է կրի համալիր բնույթ, և վերջինիս մշակմանն ու իրագործմանը պետք է մասնակից դառնան բոլոր շահագրգիռ նախարարություններն ու գերատեսչությունները, և ծրագրային լուծումներում պետական ընդհանուր տնտեսական շահերը պետք է վեր դասվեն նեղ գերատեսչական շահերից: Ծրագրի մշակման հիմքում պետք է դրվի նաև այն դրույթը, որ զբոսաշրջությունը զարգանալով մեծ խթան է հանդիսանում տնտեսության մի շարք այլ ճյուղերի զարգացման համար:

Զբոսաշրջության զարգացման պետական ծրագրերը, զբոսաշրջային երթուղիների, զբոսաշրջային հատուկ կարգավորման գոտիների, կենտրոնների, զբոսաշրջային գյուղերի, զբոսաշրջային գրավչության օբյեկտների և զբոսաշրջային

արդյունքների զարգացման ծրագրերը, զբոսաշրջության զարգացման մարզային և համայնքային ծրագրերը ՀՀ Կառավարության քննարկմանն է ներկայացնում լիազոր մարմինը: Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները իրենց նախաձեռնությամբ կարող են մշակել և լիազոր մարմին ներկայացնել զբոսաշրջության զարգացման մարզային և համայնքային ծրագրերը: Մարզային և համայնքային զբոսաշրջության զարգացման ծրագրերը պետք է պարունակեն զբոսաշրջության զարգացման կանխատեսումներ, ազգային, տարածքային և համայնքային զարգացման ծրագրերին համահունչ տարբեր ներդրողների, այդ թվում՝ ՀՀ Կառավարության, հայ և օտարերկրյա անհատների ներդրումային կապիալի գնահատում և կանխատեսում:

Զբոսաշրջության զարգացման ծրագրերի ֆինանսական խթանները պետական քաղաքականությանը համապատասխան իրականացվող ծրագրերը խրախուսող միջոցներ են: Ֆինանսական խթանները կարող են կիրառվել այն ծրագրերի ու նախագծերի նկատմամբ, որոնք արժանացել են լիազոր մարմնի դրական եզրակացությանը՝ զբոսաշրջության բնագավառի պետական քաղաքականության սկզբունքների, նպատակների ու խնդիրների իրականացման արդյունավետության տեսանկյունից: Դրանք կարող են դրսևորվել դրամաշնորհի, ծախսերի փոխհատուցման, փոխառության, արտոնյալ վարկավորման կամ հարկային, մաքսային արտոնությունների ձևերով կամ դրանց համակցմամբ:

ՀՀ-ը հետզհետե խորացրել է մասնակցությունը զբոսաշրջային ոլորտի միջազգային կազմակերպություններում: 1997 թվականից ՀՀ-ը լիիրավ անդամի կարգավիճակով անդամակցում է ՄԱԿ-ի ԶՀԿ-ին[45]: Մեր երկրի մասնակցությունը ԶՀԿ, միջազգային և տարածաշրջանային այլ կազմակերպությունների հետ համատեղ ծրագրերի և միջոցառումների մշակման և իրականացման գործընթացներին խորացնում է համագործակցությունը միջազգային կազմակերպությունների, արտերկրի զբոսաշրջային ոլորտը կարգավորող համապատասխան մարմինների և կառույցների հետ: Հայաստանի Հանրապետության պատվիրակությունները

[45] ՀՀ անդամակցության մասին ԶՀԿ որոշումը կայացվել է 1997 թ. Ստամբուլում կայացած ԶՀԿ Գլխավոր Ասամբլեայի 12-րդ նստաշրջանում:

մասնակցել են ԶՀԿ-ի կազմակերպած համաժողովներին և հանդիպումներին Պորտուգալիայում, Սեուլում, Յալթայում, Պեկինում, Սենեգալում և այլ երկրներում: Հայաստանի Հանրապետությունը ներգրավված է ԶՀԿ-ի կազմակերպած տարածաշրջանային և միջազգային խոշոր ծրագրերում, մասնավորապես «Մեծ Մետաքսի ճանապարհ» առևտրային ծրագրում[46]:

Զբոսաշրջության բնագավառում համագործակցության միջկառավարական համաձայնագրեր են ստորագրվել Հայաստանի Հանրապետության Կառավարության և Սիրիայի Արաբական Հանրապետության, Արաբական Միացյալ Էմիրությունների, Ուրուգվայի Հանրապետության, Արգենտինայի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության, Վրաստանի Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության, Ուկրաինայի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության, Թուրքմենստանի Հանրապետության, Ռումինիայի Հանրապետության, Բուլղարիայի Հանրապետության, Լեհաստանի Հանրապետության, Հունաստանի Հանրապետության, Իրանի Իսլամական Հանրապետության, Կիպրոսի Հանրապետության, Լիբանանի Հանրապետության, Հնդկաստանի Հանրապետության, Չինաստանի Ժողովրդական Հանրապետության, Պորտուգալիայի Հանրապետության կառավարությունների միջև:

Զբոսաշրջության պետական կարգավորման ինստիտուտը առանցքային նշանակություն ունի ոլորտի կայացման և հետագա զարգացման համար: Վերլուծություններն ու ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայաստանում կա վերջինիս կատարելագործման և արդիականացման անհրաժեշտություն:

Զբոսաշրջության ոլորտում ՀՀ Կառավարության վարած կայուն քաղաքականության շնորհիվ ոլորտի գերակայությունը ՀՀ տնտեսական զարգացման հիմնական ուղղություններում կարելի է վստահաբար համարել անշրջելի իրողություն: Սակայն հաշվի առնելով արդի համաշխարհային զարգացումները՝ պետական քաղաքականության առաջիկա ուղղությունները մշակելիս անհրաժեշտ է հիմնական շեշտադրումներն ուղղել հանրապետությունում բարձր արդյունավետությամբ և մրցունակությամբ օժտված ժամանակակից զբոսաշրջային ինդուստրիա ստեղծելուն, որը կապահովի երկրի տնտեսության զգալի առաջընթացը՝ միաժամանակ

[46] Study on Visa Facilitation in the Silk Road Countries, WTO, Madrid, 2001, p.1-3.

պահպանելով ու արդյունավետ օգտագործելով բնական և մշակութային ժառանգությունը:

2.3. Զբոսաշրջության ոլորտում պետական կարգավորման հիմքերն ու հիմնահարցերը ՀՀ-ում

ՀՀ-ում զբոսաշրջության զարգացման համար առկա են մի շարք հիմնահարցեր, որոնք խոչընդոտում են զբոսաշրջության զարգացմանը: Այդ հիմնահարցերի լուծման համար անհրաժեշտ է, որ պետական հատվածի կողմից իրականացվեն լուրջ և պարբերական բնույթ կրող համալիր գործողություններ:

ՀՀ զբոսաշրջության ոլորտի առկա հիմնահարցերը հետևյալն են՝

1. <u>Մարքեթինգային հիմահարցեր,</u>

1.1 Զբոսաշրջային արդյունքների բազմազանության բացակայություն: Այժմ Հայաստանը բացի դասական էքսկուրսիոն տուրերից միջազգային շուկայում հայտնի չէ հանգստի կազմակերպման այլ տեսակներով: Ներկայումս մեծ մասսայականություն են վայելում արկածային, էքստրեմալ զբոսաշրջության տեսակները, էկո և ագրոզբոսաշրջությունը: Որոշ տուրօպերատորներ սեփական ջանքերով փորձում են բավարարել զբոսաշրջային շուկայի արդի պահանջները, սակայն դրանք դեռևս չեն ձևավորում Հայաստանի նոր զբոսաշրջային արդյունք, որովհետև չկա համակարգված պետական մոտեցում զբոսաշրջային նոր արդյունքների ձևավորման հարցերում:

1.2 Զբոսաշրջիկների կազմի հետ կապված հիմնախնդիրներ: Ըստ Հայաստան այցելած զբոսաշրջիկների վիճակագրության՝ ամենաշատը այցելում են Ռուսաստանից և Վրաստանից, որոնք հիմնականում մեր հայրենակիցներն են և ամենաքիչ ծախսերն են կատարում, ինչը նշանակում է, որ զբոսաշրջային այցելությունների աճն ավելի արագ է, քան զբոսաշրջությունից ստացված եկամուտների աճը: Ավելի շահավետ թիրախային շուկաներում ՀՀ զբոսաշրջային արդյունքները դեռևս արդյունավետ չեն գործում:

1.3 Սեզոնայնություն: Հայաստանում զբոսաշրջության սեզոնայնությունը կարևոր հիմնախնդիր է համարվում: Զբոսաշրջիկների գերիշխող մեծամասնությունը,

մասնավորապես հանգստի նպատակով այցելողները, հանրապետություն են ժամանում մայիսից հոկտեմբեր ընկած ժամանակահատվածում, որը սակավ օդային փոխադրումների և հյուրանոցային տնտեսության օբյեկտների գործունեության աշխատանքում ստեղծում է ծանրաբեռնվածություն: Տարվա մնացած հատվածում զբոսաշրջության ոլորտում գործունեություն ծավալող կազմակերպություններում եկամուտը ցածր է, հյուրանոցների զբաղվածությունը նվազում է և ոլորտում աշխատատեղերից շատերը կրում են սեզոնային բնույթ: Հայաստանում ձմեռային կուրորտային զբոսաշրջության զարգացումը, այն մրցունակ դարձնելը և միջազգային շուկայում արդյունավետ խթանելը կարող է հիմնականում լուծել սեզոնայնության հիմնախնդիրը: Սեզոնայնության ազդեցությունը զսպելու առումով լավ կլինի նաև եթե պետական մշակութային, սպորտային, գիտական և այլ տիպի միջազգային բնույթ կրող միջոցառումները պլանավորվեն զբոսաշրջային ցածր արդյունավետ սեզոններին:

1.4 Զբոսաշրջային արդյունքի խթանում: Չնայած հարուստ պատմամշակութային և բնական զբոսաշրջային ռեսուրսների առկայությանը՝ Հայաստանը ներկայումս չի գտնվում համաշխարհային զբոսաշրջային ուղղությունների շարքում և ունի համաշխարհային շուկայում որպես զբոսաշրջային ուղղություն պատշաճ կերպով դիրքավորման կարիք: Հայկական տուրօպերատորների և Զբոսաշրջության զարգացման գործակալության իրականացրած մարքեթինգային միջոցառումները համակարգված և արդյունավետ չեն, չկա բավարար ֆինանսավորում պետության կամ մասնավոր հատվածի կողմից գովազդատեղեկատվական, ճանաչողական և այլ տիպի խթանման միջոցառումներ իրականացնելու համար:

2. <u>Ենթակառուցվածքային հիմահարցեր և դրանց ուղեկցող գնային, որակական և անվտանգության պահպանման հիմնահարցեր</u>

2.1 Հյուրընկալության ոլորտ: Հյուրանոցային տնտեսության օբյեկտները զբոսաշրջային փաթեթների հիմնական մասն են և գտնվում են զբոսաշրջիկների համար առաջնային ուշադրության կենտրոնում, որոնք առավելագույնս պետք է իրենց գնային և որակական հատկանիշներով ներդաշնակ լինեն և բավարարեն զբոսաշրջիկի պահանջմունքները և սպասելիքները: Տարածաշրջանում մրցունակ գին ձևավորելու համար անհրաժեշտ է պետական միջամտություն: Ինտեգրումը համաշխարհային

հայտնի հյուրանոցային ցանցերին Հայաստան կներմուծի սպասարկման որակի նոր չափանիշներ և ավելի գրավիչ ու վստահություն ներշնչող կլիմայական օտարերկրյա զբոսաշրջիկների համար, ինչպես նաև առողջ մրցակցային միջավայր կստեղծի տեղի շուկայում: Նաև մատչելի հյուրանոցային տնտեսության օբյեկտների ստեղծման և ընդլայնման անհրաժեշտություն կա հանրապետության ողջ տարածքով, որպեսզի խթանվի երիտասարդ, ուսանող զբոսաշրջիկների այցելությունները Հայաստան:

2.2 Հասարակական սննդի, մշակութային, ժամանցի, սպորտի, զվարճության օբյեկտներ: Հայաստանն ունի յուրօրինակ ու համեղ ավանդական խոհանոց, սակայն շատ ռեստորաններում և սննդի օբյեկտներում սանիտարահիգիենիկ պայմանները և սպասարկման մակարդակը բավականին ցածր են՝ հատկապես Երևանից դուրս գտնվող օբյեկտներում: Չի գործում որակի վերահսկման համակարգը: Բացի այդ, չկան համաշխարհային համբավ ունեցող և օտարերկրացիների մոտ նախապատվություն վայելող այլընտրանքային խոհանոցների առկայություն և արագ սննդի սպասարկման հայտնի ապրանքանիշներ:

Հայաստանը հնագույն մշակույթ և պատմություն, ինչպես նաև սպորտային լավ ավանդույթներ ունեցող երկրներից է և միշտ էլ աչքի է ընկել իր բարձրորակ և ինքնատիպ մշակութային ժառանգությամբ: Այժմ մշակութային շատ օբյեկտներ՝ թանգարաններ, պատկերասրահներ, թատրոններ, կինոթատրոններ, համերգասրահներ, մշակութային և պատմության հուշարձաններ, եկեղեցիներ գտնվում են ոչ անյքան բարվոք կամ միջազգային արդի չափանիշներին համապատասխանող վիճակում ու ֆինանսական և մասնագիտական աջակցության կարիք ունեն:

2.3 Տրանսպորտ: ՀՀ զբոսաշրջային ենթակառուցվածքի ամենաթույլ օղակը կարելի է համարել տրանսպորտը: Ներկայումս թիրախային շուկաներից ՀՀ զբոսաշրջային այցելությունները իրականացվում են հիմնականում օդային տրասպորտի միջոցով: Տարածաշրջանի այլ ուղղությունների համեմատությամբ օդային ուղևորափոխադրման ծախսերը բավականին բարձր են, ճանապարհային ցանցը սահմանափակ է, ուղիղ չվերթները թիրախային շուկաներից շատ քիչ են, իսկ թռիչքի ժամանակացույցները՝ անհարմար, օդային փոխադրման վճարները ակնհայտորեն շատ բարձր են, և

զբոսաշրջիկները ենթարկվում են երկու տեսակի հարկման (մուտքի արտոնագրի տուրք, ելքի տուրք): Անհրաժեշտ է ընդունել «բաց երկնքի» քաղաքականություն՝ խրախուսելով օդային փոխադրողների ավելի մեծ քանակությունը, ավելի լայն ցանցը և առողջ մրցակցությունը:

Ավտոճանապարհային տրանսպորտից Հայաստան մուտք ու ելք անող զբոսաշրջիկները հիմնականում հարևան պետություններից են՝ Վրաստանից և Իրանից: Ճիշտ է, վերջին տարիներին դեպի սահմաններ տանող գլխավոր մայրուղիները բավական լավ փոփոխությունների են ենթարկվել, այնուամենայնիվ, Հայաստանի ճանապարհները շատ հոգնեցնող են և անհրաժեշտություն կա դրանք ավելի հարմարավետ դարձնելու՝ կառուցելով ոլորանները կրճատող կամուրջներ և շրջանցող ճանապարհներ: Երկաթուղային տրանսպորտը գործում է միայն Հայաստանի և Վրաստանի միջև: Դեռևս չկա Իրանի հետ կապող երկաթուղային ճանապարհ, ինչը կխթաներ ինչպես առևտուրը, այնպես էլ զբոսաշրջությունը: Քաղաքային և միջքաղաքային հասարակական տրանսպորտը նույնպես չհուսադրող վիճակում է: Այն իր սպասարկման և անվտանգության մակարդակով չի համապատասխանում միջազգային ոչ մի չափանիշի: Զբոսաշրջիկները խուսափում են կամ ուղղակի չեն կարողանում օգտվել հասարակական տրանսպորտից: Կանգառներում և տրասպորտային փոխադրամիջոցների վրա չկան անգլերեն լեզվով նշված երթուղիներ, չեն պահպանվում անվտանգության կանոնները: Մետրոն՝ որպես քաղաքային տրանսպորտի ծանրաբեռնվածությունը կրճատող, առավել անվտանգ և էկոլոգիապես մաքուր տրանսպորտ, ներկայումս չի զարգանում Երևանում:

2.4 Ֆինանսական և ապահովագրական ծառայությունների, կապի և հաղորդակցման, կոմունալ սպասարկման և առողջապահության ոլորտ: Ներկայումս ցանկացած զբոսաշրջիկ իր ճանապարհորդության ընթացքում օգտվում է կապի և հաղորդակցության արդի միջոցներից, ֆինանսական և ապահովագրական ծառայություններից և սպասարկման ոլորտի այլ ծառայություններից, որոնք մատուցվում են տվյալ երկրում: Կարևոր հիմնախնդիր է զբոսաշրջիկների առողջության և անվտանգության պահպանումը, որի համար գոյություն ունեցող ենթակառուցվածքը չի համապատասխանում արդի պահանջներին և կարիք ունի բարեփոխումների:

Կոմունալ սպասարկումը, նույնիսկ Երևանում, պատշաճ ձևով չի իրականացվում: Կան աղբահանության, շուրջօրյա ջրամատակարարման, անվտանգ գազամատակարարման և սպասարկամ և այլ կոմունալ խնդիրներ, որոնք անհրաժեշտ է լուծել:

3. Տարածքային համաչափ զարգացման հիմնահարցեր: Պետական կարևորագույն հիմնախնդիրներից մեկն է տարածքային համաչափ զարգացման ապահովումը: Հայաստանում տրանսպորտային միջոցների, զբոսաշրջային օպերատորների, հյուրանոցային, սննդի և զվարճանքի օբյեկների, ինչպես նաև այլ զբոսաշրջային ենթակառուցվածքների մեծամասնությունը կենտրոնացած է Երևանում: Ներկայումս զբոսաշրջությունից ծագած եկամուտների շատ փոքր մասն է փոխանցվում մարզեր, ինչը չի արդարացնում նույնիսկ ՀՀ Կառավարության որոշմամբ հաստատված համայնքներում զբոսաշրջության զարգացման ծրագրով նախատեսված զբոսաշրջության պետական քաղաքականության հիմնական նպատակներից մեկը՝ համաչափ տարածքային զարգացումը, չնայած նրան, որ Հայաստանի այլ համայնքներում առկա է զբոսաշրջային գործունեության զարգացման և ծավալման մեծ ներուժ:

4. Ներդրումային և օրենսդրահիրավական կարգավորման հիմնահարցեր: Հայաստանում զբոսաշրջության ոլորտը բավականաչափ չի ֆինանսավորվում: Երկրի զբոսաշրջությունից ստացված եկամուտների չնչին մասն է ներդրվում զբոսաշրջության զարգացման մեջ, իսկ մասնավոր ներդրողները թերահավատորեն են վերաբերվում Հայաստանում ներդրումներ կատարելուն կամ ուղղակի խուսափում են դրանից: Ներդրումների խրախուսման համար նախ անհրաժեշտ է ստեղծել թափանցիկ և բարենպաստ գործարար միջավայր, որի հիմքում ընկած կլինի հստակ քաղաքականությունը և իրավական դաշտը: Ոլորտում պետական և մասնավոր ներդրումների ներկայիս մակարդակը բավականին ցածր է թեկուզ հենց տարածաշրջանի երկրների համեմատությամբ, և եթե Հայաստանը դիտարկում է մրցունակ լինելու հնարավորությունը, պետք է միջոցառումներ իրականացվեն այս ուղղությամբ ևս:

5. Ներկառավարական համագործակցության և միջազգային համագործակցության

հիմնահարցեր: Քանի որ զբոսաշրջության ոլորտը իրենից ներկայացնում է տնտեսական, սոցիալական և քաղաքական հարաբերությունների ամբողջություն, այն առնչվում է գրեթե բոլոր պետական մարմինների գործառույթներին, և դա ստեղծում է այդ մարմինների միջև զբոսաշրջության ոլորտին առընչվող հարաբերությունների կարգավորման հարցում առավել սերտ համագործակցության հաստատման անհրաժեշտություն:

Հայաստանը, հանդիսանալով ՄԱԿ-ի Զբոսաշրջության Համաշխարհային Կազմակերպության անդամ, պետք է ավելի ակտիվ և արդյունավետ համագործակցի անդամ երկրների հետ, օգտագործի վերջիններիս փորձը պետական կարգավորման բնագավառում և պետական միջնորդությամբ խթանի օտարերկրյա ներդրումային ծրագրերը:

6. Կադրային հիմահարցեր: Հայաստանի զբոսաշրջության ոլորտում աշխատող կադրերի մասնագիտական որակը, հմտություններն ու գիտելիքները միջազգային ընդունված ստանդարտներից ցածր են: Պահանջվում է զբոսաշրջության ոլորտի մարդկային ռեսուրսների զարգացման ծրագրի մշակում՝ ներառյալ զբոսաշրջության ոլորտի կրթական համակարգի բարելավում և մարդկային ռեսուրսների վերապատրաստում, որը կապահովի ծառայությունների համաշխարհային շուկայում առկա պահանջարկին համահունչ աշխատուժի զարգացումը:

7. Սոցիալական հիմնահարցեր: Հայաստանում շատ քաղաքացիներ զբոսաշրջիկին չեն ընդունում որպես հյուր: Շատ հաճախ կարելի է հանդիպել զբոսաշրջիկի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի: Հայաստանում զբոսաշրջիկը ապահովագրված չէ ծաղրված կամ խաբված լինելուց: Այս իրավիճակում հայտնված զբոսաշրջիկը խորը հիասթափություն է ապրում և երկրորդ անգամ Հայաստան այցելությունը արդեն կասկածի տակ է դրվում: Սոցիալական մյուս կարևոր հիմնախնդիրներից է հասարակական փակ տարածքներում ծխելու սահմանափակումների բացակայությունը: Հայաստանում սննդի և ժամանցի կազմակերպման սակավաթիվ օբյեկտներում են պահպանվում հաճախորդի իրավունքները: Երթևեկության կանոնների մշտական խախտումները և անդադար հնչող ազդանշանները, գետնին աղբ թափող քաղաքացիներ տեսնելը զբոսաշրջիկներին ստիպում են կասկածել

Հայաստանի՝ որպես անվտանգ, ապահով քաղաքակիրթ երկիր լինելու հարցում:

8. Բնության և մշակութային ժառանգության պահպանման հիմնահարցեր: ՀՀ-ում գնալով խորանում է բնության և մշակութային ժառանգության պահպանման հիմնահարցը: Ներկայումս ամբողջ աշխարհում զբոսաշրջության ոլորտի արդի հիմախնդիրներից են կլիմայական փոփոխությունները և դրա ազդեցությունը զբոսաշրջության վրա: Չնայած Հայաստանի վրա որևէ ազդեցություն չի գործի ծովի մակարդակի բարձրացումը, այնուամենայնիվ կլիմայական փոփոխությունները երկարաժամկետ դիտարկման տեսանկյունից կարող են բացասաբար ազդել ՀՀ զբոսաշրջության ոլորտի վրա: Այսպես, օրինակ՝ վերջին տարիներին Հայաստանում ձմռան ամիսներին նկատվում է սովորականից բարձր ջերմաստիճան, որի հետևանքով ձմեռային զբոսաշրջության սեզոնայնությունը կրճատվում է, և քիչ ձյան պատճառով պահանջարկը ընկնում է: Ուշադրության արժանի խնդիր է նաև շրջակա միջավայրի աղտոտվածությունը, աղտոտման աղբյուրների տեղակայումը և դրանց հետ կապված աղտոտման և արտակարգ իրավիճակների վտանգը: Անհրաժեշտ է մշակել բնության մաքրման և պահպանման վերահսկման մեխանիզմներ, մշակել կրթական, դաստիարակչական ծրագրեր երեխաների մոտ բնության նկատմամբ սեր ու հոգատարություն սերմանելու համար: Մշակութային ժառանգության շատ հուշարձաններ ներկայումս նույնպես կարիք ունեն վերականգնման, վերանորոգման և պահպանման: Հաշվի առնելով, որ ՀՀ զբոսաշրջային հիմնական արդյունքը բնությունն է և մշակույթը, մենք պետք է ավելի սրտացավ և հոգատար լինենք այս արժեքների նկատմամբ, պահպանենք և զարգացնենք մեզ բաժին հասած ժառանգությունը:

9. Քաղաքական և տնտեսական անկայունություն, տարածաշրջանային լարվածություն: Քաղաքական, տնտեսական անկայունությունը և տարածաշրջանային լարվածությունն անշուշտ զբոսաշրջության զարգացման հիմնական արգելքներից են և ուղղակիորեն ազդում են զբոսաշրջային այցելությունների վրա: Զբոսաշրջիկները խուսափում են իրենց հանգիստն անցկացնել նման երկրներում: Ճիշտ է, վիճակը այնքան էլ բարդ և ծայրահեղ չէ, սակայն տնտեսական և քաղաքական կայունություն հաստատելով՝ մենք կխթանենք զբոսաշրջային այցելությունների աճը, և զբոսաշրջային եկամուտները կավելանան:

10. Ճշգրիտ քանակական և որակական հետազոտությունների անցկացման հիմնահարցեր: Ներկայումս Հայաստանի ներգնա զբոսաշրջային այցելությունների մասին միակ հավաստի և ճշգրիտ տվյալները ներկայացնում են սահմանային հսկիչ կետերում հավաքագրված հայ և օտարերկյա քաղաքացիների վերաբերյալ համադրված տվյալները: Չնայած վերջերս իրականացված տարեկան ուսումնասիրությունը ներկայացնում է որոշակի տվյալներ ծախսերի, ճամփորդությանը վերաբերող խնդիրների, տևողության, կեցության նախասիրությունների և այլնի վերաբերյալ, այնուամենայնիվ, տվյալների որակը բավարար չէ պետական քաղաքականության պատշաճ մշակման համար կամ Հայաստանի տնտեսության վրա զբոսաշրջության ոլորտի ազդեցությունն արդյունավետ կերպով գնահատելու համար: Անհրաժեշտ է որակական և քանակական տվյալների հավաքագրման հուսալի համակարգ՝ ներգնա և ներքին զբոսաշրջության մասին տվյալների հավաքման և մշակման համար:

Որպեսզի առավել օբյեկտիվորեն ներկայացվեն ՀՀ զբոսաշրջության զարգացման հիմնահարցերը և դրանց վրա հիմնվելով մշակվեն առավել արդյունավետ զարգացման ռազմավարություններ, նախ և առաջ անհրաժեշտ է պարզել օտարերկացիների կարծիքը մեր երկրի՝ որպես զբոսաշրջային ուղղության մասին: Այս առումով մեծ գործ է կատարել <<Հայաստանի մրցունակ մասնավոր հատված>> ծրագիրը, որն իրականացրել է մասսայական հարցում օտարերկրյա տուրոպերատորների շրջանում կապված մեր երկրի՝ որպես զբոսաշրջային ուղղության մասին: Հարցումն իրականացվել է 4 լեզուներով (անգլերեն, իտալերեն, ֆրանսերեն և ռուսերեն)՝ օգտագործելով www.surveymonkey.com օնլայն հարցումային ծրագիրը: Հարցման արդյունքում ստացվել են 311 պատասխաններ 31 երկրներից, որից 22% ԱՄՆ-ից, 22% ՌԴ-ից, 11% Իտալիայից, 8% Ֆրանսիայից, 6% Հնդկաստանից, իսկ մնացած 31% այլ երկրներից:

Հայաստան այցելած օտարերկրացիները հիմնականում բողոքում են հյուրանոցային ծառայություններից, ճանապարհներից և տրանսպորտից, գներից, սննդից, չվերթներից, բողոքներ են եղել նաև սոցիալական միջավայրի հետ կապված, մասնավորապես այն, որ հասարակական բոլոր վայրերում ծխում են,

ավտոմեքենաները չեն պահպանվում երթևեկության կանոնները, տուրերից՝ մասնավորապես այն, որ դրանք բացի եկեղեցիներից ուրիշ բան չեն ներառում, հասարակական զուգարաններից, ճանապարհանշաններից, Հայաստանի մասին տեղեկատվության պակասից, ինչպես նաև բողոքներ կապված լեզվական դժվարությունների, սպասարկման ցածր որակի, ժամանցի անցկացման այլընտրանքների բացակայության հետ[47]:

Օտարերկրյա տուրոպերատորները խորհուրդ են տալիս Հայաստանին գովազդատեղեկատվական միջոցառումներ անցկացնել, բարելավել հյուրանոցային տնտեսության պայմանները և ծառայությունների որակը, գներն ավելի մրցունակ դարձնել, լավ 3-4 աստղանի հյուրանոցների առաջարկը ավելացնել, բարելավել ճանապարհների և տրանսպորտային ծառայությունների որակը, իջեցնել գները, հետևել սննդի որակին և սպասարկմանը, առաջարկել խոհանոցների բազմազանություն, զբոսաշրջային գրավչություններն ավելի մաքուր, բարեկարգված և լուսավորված ներկայացնել, ավելի յուրօրինակ և տարաբնույթ տուրեր առաջարկել, զբոսաշրջային վայրերում հասարակական զուգարաններ կառուցել և հետևել դրանց մաքրությանը, բարձրացնել սապասարկման որակը և վերահսկում իրականացնել, բարձրացնել գիդերի մասնագիտական որակները, անգլերեն ուղենիշներ ավելացնել ճանապարհներին և հասարակական տրանսպորտի վրա, ինչպես նաև խորհուրդ են տալիս բարելավել առողջապահության, բիզնես միջավայրի ոլորտը, ավելի շատ հետազոտություններ անցկացնել զբոսաշրջության ոլորտին վերաբերող և այլն:

Այսպես, զբոսաշրջության բնագավառում պետական կարգավորման հիմնահարցերն են՝

- համաշխարհային շուկայում Հայաստանի՝ որպես զբոսաշրջային երկրի, մրցունակության ապահովում,
- Հայաստանում նոր, զբոսաշրջային գրավչությունների բացահայտում, մրցունակ և այլընտրանքնային զբոսաշրջային արդյունքների ձևավորում,
- Հայաստանի, ինչպես նաև Հայաստանում առանձին զբոսաշրջային կենտրոնների, գյուղերի, որպես բարենպաստ և գրավիչ զբոսաշրջային կենտրոնների, նկարագրի և

[47] http://www.mineconomy.am/arm/39/gortsaruyt.html

բրենդի ձևավորում և միջազգային ու ներքին շուկայում պատշաճ ներկայացում,

● Հայաստանի տրանսպորտային համակարգի և մուտքի ու ելքի ընթացակարգերի բարելավում,

● զբոսաշրջային ենթակառուցվածքների ձևավորում, բարելավում և զարգացում,

● զբոսաշրջային ռեսուրսների ռացիոնալ օգտագործման ապահովում,

● զբոսաշրջության ոլորտի նկատմամբ հանրային հետաքրքրության և շահագրգռվածության խթանում, շահագրգիռ կողմերի միջև ընդհանուր տեսականու ապահովում,

● աջակցություն զբոսաշրջության բնագավառում գործող, մասնավոր հատվածը ներկայացնող ոչ առևտրային կազմակերպությունների գործունեությանը,

● զբոսաշրջիկների անվտանգության, նրանց իրավունքների, շահերի ու գույքի պաշտպանության ապահովում,

● զբոսաշրջային ծառայությունների որակի բարելավում և շարունակական բարձրացում,

● զբոսաշրջության բնագավառում մարդկային ռեսուրսների շարունակական զարգացում, պահանջարկին համապատասխանող կադրերի պատրաստում և վերապատրաստում,

● բարենպաստ գործարար և ներդրումային միջավայրի ապահովում,

● զբոսաշրջային կենտրոնների և գրավչության վայրերի կառավարման բարելավում,

● զբոսաշրջիկների կարիքներին համահունչ զբոսաշրջության զարգացման այնպիսի համակարգի ստեղծում, որը կնպաստի Հայաստանի քաղաքացիների զբաղվածության ավելացմանը, պետության և նրա քաղաքացիների եկամտի աճին, միջազգային կապերի զարգացմանը, զբոսաշրջային ռեսուրսների և Հայաստանի պատմամշակութային ժառանգության ու բնության պահպանությանը:

● ճշգրիտ վիճակագրության վարում, որակյալ հետազոտությունների և ուսումնասիրությունների ապահովում, առաջնահերթ նպատակային շուկաների որոշում:

Ընդհանրացնելով կարող ենք ասել, որ քննարկված հիմնահարցերի համալիր լուծման արդյունքում զբոսաշրջության բնագավառը ոչ երկարատև

ժամանակահատվածում հանրապետության տնտեսական կյանքի կարևորագույն ոլորտների շարքում կզբաղեցնի իր ուրույն տեղը, կմեծանա դրա տեսակարար կշիռը երկրում արտադրված ՀՆԱ-ի կառուցվածքում, վերջինս էլ կնպաստի հասարակության կենսամակարդակի բարձրացմանը:

Անհերքելի է այն փաստը, որ վերջին տարիներին ՀՀ-ում զբոսաշրջության ոլորտում կա մեծ առաջընթաց, և պետության կողմից այս ոլորտի զարգացման համար լուրջ քայլեր են արվում, բայց, այնուամենայնիվ, կան բազմաթիվ խոչընդոտներ և հիմնախնդիրներ այս ոլորտի զարգացման համար:

Այսպիսով կարող ենք եզրակացնել, որ պետության և մասնավոր հատվածի համատեղ, լուրջ և համակարգված գործողությունների արդյունքում զբոսաշրջությունը կունենա իր ուրույն տեղը ՀՀ-ում:

ԳԼՈՒԽ 3. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

3.1. Զբոսաշրջության ենթակառուցվածքների զարգացման հնարավորություններն ու խոչընդոտները ՀՀ-ում

ՀՀ-ը ունի բոլոր անհրաժեշտ նախադրյալներն ու ռեսուրսները երկրում զբոսաշրջության զարգացման համար: Զբոսաշրջության համակարգի զարգացման տեսանկյունից լուրջ խոչընդոտ է հանդիսանում հյուրանոցային տնտեսության հատկապես գնային վիճակը: Պետք է նկատի ունենալ, որ հյուրանոցային տնտեսության օբյեկտները բազմաթիվ են և տարբեր երկրներում դրանք տարբեր են: Հայաստանում ըստ <<Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին>> ՀՀ օրենքի՝ հյուրանոցային օբյեկտների շարքին են դասվում հյուրանոցները, մոթելները, հյուրանոցատիպ հանգրվանները, առողջարանները, հանգստյան և մասնագիտացված ճամբարները կամ տները, պանսիոնները, զբոսաշրջային, մանկապատանեկան և ճամբարային բնակատեղիները /համալիրները/, զբոսաշրջային տները:

Հայաստանում, մասնավորապես՝ Երևանում, տարածված են լյուքս և միջին դասի հյուրանոցներ, որտեղ մատուցվում են գրեթե նույն ծառայությունները, սակայն տարբեր սակագներով: Հյուրանոցային ծառայությունների սպառողական շուկայում կարևորագույն հիմնախնդիր է ճիշտ գնային քաղաքականության մշակումը, քանի որ նույն ծառայությունը գրեթե նույն կարգի հյուրանոցում մատուցվում է անտրամաբանական սակագնով: Չկա մշակված միասնական գնային ռազմավարություն, առաջարկվող գները հեռու են իրական պահանջարկի բավարարման մակարդակից, մատուցվող ծառայությունների մակարդակը երբեմն շատ հեռու է դրանց համար առաջարկվող գներից և չի համապատասխանում գործող միջազգային չափանիշներին (Տես հավելված 7)[48]:

[48] www.marriottarmenia.am-Արմենիա Մարիոթ, www.anihotel.com –Անի պլազա հոթել, www.metropol.am - Մետրոպոլ, www.europehotel.am - Եվրոպա, www.goldenpalacehotel.am - Գոլդեն Փալաս, www goldentulip com- Գոլդեն Թուլիփ, www.congresshotelyerevan.com - Կոնգրես հյուրանոցների պաշտունական ինտերնետային կայքեր

Ընդ որում, հյուրանոցային ծառայությունների բարձր գնային քաղաքականությունը նաև ներքին զբոսաշրջության զարգացման հիմնական խոչընդոտներից մեկն է: Թեև վերջին տարիներին որոշակի աշխուժություն է նկատվում ներքին զբոսաշրջության զարգացման ոլորտում, բայց դրանով տեղաբնակների տեսակարար կշիռը հյուրանոցային ծառայություններից օգտվողների շարքում մնում է աննկատ:

Հայաստանում հյուրանոցային տնտեսության զարգացման խոչընդոտների շարքում առանձնանում է նաև հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման կարգերի անհամապատասխանությունն իրականության հետ: Այսպես, պրակտիկայում հաճախ են հանդիպում այնպիսի դեպքեր, երբ օտարերկրյա զբոսաշրջիկը, պատվիրելով հինգ աստղանի հյուրանոց, արժանանում է հազիվ երեք աստղանի հյուրանոցին բավարարող չափանիշներով հանգրվանի: Դրա հետևանքով զբոսաշրջիկը, հեռանալով մեր երկրից, իր բացասական ազդեցությունն է թողնում արտասահմանում Հայաստանի իմիջի ձևավորման դժվար և բարդ գործընթացի վրա:

Թեև Հայաստանում 2004թ. գործում է ՀՀ Կառավարության 2004թ. հունիսի 10-ի <<Հյուրանոցային ծառայություններ մատուցելու կարգն ու պայմանները սահմանելու, հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման կարգերը և որակավորման ընթացակարգը հաստատելու մասին>> թիվ 946-Ն որոշումը, այնուամենայնիվ, նշված որոշումը դեռևս մեր օրերում հեշտությամբ շրջանցվում է: Հյուրանոցների մեծ մասն իրենք իրենց աստղեր են շնորհել՝ հաշվի չառնելով օրենսդրական պահանջները, դրանց մեծ մասի գործունեությունը հեռու է հիշյալ իրավական ակտի պահանջներից: Այս կապակցությամբ անհրաժեշտ է ուժեղացնել լիազոր մարմնի, մասնավորապես՝ ՀՀ Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության վերահսկողական գործառույթները՝ ոլորտը հավուր պատշաճի կառավարելու համար:

ՀՀ մարզերում զբոսաշրջության համաչափ զարգացման համար խոչընդոտ է այն հանգամանքը, որ համաշխարհային համբավ ունեցող պատմամշակութային խոշոր հուշարձանները, եկեղեցիներն ու կոթողները, առողջարանային համալիրները սփռված են հանրապետության ողջ տարածքում և հիմնականում՝ լեռնային, հեռավոր շրջաններում: Զբոսաշրջիկների համար մեծ դժգոհություն է առաջացնում այն փաստը,

որ Երևանից դուրս հյուրանոցների, ժամանցի վայրերի, սննդի օբյեկտների բացակայության պատճառով նրանք ստիպված են մեկ օրվա ընթացքում կազմակերպել իրենց շրջագայությունները: Սա աննկարագրելի բացասական հետևանք է թողնում տարածաշրջաններում զբոսաշրջության զարգացման վրա:

Ոլորտի զարգացման հիմնական խոչընդոտներից է սեզոնայնության բարձր մակարդակը: Հյուրանոցների միջին տարեկան ծանրաբեռնվածությունը տատանվում է 40-50%-ի շրջակայքում: Սեզոնայնությամբ պայմանավորված խոչընդոտները կարող են մեղմացվել միայն այնպիսի հանգստավայրերի ստեղծմամբ, որոնք կառաջարկեն լայնորեն դիվերսիֆիկացված ծառայություններ:

Հայաստանում զբոսաշրջության զարգացման մեկ այլ խոչընդոտ է հասարակական սննդի և զվարճանքի օբյեկտների անհամաչափ տեղաբաշխումը: Ռեստորանային տնտեսության մասին խոսելիս, առաջին հերթին, պետք է նկատել, որ ինչպես ծառայությունների բնագավառն ամբողջությամբ, այնպես էլ տնտեսության այս ճյուղը զարգացման մակարդակով վերելք է ապրում Երևանում: Այստեղ օրեցօր ավելանում են հանրային սննդի օբյեկտների բազմաթիվ տարատեսակներ, սկսած ամենապարզ արագ սննդի (fast food) կազմակերպման օբյեկտներից մինչև բարձրակարգ, էլիտար կարգի ռեստորաններ: Մինչդեռ, ինչպես արդեն նշվել է, զբոսաշրջության, հյուրանոցային տնտեսության զարգացման կարևոր նախադրյալներից մեկը հանրապետության տնտեսական կյանքի համաչափ զարգացումն է: Հանրապետության մարզերում հանրային սննդի օբյեկտների կամ բացակայությունը, կամ դրանց խիստ անհամաչափ տեղաբաշխումը բացատրվում է բնակչության խիստ ցածր եկամուտներով, ինչն իր հերթին բերում է նման ծառայությունների հանդեպ հասարակական պահանջարկի բացակայություն: Բացի այդ այստեղ չպետք է մոռանալ այն կարևոր հանգամանքը, որ ընդհանրապես ծառայությունների շուկայում այս կամ այն ճյուղի զարգացման, տվյալ դեպքում հանրային սննդի ոլորտում գործող օբյեկտների թվաքանակի վրա մեծապես ազդում են այնպիսի կարևորագույն գործոններ, ինչպիսիք են մարզի բնակլիմայական պայմաններն ու աշխարհագրական դիրքը, քաղաքային և գյուղական բնակչության հարաբերակցությունը, բնակչության խտությունը և այլն:

Ռեստորանային տնտեսության համաչափ զարգացմանը զուգընթաց կարևոր նշանակություն ունի նաև ժամանցի օբյեկտների տեղաբաշխումն ու զարգացումը, որոնք ևս հիմնականում կենտրոնացված են մայրաքաղաքում, և դա, բնականաբար, բացասաբար է անդրադառնում զբոսաշրջության ոլորտի զարգացման վրա:

Հանրապետությունում զբոսաշրջության զարգացմանը խոչընդոտող ոչ պակաս կարևոր ենթակառուցվածքների շարքին է դասվում տրանսպորտային համալիրը:

Ներկայումս հանրապետության ներսում գերակշռողը ավտոմոբիլային տրանսպորտն է: Ինտենսիվ ավտոմոբիլային երթևեկությամբ աչքի է ընկնում հատկապես Երևան քաղաքը: Ավտոմեքենաների օրեցօր աճը մեծապես վնասում է քաղաքի բնապահպանությանը, որն էլ բնականաբար իր բացասական ազդեցությունն է թողնում զբոսաշրջության զարգացման վրա: Բնապահպանական խնդիրների և շրջակա միջավայրի պահպանության նպատակով ՀՀ Կառավարությունը որոշակի քայլեր է ձեռնարկել, բայց դրանք դեռևս բավարար չեն: Քաղաքի օդային ավազանի ծայրաստիճան աղտոտվածությունը կարելի է զգալ ամեն պահ, որն աննկատ չի մնում զբոսաշրջիկների կողմից: Տրանսպորտային ցանցի անմխիթար վիճակը հաճախ է դառնում զբոսաշրջիկների դժգոհության առարկա: Թեև որոշ հյուրանոցներ ձեռք են բերել տրանսպորտային միջոցներ, որոնցով կազմակերպում են զբոսաշրջիկների շրջագայությունները, այնուամենայնիվ դրանք դեռևս բավարար չեն և զբոսաշրջիկների մեծ մասն օգտվում են տաքսամոտորային տրանսպորտից:

Հանրապետությունում զբոսաշրջության ոլորտի զարգացման վրա ոչ պակաս կարևոր ազդեցություն են թողնում հեռահաղորդակցության ոլորտի բացթողումները: Տնտեսության այս ճյուղը ոչ միայն օտարերկրյա զբոսաշրջիկների, այլև տեղաբնակների կողմից ամենօրյա շահարկման թեմա է, քանի որ վերջինս դեռևս շատ հեռու է կատարյալ լինելուց:

Ելնելով Հայաստանի աշխարհագրական դիրքից՝ զբոսաշրջության զարգացմանը խոչընդոտող գործոնների շարքում կարևորվում է նաև բարձրակարգ, հուսալի և անվտանգ ճանապարհների խնդիրը: Թեև վերջին տարիներին նկատվում են խոշորածավալ կապիտալ ներդրումներ ՀՀ ճանապարհային տնտեսության վերականգնման և զարգացման գործում, այնուամենայնիվ դեռևս շատ անելիքներ

կան: Համեմատաբար բարվոք վիճակում են հանրապետության միջպետական նշանակություն ունեցող ճանապարհները, որոնց վերականգնումն իրականացվել է սփյուռքի և հատկապես Լինսի հիմնադրամի խոշորածավալ ֆինանսական ներդրումների շնորհիվ:

Քանի որ, ինչպես արդեն բազմիցս նշվեց, հանրապետության զբոսաշրջության ներուժը սփռված է հանրապետության ողջ տարածքում, այդ առումով մեծ կարևորություն են ներկայացնում նաև տեղական ճանապարհները: Հանրապետության տեղական ճանապարհները, գտնվելով մարզպետարանների ենթակայության տակ, համապատասխան ֆինանսական միջոցների բացակայության պատճառով շարունակում են մնալ վատթար վիճակում: Ճանապարհների անմխիթար վիճակը, իսկ առանձին դեպքերում նաև որոշակի հատվածների իսպառ բացակայությունը մեծապես խոչընդոտում են, որպեսզի զբոսաշրջիկներն ազատ կապ հաստատեն մայրաքաղաք Երևանի և հանրապետության այլ, զբոսաշրջության առումով հետաքրքրություն ներկայացնող հեռավոր քաղաքների հետ:

ՀՀ զբոսաշրջության ոլորտի զարգացման ամենալուրջ արգելքներից մեկը համապատասխան որակավորումներ չունեցող աշխատուժի առկայությունն է, որակավորված մասնագետների պակասը:

Ոլորտի զարգացման հիմնական խոչընդոտներից են նաև մարքեթինգի և բրենդինգի ոչ արդյունավետ մակարդակը, օդային և վերգետնյա տրանսպորտի ենթակառուցվածքի թույլ զարգացվածությունը: Կան զբոսաշրջության զարգացմանը խոչընդոտող մի շարք այլ գործոններ, որոնցից կարող ենք առանձնացնել Հայաստանի զբոսաշրջային արդյունքի ցածր որակը, ոչ մրցունակ գները միջազգային զբոսաշրջային շուկայում, միջազգային հանրությանը Հայաստանի՝ որպես միջազգային շուկայում նոր ինտեգրված երկրի ոչ պատշաճ ձևով ներկայացումը, Հայաստանի՝ որպես զբոսաշրջության համար բարենպաստ, գրավիչ և ապահով երկրի նկարագրի բացակայությունը, քաղաքական և տնտեսական անկայունությունը և այլն:

Պետական և մասնավոր հատվածի համագործակցության արդյունքում կարող է մեծ դրական փոփոխություն գրանցվել այս ոլորտում: Անհրաժեշտ է իրականացնել բոլոր խոչընդոտների լուրջ հետազոտություն և քայլեր ձեռնարկել դրանց համալիր

լուծման համար, կատարել վերլուծություններ, հավաքագրել նոր վիճակագրական տվյալներ և պարբերաբար թարմացնել դրանք:

3.2. Զբոսաշրջության ոլորտի զարգացման համար առկա ռեսուրսներն ու կարգավորման բարելավման ուղիները ՀՀ-ում

Հայաստանն ունի հսկայական պատմամշակութային ժառանգություն, որը մեզ է հասել դարերի խորքից: Ավելի քան 4000 տարվա հարուստ պատմություն, յուրինակ մշակույթ՝ ճարտարապետություն, գրականություն, երգարվեստ, պարարվեստ, կիրառական արվեստներ, պատմության և մշակույթի կոթողներ: Ավելի քան 24000 հանրապետական, տեղական և համաշխարհային նշանակության պատմամշակութային հուշարձաններ, որոնք հայ ժողովրդի պատմության, նրա նյութական և հոգևոր մշակույթի բարձրարժեք, տիպական ու հազվագյուտ հուշարձաններ են և իրենց դարաշրջանների քաղաքակրթությունների կրողներն են (ուրարտական, հելլենական, քրիստոնեական, մուսուլմանական, խորհրդային և այլն), և այդ բազմազանությունը դրանց դարձնում է խիստ գրավիչ:

Հայաստանի ողջ տարածքում կա 230 բնական հուշարձան՝ Երևանում-2, Շիրակի մարզում-17, Լոռու մարզում-4, Տավուշի մարզում-17, Արագածոտնի մարզում-25, Կոտայքի մարզում-34, Գեղարքունիքի մարզում-12, Արմավրրի մարզում-3, Արարատի մարզում-11, Վայոց Ձորի մարզում-49, Սյունիքի մարզում-56[49]:

[49] www2.unwto.org/ru



ՀՀ ամբողջ տարածում մոտավորապես 230 բնական հուշարձան, որոնց գերակշիռ մասը առկա է Սյունիքի մարզում:

Առավել հայտնի և հաճախ այցելելի հուշարձանների մեծամասնությունը բավականին լավ պահպանված է կամ պատշաճ կերպով վերականգնված: Համաշխարհային մշակույթի գանձերի (UNESCO) ցուցակում են Հաղպատի վանքը X-XIIդդ, Սանահինի վանական համալիրը Xդ, Էջմիածնի Մայր Տաճարը IVդ, Սուրբ Հռիփսիմե եկեղեցին 618թ, Սուրբ Գայանե եկեղեցին 630, Զվարթնոցի տաճարը VIIդ, Գեղարդավանքը IV-XIIդդ, Ազատ գետի հովիտը: (Տես հավելված 8)

Կրոնը շատ կարևոր նշանակություն ունի հայ ժողովրդի ինքնորոշման համար: Հայաստանն առաջին քրիստոնյա երկիրն է աշխարհում և առաքելական եկեղեցու բնօրրանը: Հայաստանի եկեղեցիներն ու կրոնական բնույթի հուշարձանները բազմաթիվ են և կազմում են Հայաստանի պատմամշակութային հուշարձանների ավելի քան 15%-ը: Հայաստանի կրոնական մշակույթը բացառապես քրիստոնեական է: Հեթանոսական շրջանից պահպանվել է Գառնու տաճարը: Հայաստանում առկա են նաև մահմեդական կրոնին պատկանող 7 հուշարձաններ: Առավել հայտնի հուշարձանների մեծ մասը բավականին լավ է պահպանվել կամ վերանորոգվել:

Սակայն դրանց մի մասը չի գործում: Կրոնական հուշարձաններն ու այլ ռեսուրսներն անհրաժեշտ ենթակառուցվածքներով ու ներդրումներով ապահովելու պայմաններում դրանց արդյունավետ օգտագործման մակարդակը զգալի կբարձրանա, ինչը կնպաստի առավելագույն եկամուտների ներգրավմանը և դրանց պահպանությանն ուղղվող միջոցների ավելացմանը:

Հայաստանն աչքի է ընկնում իր ինքնատիպ և հրաշալի բնությամբ ու բնական հուշարձաններով: Լեռնային յուրօրինակ այս երկրում բնակլիմայական տարբեր գոտիները հերթագայում են միմյանց: Հայաստանում տարվա բոլոր չորս եղանակները շատ հստակ արտահայտված են: Ներկայումս Հայաստանում գործում են 3 պետական արգելոցներ (Խոսրովի, Շիկահողի, Էրեբունու), 25 պետական արգելավայրեր և 2 ազգային պարկ՝ Սևան և Դիլիջան: Հայաստանի տարածքում գոյություն ունի յոթ կլիմայական գոտի: Ողջ տարվա ընթացքում տարբեր ժամանակահատվածներում 353 թռչնի ցեղատեսակների, 550 տեսակի ողնաշարավոր կենդանիների, 53 տեսակի սողունների, 39 տեսակի ձկների, 8 տեսակի երկկենցաղների կարելի է հանդիպել Հայաստանում: Կենդանիներից շատերը, օրինակ Բեզոարյան այծերը բնորոշ են միայն Հայաստանին: Հայաստանին բնորոշ են նաև լանդշաֆտային և կենսաբանական բազմազանությունը, բնության կենդանի, անկենդան հուշարձանների հարստությունը, բնության տեսարժան վայրերը, ինչպես նաև անտառների կազդուրիչ ու բուժիչ բնակլիմայական պայմանները:

Ցավոք սրտի այժմ Հայաստանի բնությանը սպառնում են աղտոտումը և վնասումը: Այն կանխելու համար պետք է ապահովել բնության հատուկ պահպանվող տարածքներն ու այլ բնական ռեսուրսներն անհրաժեշտ ենթակառուցվածքներով: Սա շղթայական գործընթաց է. դա հնարավորություն կտա առավել արդյունավետ օգտագործել այդ ռեսուրսները, ինչն էլ կնպաստի առավելագույն եկամուտների ներգրավմանը և դրանց պահպանությանն ուղղվող միջոցների ավելացմանը: Բացի այդ բնության հուշարձանների շարունակական բացահայտման և գիտական հիմնավորվածությամբ ապահովման, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող նոր տարածքների ձևավորման դեպքում Հայաստանի զբոսաշրջային գրավչությունների ցանկը կարող է զգալիորեն ընդլայնվել՝ հնարավորություն ստեղծելով ձևավորել

առավել մրցունակ զբոսաշրջային արդյունք:

Հայաստանն ակնհայտորեն օժտված է որոշակի յուրահատուկ առողջարանային ռեսուրսներով, ինչպես օրինակ՝ տարատեսակ և կոմպակտ տեղակայված ռադոնային ջրաղբյուրները, որոնք ունեն բուժիչ հատկություններ, սակայն անհրաժեշտ է ռեսուրսների հետագա ուսումնասիրություն և դասակարգում: Հայաստանն առողջարանային զբոսաշրջության զգալի ներուժ ունի: Կան բազմաթիվ առողջարանային գոտիներ՝ Ջերմուկ, Արզնի, Հանքավան, Աղվերան, Արզական, Բջնի, Սոլակ, Ստեփանավան և այլն: Գոյություն ունեցող առողջարաններն ու հանգստյան տները բազմապիսի ծառայություններ առաջարկելու ներուժ ունեն: Հայաստանի առողջարանային ռեսուրսների բուժիչ հատկությունները բավականին բարձր են: Հանքային ջրերը կարելի է օգտագործել սիրտ-անոթային համակարգի, աղեստամոքսային տրակտի, լյարդի, լեղուղիների, կենտրոնական նյարդային համակարգի, հենաշարժողական ապարատի և այլնի բուժման համար: Սակայն դեռևս ոչ բոլոր առողջարաններն են գործում: Անհրաժեշտ ներդրումների և առողջարանային գոտիների վերականգնման դեպքում Հայաստանը կդառնա աշխարհի ամենահաճախելի առողջարանային զբոսաշրջավայրերից մեկը:

Հայաստանը, շնորհիվ իր բնական ու մարդկային ռեսուրսների, ինչպես նաև յուրահատուկ ավանդույթների, արկածային եզակի զբոսաշրջային արդյունք առաջարկելու զգալի ներուժ ունի: Հայաստանը կարող է առաջարկել արկածային զբոսաշրջության հնարավորություններ, ներառյալ արշավները, լեռնամագլցումը, ձիարշավները, լեռնարշավները, վինդսերֆինգը, երկրաբանական հետազոտությունները, սակայն շատ սահմանափակ են լաստավարելու, որսորդության և էքստրեմալ արկածների հնարավորությունները: Արկածային ռեսուրսները բավականին հեշտ է առևտրայնացնել: Հիմնական մարտահրավերը վերաբերում է ոլորտում ժամանակի ընթացքում հայկական բրենդի ձևավորմանը և միջազգային մրցակցության հաղթահարմանը:

Հայաստանը յուրօրինակ ձմեռային զբոսաշրջային արդյունք առաջարկելու զգալի ռեսուրսների է տիրապետում իր բնակլիմայական պայմաններով, ձմեռային զբոսաշրջության հարմար վայրերի առկայությամբ, ինչպիսիք են Ծաղկաձորը,

Ջերմուկը, Արագածը, Աղվերանը: Ներկայումս Հայաստանում գործում են երկու ձմեռային զբոսաշրջության կենտրոններ՝ Ծաղկաձորը և Ջերմուկը, որոնք կահավորված են միջազգային չափանիշներին համապատասխանող ճոպանուղիներով:

Արագած լեռը միջազգային չափանիշներին համապատասխանող ձմեռային զբոսաշրջային կենտրոն դարձնելու և ոլորտում հատկապես մարդկային ռեսուրսների զարգացմանն ուղղված ներդրումների պայմաններում Հայաստանը կարող է դառնալ համաշխարհային նշանակության այլընտրանքային ձմեռային զբոսաշրջավայր Ալպերի նկատմամբ: Ինչպես նաև Դիլիջանում, Սևանում և Հանքավանում կան բոլոր անհրաժեշտ նախադրյալները ձմեռային զբոսաշրջության զարգացման համար:

Բազմազան և յուրօրինակ է քաղաքային մշակույթը իր 2800 տարվա պատմություն ունեցող մայրաքաղաքով՝ հնի ու նորի համադրմամբ, յուրօրինակ մշակութային ժառանգությունը, ավանդույթները և ավանդական խոհանոցը: Այս ամենի կողքին առկա է նաև արդի մշակույթը, մշակութային կենտրոնները, հուշարձանները և այլն: Քաղաքային մշակույթը բազմազան է նաև երգարվեստով, պարարվեստով, կերպարվեստով, քանդակագործությամբ, ճարտարապետությամբ, գրականությամբ, արհեստագործությամբ: Հիմնական մարտահրավերը վերաբերում է քաղաքային հանգստի շուկայի մրցակցության հաղթահարմանը:

Քանի որ զբոսաշրջության պահանջարկը անմիջականորեն պայմանավորված է մարդկանց նախասիրություններով, հետաքրքրություններով և աշխարհայացքով, ապա այն ժամանակի ընթացքում կարող է փոփոխվել և զարգանալ տարբեր ուղղություններով: Ներկայումս աշխարհում նկատվում են զբոսաշրջային պահանջարկի զարգացման հետևյալ միտումները՝

- համաշխարհային զբոսաշրջային շուկայում այսօր պահանջվում է ծառայությունների բարձր մակարդակ և այնպիսի ուղղություններ, որոնք առաջարկում են ավելի շատ արկածային զբոսաշրջություն, քան պարզապես հանգիստ,
- աճող նախապատվություն անկախ, հատուկ հարմարեցված և փոքր խմբային զբոսաշրջային փաթեթներին՝ ի հակադրություն զանգվածային զբոսաշրջությանը,
- զբոսաշրջության ոլորտի տնտեսվարող սուբյեկտներ, որոնք ավելի շատ

ուշադրություն են դարձնում հաճախորդի բավարարվածությանը, անվտանգությանը և ծառայությունների որակին,

- կորպորատիվ զբոսաշրջության պահանջարկի աճ (համաժողովներ, կոնֆերանսներ, ցուցահանդեսներ),
- մշակութային ճանաչողական զբոսաշրջության աճ, մասնավորապես Եվրոպայում,
- տարեց բնակչություն և առողջապահական խնդիրներ, որոնք հանգեցնում են առողջարանային, առողջապահական, բուժական զբոսաշրջության զարգացմանը,
- երիտասարդները փնտրում են ավելի ակտիվ արձակուրդներ, մասնավորապես արկածային ճանապարհորդություններ,
- աճող մտահոգություն կլիմայական փոփոխությունների նկատմամբ, ինչպես նաև բնապահպանական և սոցիալական ազդեցությամբ զբոսաշրջային ծառայությունների թվի ավելացում,
- էկոտուրիզմի և բնության հետ կապված զբոսաշրջության պահանջարկի կտրուկ աճ,
- անցում զբոսաշրջության արտաքին կողմնորոշիչներից (դեմոգրաֆիա, կլիմա), դեպի ներքին կողմնորոշիչներ (ինքնազարգացման մեծ ձգտում, ստեղծագործական արտահայտություն): Զբոսաշրջիկները փորձում են ստանալ ավելի բովանդակալի տպավորություններ՝ ներգրավվելով կամավորական կամ այլ ստեղծագործական զբոսաշրջության մեջ :

Զբոսաշրջության զարգացման հեռանկարները ենթադրում են որոշակի միասնական ռազմավարության կիրառմամբ նպատակների կամ խնդիրների հստակեցում: Նպատակները պետք է համապատասխանեն SMART սկզբունքներին: Նպատակները պետք է լինեն որոշակի (Specific), չափելի (Measurable), հասանելի (Achievable), անհրաժեշտ (Relevant), ժամանակային առումով հասանելի (Timedbound):

Ըստ կանխատեսումների[50] մինչև 2030թ. զբոսաշրջության ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա կլինի հետևյալը՝

1) Զբոսաշրջության մասնաբաժինը հանրապետության համախառն ներքին արդյունքում կկազմի 12%,

[50] Հաշվարկի հիմքը Համաշխարհային ճանապարհորդության և զբոսաշրջության խորհրդի ցուցանիշներն են

2) Զբոսաշրջությունը կներկայացնի Հայաստանի արտահանման ծավալների 23.8%-ը,

4) Զբոսաշրջության արտաքին առևտրի հաշվեկշիռը կշարունակի պահպանվել դրական,

5) Կապիտալ ներդրումները զբոսաշրջության ոլորտում կկազմեն 535.3 մլն ԱՄՆ դոլար՝ կամ ընդհանուր ներդրումների 12.3%-ը,

6) Զբոսաշրջությունը կապահովի 22300 աշխատատեղ՝ կազմելով ընդհանուր զբաղվածության 2.0 %-ը,

7) Աշխատանքային պայմանների որակը կհամապատասխանի միջազգային չափանիշներին, կբարձրանա միջին աշխատավարձի չափը[51]:

Այսօր Հայաստան այցելողների 60% կազմում են սփյուռքահայերը, ովքեր սովորաբար Հայաստան են գալիս ավելի երկար ժամանակով (միջինը 25 օր) և հիմնականում ժամանում են ընկերներին ու հարազատներին տեսնելու նպատակով: Նրանց շրջանում մեծ է նաև պարբերաբար Հայաստան այցելողների թիվը:

Մինչև 2030թ. ափյուռքահայ զբոսաշրջիկների թիվը տարեցտարի կավելանա (հասնելով տարեկան 1.5 միլիոնի), թեև նրանց մասնաբաժինը զբոսաշրջիկների ընդհանուր թվում կնվազի մինչև 50%, ինչը տեղի կունենա ոչ սփյուռքահայ շուկաներում գովազդի ուժեղացման միջոցով ժամանցային նպատակներով Հայաստան այցելողների թվի մեծացման շնորհիվ: Սփյուռքահայ համայնքներում նպատակային գովազդի շնորհիվ առաջին անգամ Հայաստան այցելող սփյուռքահայերի մասնաբաժինը սփյուռքահայ զբոսաշրջիկների ընդհանուր թվում կավելանա, իսկ մինչև 2020թ. կկազմի 20%:

Զբոսաշրջության բնագավառում մարքեթինգային քաղաքականության իրականացման, գովազդատեղեկատվական ապահովման համակարգի շարունակական զարգացման և կատարելագործման գործընթացների շրջանակներում ծրագրվում է ապահովել Հայաստանի՝ որպես զբոսաշրջության համար գրավիչ և ապահով երկրի նկարագրի ամրապնդումը համաշխարհային զբոսաշրջային շուկայում, ինչն իր հերթին կնպաստի Հայաստան զբոսաշրջային այցելությունների կայուն աճի պահպանմանը:

---

[51] Զբոսաշրջության զարգացման հայեցակարգ,2008թ

Հայաստանի զբոսաշրջային արդյունքը համաշխարհային զբոսաշրջային շուկայում կներկայացվի միջազգային հեղինակավոր զբոսաշրջային ցուցահանդեսներին մասնակցության միջոցով:

Ցուցահանդեսներին ակտիվ մասնակցության արդյունքում Հայաստանի զբոսաշրջության բնագավառի մասնավոր հատվածի բազմաթիվ ներկայացուցիչներ հնարավորություն են ստանում գովազդելու Հայաստանի զբոսաշրջային գրավչությունները, ներկայացնելու իրենց զբոսաշրջային փաթեթները, ուղղակի շփումների միջոցով գործարար կապեր հաստատել օտարերկրյա գործընկերների հետ: Միջազգային ցուցահանդեսներին մասնակցությունն իր նպաստն է բերում Հայաստանի զբոսաշրջային արդյունքի մասին տեղեկատվության տարածմանը, համաշխարհային զբոսաշրջային արդյունաբերության ներկայացուցիչների հետ ավելի սերտ համագործակցությանը:

Ցուցահանդեսներին Հայաստանի մասնակցությունը կնպաստի այդ երկրներից կայուն զբոսաշրջային հոսքերի ապահովմանը:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ երկրի զբոսաշրջության կայուն աճն ու զարգացումն ապահովելու համար խիստ կարևորվում է ճանաչողական միջոցառումների կազմակերպումը, ինչից ելնելով նույնպես նախատեսվում է մասնագիտացված լրագրողների համար ճանաչողական այցերի կազմակերպում նպատակային շուկա համարվող երկրներից: Հայկական մշակույթին, սովորույթներին, պատմական ժառանգությանը և զբոսաշրջիկներին հետաքրքրող այլ հարցերին ծանոթանալով՝ օտարերկրյա լրագրողը հետագայում այդ ամենը ներկայացնում է իր երկրում հրատարակվող թերթերում և լուսաբանում ամսագրերում:

Տարբեր երկրների փորձն արդեն իսկ ապացուցել է, որ ամենամյա փառատոնները և տոնակատարությունները, որոնք ունեն ազգային, մշակութային բնույթ, գրավում են բազում զբոսաշրջիկների, նպաստում միջազգային շուկայում Հայաստանի ինտեգրմանը, ինչպես նաև Հայաստանում զբոսաշրջային սեզոնի երկարաձգմանը, համայնքներում զբոսաշրջության զարգացմանը:

2016 թ. կշարունակվի պետական աջակցությունը փառատոնների և տոնակատարությունների կազմակերպման գործընթացին՝ ուղղված երկրի մշակույթն

ու ավանդույթները ներկայացնելուն: Ուսումնասիրելով անցած երեք տարվա փորձը՝ կարելի է փաստել, որ նման միջոցառումների կազմակերպումը նպաստում է տարածքային զբոսաշրջության և ներքին զբոսաշրջության զարգացմանը, ինչպես նաև նոր զբոսաշրջային գրավչությունների բացահայտմանը, ձևավորմանը և պատմամշակութային հիմքի վրա զբոսաշրջության ձևերի զարգացմանը:

Միջազգային համագործակցության շրջանակներում իրականացվելիք միջոցառումները կուղղվեն զբոսաշրջության բնագավառում համագործակցության միջազգային համաձայնագրերի կատարմանը, ՄԱԿ ԶՀԿ-ի և այլ կազմակերպությունների հետ համագործակցությանը և դրանց շրջանակներում իրականացվող ծրագրերին մասնակցությանը, միջազգային համագործակցության շրջանակներում զբոսաշրջության բնագավառի պետական և մասնավոր հատվածների մասնագետների վերապատրաստմանը:

Ծրագրի արդյունավետ իրականացման նպատակով անհրաժեշտ է ապահովել շահագրգիռ կողմերի՝ պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավոր հատվածի, միջազգային կազմակերպությունների, բնակչության, ինչպես նաև զբոսաշրջիկների համագործակցությունն ուղղված՝

1) միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսներին Հայաստանի՝ առավել ներկայանալի մասնակցության ապահովմանը.

2) առավել որակյալ, թարմ ու բովանդակալի գովազդատեղեկատվական նյութերի, դրանցում ներառված տեղեկատվության հավաստիության, գովազդատեղեկատվական նյութերի տարածման աշխարհագրության ընդլայնման ապահովմանը.

3) օտարերկրյա լրագրողների, զբոսաշրջային օպերատորների և փորձագետների՝ Հայաստան ճանաչողական այցերի արդյունավետության բարձրացմանը՝ այցերի առավել գրավիչ ու բովանդակալից ծրագրեր մշակելու միջոցով.

4) նոր, մրցունակ զբոսաշրջային երթուղիների ձևավորմանը՝ այդ գործընթացում ապահովելով նաև տեղական բնակչության ակտիվ մասնակցությունը.

5) զբոսաշրջության բնագավառի պետական կառավարման, ծրագրերի մշակման ու իրականացման, դրանց մոնիթորինգի արդյունավետությունը և արդյունքների իրական գնահատումն ապահովելու նպատակով տվյալների բազայի ձևավորմանը.

6) բնակչության՝ զբոսաշրջության բնագավառի պետական կարգավորման գործընթացների վերաբերյալ իրազեկմանը, ինչպես նաև ծրագրերի իրականացման աշխատանքներում ներգրավմանը:

Ներկայումս Համաշխարհային բանկի աջակցության շնորհիվ ՀՀ-ում միջոցառումներ են իրականացվում ՄԱԿ ԶՀԿ կողմից մշակված և ավելի քան երեսուն երկրներում ներդրված <<Զբոսաշրջության սատելիտային հաշիվ>> համակարգի ներդրման ուղղությամբ: Ներդրումից հետո կարելի է խոսել ոչ միայն ժամանումների քանակի մասին, այլև այն մասին, թե որքան գումար են ստացել այդ ժամանումներից տնտեսության այլ ճյուղերը, օրինակ գյուղատնտեսությունը, արդյունաբերությունը, ծառայությունների ոլորտը և այլն:

Այս համակարգի ներդրումը թույլ կտա իրականացնել զբոսաշրջության ոլորտի ավելի խորը ուսումնասիրություն, գնահատել այլ ոլորտի կշիռը տնտեսության մեջ, ինչպես նաև առավել հստակ խոսել տնտեսության այլ ճյուղերի և ոլորտների վրա զբոսաշրջության տնտեսական ազդեցության մասին:

Այսպիսով ՀՀ-ում զբոսաշրջության զարգացման համար անհրաժեշտ են մեծ ներդրումներ: Զբոսաշրջությունը ՀՀ տնտեսության հեռանկարային զարգացման հիմնական ուղղություններից մեկն է, որը կարող է ոչ երկարատև ժամանակաշրջանում համարվել հանրապետության տնտեսության կարևորագույն ոլորտներից մեկը: Սա փաստում են տարբեր վիճակագրական տվյալները, որոնք ապագայի համար կանխատեսում են միայն դրական փոփոխություններ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կատարված հետազոտությունների և դիտարկումների արդյունքների ամփոփմամբ կարելի է հստակեցնել մի քանի եզրակացություններ, որոնք արտահայտում են ուսումնասիրության առանցքային դրույթներն ու հիմնական եզրակացությունները:

Զբոսաշրջությունը դինամիկ զարգացող և մեծ ներուժ պարունակող ոլորտ է, որը առավել կարևոր է զարգացող տնտեսությունների համար: Զբոսաշրջային ծառայությունների մատուցումը, ըստ էության, կարելի է դիտարկել որպես ծառայությունների արտահանում:

Դիտարկելով զբոսաշրջություն հասկացության տարատեսակ ձևակերպումները՝ կարող ենք եզրակացնել, որ այն ընդհանուր առմամբ բնութագրվում է որպես քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց ժամանակավոր՝ առավելագույնը տասներկու ամիս անընդմեջ ժամկետով, մեկնում իրենց մշտական բնակության վայրից մեկ այլ վայր գործնական, կրթական, կրոնական, առողջարանային, մասնագիտական, ճանաչողական, մարզական և այլ նպատակներով, առանց ժամանակավոր գտնվելու վայրում վարձատրվող գործունեության իրականացման:

Հիմք ընդունելով ճանապարհորդության շարժառիթային գործոնը կամ հիմնական նպատակը՝ զբոսաշրջությունն ըստ տեսակների կարելի է բաժանել յոթ խմբի՝ ռեկրեացիոն, կազդուրիչ կամ առողջարարական, գործնական, էթնիկ կամ այցելում ընկերներին և բարեկամներին, կրոնական, ուսումնական, շոփինգ զբոսաշրջություն:

Ուսումնասիրելով զբոսաշրջության զարգացման միջազգային փորձը՝ կարող ենք եզրակացնել, որ զբոսաշրջային այցելությունների թիվը, ինչպես նաև զբոսաշրջության նշանակությունն աշխարհում հետզհետե մեծանում է, և դա պայմանավորված է երկրների տնտեսությունների վրա ունեցած ազդեցությամբ: Այն բազմաթիվ պետությունների տնտեսությունների կարևոր բաղադրիչներից է, որն ապահովում է տեղի բնակչության զբաղվածություն, ենթակառուցվածքների զարգացում,

արտարժույթի ներհոսք: Բացի դրանից այն խթանում է երկրի միջազգային ճանաչմանը, դիվանագիտական հարաբերությունների ձևավորմանն ու ամրապնդմանը, մշակույթների և ավանդույթների փոխճանաչմանն ու ընկալմանը:

Զբոսաշրջության պետական կարգավորման ինստիտուտի արդյունավետ աշխատանքը պայմանավորված է ոլորտին առնչվող տարբեր կառույցների աշխատանքների համակարգմամբ և շահառուների հետ համագործակցությամբ: Այս հանգամանքը պայմանավորված է զբոսաշրջության ոլորտի միջդիսցիպլինար բնույթով: Այս համատեքստում պետք է ակտիվորեն խթանել զբոսաշրջության ոլորտի պետական մամինների աշխատանքը ոլորտին առնչվող այլ մարմինների հետ:

Միջազգային զբոսաշրջության պետական կարգավորման տարբեր գործառույթների արդյունավետությունը գնահատող ՀՏՖ զեկույցի ենթահամաթվերի և տվյալ ոլորտի մրցունակության միջև կա սերտ կապ, ինչն ապացույց է այն բանի, որ պետական մարմինների արդյունավետ գործունեությունն առավել քան կարևոր է զբոսաշրջության ոլորտի կայուն զարգացման համար:

Վերջին տարիների ընթացքում ՀՀ զբոսաշրջության ոլորտը զգալի աճ է ունեցել ներգնա զբոսաշրջային այցելությունների թվի և ստացված եկամուտների առումով: Թեև ՀՀ-ում զբոսաշրջության ոլորտի առանջընթացը վերջին տարիներին ակնհայտ է, սակայն հանրապետության ռեկրեացիոն ռեսուրսները միջազգային զբոսաշրջության զարգացման համար դեռևս անբավարար են օգտագործվում: Վիճակագրական տվյալների վերլուծությունից կարող ենք եզրակացնել, որ Հայաստանը զբոսաշրջիկների այցելությունների տեսանկյունից չափազանց կախված է հայկական սփյուռքից և ԱՊՀ երկրներից:

Հայաստանում տարեցտարի աճում է գործնական և մասնագիտական նպատակներով այցելությունների թիվը: Զբոսաշրջության այս տեսակը համարվում է աշխարհում ամենաթանկարժեքն ու եկամտաբերը, սակայն միաժամանակ պահանջում է ճանաչողական զբոսաշրջություններից տարբերվող որոշակի ենթակառուցվածք (խորհրդաժողովների սրահներ, տեխնիկական հագեցվածություն, առավել կոմպետենտ մասնագիտական կադրերի առկայություն և այլն): Վերջիններս պետք է ներառեն այնպիսի միջոցառումներ, ինչպիսիք են Հայաստանում բարձրակարգ

հյուրանոցային տնտեսության օբեկտների կառուցում, Հայաստանը որպես գործնական տուրիզմի համար բարենպաստ երկրի խթանում և այլն:

Թեև զբոսաշրջությունը Հայաստանում հռչակվել է գերակա ոլորտ, դրա կարգավորման պետական ինստիտուտը չունի այն ազդեցությունն ու դերակատարումը, որը հատկանշական է զարգացած զբոսաշրջությամբ երկրների նման գերատեսչություններին: Այս արդյունքներն արտացոլված են նաև Համաշխարհային տնտեսական ֆորումի զբոսաշրջության զեկույցում, որտեղ ոլորտի՝ ՀՀ պետական կարգավորման արդյունավետությունն ունի բավական ցածր գնահատական:

Զեկույցում Հայաստանի ցածր ցուցանիշի, որը արտահայտում է միջազգային զբոսաշրջության կարգավորման պետական համակարգի արդյունավետությունը, հիմնական պատճառներն են.

- Ոլորտի՝ պետական գերակայությունների ցանկում փոքր կշիռը, ինչն արտահայտվում է ներգնա զբոսաշրջության խթանման բյուջետային հատկացումների չնչին ծավալով,
- վիճակագրական տվյալների հրապարակման համապարփակության և հաճախականության հետ կապված խնդիրները,
- կառավարության և մասնավոր սեկտորի համագործակցության պակասը,
- հետազոտական կենտրոնների բացակայությունն ու կրթական ենթակառուցվածքի բարելավման անհրաժեշտությունը,
- շրջակա միջավայրի պահպանման և տվյալ բնագավառում զբոսաշրջության շահերի պաշտպանության խնդիրները:

Հայկական զբոսաշրջային արդյունքն ավելի ակտիվ պետք է գովազդել զբոսաշրջիկների առավել մեծ թիվ մատակարարող, ինչպես նաև արտագնա զբոսաշրջության վրա ամենաշատ գումար ծախսող երկրներում: Վերհանված երկրներից շատերում Հայաստանն ունի դիվանագիտական ներկայացուցիչներ և գործում են ուղիղ ավիաչվերթներ:

Քննարկված հարցերի համալիր լուծման արդյունքում զբոսաշրջության

բնագավառը, ոչ երկարատև ժամանակահատվածում, հանրապետության տնտեսական կյանքի կարևորագույն ոլորտների շարքում կզբաղեցնի իր ուրույն տեղը:

Այսպես, զբոսաշրջության բնագավառում պետական կարգավորման հիմնահարցերից են համաշխարհային շուկայում Հայաստանի՝ որպես զբոսաշրջային երկրի, մրցունակության ապահովում, Հայաստանում նոր, զբոսաշրջային գրավչությունների բացահայտում, մրցունակ և այլընտրանքնային զբոսաշրջային արդյունքների ձևավորում, Հայաստանի՝ որպես բարենպաստ և գրավիչ զբոսաշրջային կենտրոնի, նկարագրի և բրենդի ձևավորում, ենթակառուցվածքների, տրանսպորտային համակարգի և մուտքի ու ելքի ընթացակարգերի բարելավում, զբոսաշրջային ռեսուրսների ռացիոնալ օգտագործման ապահովում, աջակցություն զբոսաշրջության բնագավառում գործող, մասնավոր հատվածը ներկայացնող ոչ առևտրային կազմակերպությունների գործունեությանը, զբոսաշրջության բնագավառում մարդկային ռեսուրսների շարունակական զարգացում, զբոսաշրջության զարգացման այնպիսի համակարգի ստեղծում, որը կնպաստի Հայաստանի քաղաքացիների զբաղվածության ավելացմանը, պետության և նրա քաղաքացիների եկամտի աճին, միջազգային կապերի զարգացմանը և այլն: Հաշվի առնելով արդի համաշխարհային զարգացումները՝ պետական քաղաքականության առաջիկա ուղղությունները մշակելիս անհրաժեշտ է հիմնական շեշտադրումներն ուղղել հանրապետությունում բարձր արդյունավետությամբ և մրցունակությամբ օժտված ժամանակակից զբոսաշրջային ինդուստրիա ստեղծելուն:

Ամփոփելով կարող ենք ասել, որ Հայաստանը՝ որպես զբոսաշրջության համար գրավիչ, պատմամշակութային և բնական ռեսուրսներով հարուստ երկիր, մեծ ներուժ ունի միջազգային զբոսաշրջային շուկային առաջարկելու բազմաբնույթ, մրցունակ զբոսաշրջային արդյունք և բարձրակարգ ծառայություններ: Դրա համար, սակայն, անհրաժեշտ են պետական և մասնավոր հատվածի համագործակցություն, որակյալ կադրեր, միջազգային ստանդարտներին համապատասխանող զբոսաշրջային ծառայություններ, մեծ ներդրումներ, հետազոտություններ և վիճակագրական տվյալների հաճախակի հրապարակումներ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Օրենքներ և այլ իրավական ակտեր

1. ՀՀ Սահմանադրություն, փոփոխություններով, Երևան 2015:
2. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, 1948թ
3. Զբոսաշրջության խարտիա, 1985թ
4. Հաագայի հռչակագիր, 1989թ
5. Մանիլյան հռչակագիր, 1989թ
6. Զբոսաշրջության զարգացման հայեցակարգ, 2000թ.
7. «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենք, 2003
8. Հայաստանի Հանրապետության տարածքում կուրորտային առողջարանների և հանգստյան տների զարգացման պետական ծրագիր, ՀՀ Կառավարության հ. 39 որոշում, 2003թ.
9. «Ծաղկաձորը միջազգային չափանիշներին համապատասխանող զբոսաշրջային կենտրոն» Նպատակային խնդիրների լուծման ծրագիր, ՀՀ կառավարության հ. 948-Ն որոշում, 2005թ.
10. «Հայաստան միջազգային այցելությունների հետազոտություն սեպտեմբեր 2006թ.-օգոստոս 2007թ. արդյունքների հաշվետվություն», Երևան 2007
11. Հայաստանն ըստ 2011թ. «Զբոսաշրջության մրցունակության զեկույց», «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն, Երևան, 2011թ.

Գրականություն

12. Սելվինազյան Բ. Ս., Հաջոյան Ռ. Մ., «Զբոսաշրջության մարքեթինգ», Ուսումնական ձեռնարկ, «Տնտեսագետ», Երևան 2003, 123 էջ
13. Հարությունյան Շ.Լ., Զբոսաշրջության ինդուստրիա և աշխարհագրություն, Երևան, Զանգակ 97, 2004, 160 էջ
14. Զորին Ի. Վ., Կվարտալնով Վ. Ա., Տուրիստիկա, Երևան 2006, 344 էջ
15. Александрова А.Ю., Международный туризм: учебное пособие для вузов. М.2001, 164 с.

16. Барчукова Н.С., Международное сотрудничество государств в области туризма. М.: Международные отношения, 1986, 176 с.
17. Биржаков М.Б., Введение в туризм. СПб.: Издательский торговый дом «Герда», 2000, 448 с.
18. Боголюбов В.С., Орловская В. П., Экономика туризма, Москва 2005, 192 с.
19. Кабушкин Н.И., Менеджмент туризма, Минск 2001, 416 с.
20. Квартальнов В. А., Туризм: Учебник, Москва 2000, 320 с.
21. Морозов М.А., Коль О.Д., Дестинация — важнейший элемент туриз-ма // Туризм: практика, проблемы, перспективы. 1998. № 1
22. Сенин В.С., Организация международного туризма. Москва 2003, 400 с.
23. Скамницкогий А.А.,Организация международного туризма: учеб. Пособие для студ./под. – М.: Гардарики, 2008, 250 с.
24. Чудновский А.Д., Жукова МА., Управление индустрией туризма России в совремвнных условнях: учебное пособие. М.: КНОРУС, 2007, 448 с.
25. Шарафутдинов В.Н., О смысловой нагрузке понятия «туризм» // Туризм: право и экономика. 2005. № 2, с. 18-23
26. Foreign Tour Operators' Survey Reporting Tables, USAID, CAPS, March 2010
27. International Recommendation for Turism Statistics, Madrid and New York, 2008, 141 p.
28. Mc. Intosh. R.W., Tourism principles, practices, philosophies. Columbus (Ohio), 1977, 223 p.
29. The Travel and Tourism Competitivness Report 2011, World Economic Forum, Geneva 2011, 531 p.
30. Tourism Highlights, Madrid, 2006
31. Tourism: 2020 Vision. - Madrid: WTO, 1998
32. Trade in Tourism Service / GATT Secretariat NTN. GNS/W/61, 1989

Համացանցային կայքեր

33. (www.unwto.org)

34. http://www.czechtourism.com/rus/ru/docs/practical-info/czech-tourism/index.html
35. www.caps.am
36. http://armstat.am
37. www.armeniainfo.am
38. www.mineconomy.am
39. http://www.tourvest.ru/articles/article0009
40. http://www.mth.gov.hu/main.php?folderID=900
41. http:// www.marriottarmenia.am
42. http://www.anihotel.com
43. http://www.metropol.am
44. http://www.europehotel.am
45. http://www.goldenpalacehotel.am
46. http://www goldentulip com
47. http://www.congresshotelyerevan.com